


ՆԻԿՈԼԱՅ ՆՈՎԱՆՆԻՍՅԱՆ
ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»

ՀԱՄԱԱՐԱՔԱԿԱՆ ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՈՒՆ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

(ԹՈՒՆԻՍ, ԵԳԻՊՏՈՍ, ԵՄԵՆ, ԼԻԲԻԱ)



Տպագրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի
(ծածկագիր՝ 15T-6A403) գիտական ծրագրի
շրջանակներում տրամադրված ֆինանսավորմամբ



**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

**NIKOLAY HOVHANNISYAN
GOR GEVORGYAN**

“THE ARAB SPRING”

**THE ARAB UPRISING AIMED AT THE
MODERNIZATION OF ARAB SOCIETY**

(TUNISIA, EGYPT, YEMEN, LIBYA)

**YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF NAS RA
2018**

255 892K
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»

ՀԱՄԱԱՐԱՐԱԿԱՆ ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ
ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

(ԹՈՒՆԻՍ, ԵԳԻՊՏՈՍ, ԵՄԵՆ, ԼԻԲԻԱ)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՄ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2018



**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

**NIKOLAY HOVHANNISYAN
GOR GEVORGYAN**

“THE ARAB SPRING”

**THE ARAB UPRISING AIMED AT THE
MODERNIZATION OF ARAB SOCIETY**

(TUNISIA, EGYPT, YEMEN, LIBYA)

**YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF NAS RA
2018**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»


ՀԱՄԱԱՐԱԲԱԿԱՆ ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

(ԹՈՒՆԻՍ, ԵԳԻՊՏՈՍ, ԵՄԵՆ, ԼԻԲԻԱ)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱՄ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2018



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ. դոկտոր,
պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

Հովհաննիսյան Ն., Գ. Գևորգյան

Հ 854 «Արաբական գարունը». համաարաբական ըմբոստությունը հանուն
արաբական հասարակության արդիականացման (Թունիս, Եգիպտոս,
Եմեն, Լիբիա)/ Ն. Հովհաննիսյան, Գ. Գևորգյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գի-
տություն» հրատարակչություն, 2018.- 153 էջ:

Հետազոտությունը նվիրված է արաբական մի շարք երկրներում 2011թ.
սկիզբ առած և մինչ օրս շարունակվող համաարաբական ըմբոստության
ուսումնասիրությանը, որը ստացել է նաև «արաբական գարուն» անվանումը:
Արաբական մի շարք երկրներում ծագած համաժողովրդական շարժումները
նպատակ ունեին վերափոխելու դեռևս միջնադարից ժառանգած ու իրենց
սպառած զանազան ցեղային, հասարակական, քաղաքական ինստիտուտներ,
ինչպես նաև փորձելու հաստատել արդիական քաղաքական համակարգեր,
կերպավորելու պետական կառույցները և ձևավորելու ժամանակակից առա-
ջադեմ աշխարհին բնորոշ արժեհամակարգ: Համաարաբական ըմբոստության
գործընթացն ուսումնասիրվել է Թունիսի, Եգիպտոսի, Եմենի և Լիբիայի օրի-
նակով: Նախապատվությունը տրվել է այն երկրներին, որոնցում «արաբական
գարուն» արդյունքում տեղի ունեցան իշխանափոխություններ:

Գիրքը նախատեսված է արևելագետների, քաղաքագետների, փորձա-
գետների, մերձավորարևելյան տարածաշրջանով զբաղվող մասնագետների
համար:

Published by the decision of Scientific Council of the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia

CHIEF EDITOR

**Professor Nikolay Hovhannisyan, Doctor of Historical Sciences,
Corresponding Member of NAS RA**

TECHNICAL EDITOR

Anush Tamrazyan

The research is devoted to the study of Arab uprisings, also known as the Arab Spring that began in 2011. The emerged nationwide movements were targeted at transforming the various exhausted tribal, social and political institutions that were inherited from the Medieval period and establishing modernized political systems for transforming state institutions and forming modernized system of values. The research on Arab revolutions was made using the examples of Tunisia, Egypt, Yemen, and Libya. The preference is given to countries where the Arab Spring brought to the change of powers.

The book may be of interest for political analysts, experts, students, specialists of Middle Eastern studies, and a wide range of readers.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	9
----------------	---

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՑԻՆ ՀԻՄՆԱ- ԴՐՈՒՑԹՆԵՐ	19
1.1 Արաբական երկրների նորագույն շրջանի զարգացման երեք փու- լերը	20
1.2 Արաբական երկրների զարգացման ուղիների ընտրության հարցը .	24
1.3 Արաբական երկրներում պետական կառավարման աննախադեպ մոդելի հաստատումը	26
1.4 Մերևոյափոխությունը՝ որպես արաբական արդիականացման առանցքային նախապայման	29
1.5 Գաղթականների ալիքը Աֆրիկայից և Ասիայից Եվրոպա. Մուամ- մար Կադաֆիի անեծքը	37
1.6 Մերձավորարևելյան քառսային իրադրությունը. հայությունն ու Հա- յաստանը	43

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐ

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐԱՆ» ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԼԻԲԻԱՑՈՒՄ, ԹՈՒՆԻՍՈՒՄ ԵՎ ԵՄԵՆՈՒՄ

2.1 «Արաբական գարունը» Թունիսում. «Հասմիկների հեղափոխու- թյունը» (նախադրյալները, ընթացքն ու հետևանքները)	46
2.2 «Արաբական գարունը» Լիբիայում. արտաքին և ներքին գործոննե- րի ազդեցությունը Մուամմար Կադաֆիի իշխանափոխության հար- ցում	60
2.3 «Արաբական գարունը» Եմենում. ներքաղաքական վայրիվերում- ներից մինչև միջնորդավորված պատերազմ	72

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐ

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ» ԵԳԻՊՏՈՍՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՐԱՍՓՈՒՈՒՄՆԵՐԸ

3.1 Ներքաղաքական իրադրությունը Եգիպտոսում «արաբական գար- նան» նախօրեին. հասարակական ընդվզման նախադրյալները	89
3.2 Եգիպտոսի 2011-2012 թթ. խորհրդարանական ընտրությունները. «մեկ մարդ, մեկ ձայն, մեկ անգամ» համակարգի կիրարկման փորձը	95
3.3 2012 թ. այլընտրանքային նախագահական ընտրությունները Եգիպ- տոսում. իսլամիստների հաղթարշավը և «մեկանգամյա ժողովրդա- վարության» ներդրման փորձը	107
ԿԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒԱՐԵՆ	130
ԱՍՓՈՓՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ	134
ԱՐՖՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	140
Հեղինակների մասին	153

CONTENTS

PREAMBLE	9
----------------	---

CHAPTER ONE

THE REASONS AND CONSEQUENCES OF THE MODERNIZATION OF ARAB WORLD: MAIN CONCEPTUAL THESES

1.1 The three stages of the development of Arab countries in Modern Period.	20
1.2 The issue of selection of development path for Arab countries.	24
1.3 The establishment of unprecedented public governance model in Arab countries.	26
1.4 The change of generation as a key prerequisite for the Arab	

Modernization.	29
1.5 The flow of migrants from Africa and Asia to Europe: the curse of Muammar Gaddafi	37
1.6 The chaos in the Middle East: the Armenia and Armenians...	43

CHAPTER TWO

THE ARAB SPRING IN LIBYA, TUNISIA AND YEMEN

2.1 The Arab Spring in Tunisia: the Jasmine Revolution (premises, process and consequences).	46
2.2 The Arab Spring in Libya: the impact of external and internal factors on overthrow of Muammar Gaddafi's power.	60
2.3 The Arab Spring in Yemen: from internal political upheavals to proxy war.	72

CHAPTER THREE

THE ARAB SPRING IN EGYPT: THE TRANSFORMATION OF POLITICAL SYSTEM

3.1 The internal political situation in Egypt on the eve of the Arab Spring: the public upheaval premises.	89
3.2 2011-2012 parliamentary elections in Egypt: the application of "One Person, One Vote, Once" principle.	95
3.3 The 2012 alternative presidential elections in Egypt: the triumph of Islamists and the attempt to implement the "One-time Democracy"	107

AS A CONCLUSION	130
SUMMARY IN ENGLISH	134
LIST OF SOURCES AND LITERATURE USED	140

ԱՌԱՋԱԲԱՆ

2011 թ. -ից ի վեր արաբական երկրները հայտնվեցին ներքաղաքական բարդ իրավիճակում: Համաարաբական ըմբոստությունների ալիքը, որը ստացավ «արաբական գարուն» անվանումը, Թունիսից՝ շրջայական ձևով տարածվեց արաբական այլ երկրներ (Եգիպտոս, Լիբիա, Ալժիր, Մարոկկո, Եմեն, Սիրիա, Բահրեյն, Զուվեյթ, Մաուրիտանիա, Հորդանան, Լիբանան, Իրաք և այլն): Նշենք, որ «գարունը» քաղաքացիական խռովությամբ հանդիպող եզրույթ է: Օրինակ, Եվրոպայում 1848 թ. տեղի ունեցած հեղափոխությունները բնորոշվել են որպես «ժողովուրդների գարուն» (spring of nations):

Արաբական երկրներում 2010-2011 թթ. -ից ծավալված հակակառավարական գործընթացները բնութագրվեցին նաև «արաբական ապստամբություն» (the Arab uprising), «արաբական զարթոնք» (the Arab awakening), «արաբական հեղափոխություն» (the Arab revolution), «արաբական ըմբոստություն» (the Arab revolt), «արաբական խռովություն» (the Arab unrest) և այլն: Նորից շրջանառվեց «հացի խռովություն» արտահայտությունը: Օրինակ, Եգիպտոսում ցուցարարները վանկարկում էին՝ «հաց, ազատություն, արդարություն»: «Արաբական գարնան» կոդքին մենք նպատակահարմար գտանք օգտագործել նաև «համաարաբական ըմբոստություն» արտահայտությունը:

«Արաբական գարունն» իր մեջ մարմնավորում է քաղաքական և հասարակական վերածննդի, առհասարակ՝ առաջընթացի, նոր փուլի և զարթոնքի խորհրդանիշեր: Ի սկզբանե շրջանառության մեջ դրվելով ամերիկյան գիտական շրջանակների կողմից՝ այն ընդունվեց նաև արաբական հասարակությունների կողմից, որոնք փոփոխությունների հետ կապված մեծ հույսեր էին կապում:

Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ «արաբական գարնան» շարժումները չունեին քաղաքական առաջնորդներ կամ ղեկավարող քաղաքական կուսակցություններ, ինչպես նաև մշակված ծրագրային հայեցակարգեր: Հակակառավարական շարժումներն ավելի շատ ծավալվեցին քաղաքացիական ակտիվիստների առաջնորդությամբ և տեղեկատվական ռեսուրսների՝ առաջին հերթին կատարական «ալ-Ջազիրայի» աջակցությամբ՝ աչքի ընկնելով յուրահատուկ քաղաքական տեխնոլոգիաների կիրառմամբ: Մոտիվացվելով իշխանափոխության հարցի շուրջ՝ որպես բարեփոխումների ու հնարավոր արմա-

տական փոփոխությունների կարևոր ու անքակտելի նախապայման՝ ցուցարարները վանկարկում էին հեռացի՛ր (արաբերեն՝ *իրհալ*), ինչպես նաև «ժողովուրդը ցանկանում է տապալել վարչակարգը» (արաբերեն՝ *աշ-շաար յուրիդ իսկատ ան-նիզամ*) այլևս հայտնի արտահայտությունները: Ցույցերի և հանրահավաքների մասին տեղեկատվությունը տարածվում էր հիմնականում սոցիալական ցանցերի միջոցով: Հակակառավարական ընդվզումների հիմնական սոցիալական հենարանը երիտասարդներն էին: Ուրբաթ օրերին կեսօրի աղոթքից հետո մեկնարկում էին «ցասման օրերը», «միլիոնների երթերը» և այլն, որոնք շատ դեպքերում ուղեկցվում էին ոստիկանության և անվտանգության ուժերի հետ բախումներով, զոհերով ու վիրավորներով:

«Արաբական գարնան» շարժման արդյունքում արաբական մի քանի երկրներում՝ Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում և Եմենում տեղի ունեցան իշխանափոխություններ: Նշված երկրներում ձևավորվեցին անցումային կառավարություններ, նշանակվեցին և անցկացվեցին նախագահական ու խորհրդարանական ընտրություններ, սկսվեց նոր սահմանադրությունների մշակման գործընթացը: Շիայական բնակչությամբ երկրներում «արաբական գարնան» գործընթացները նշանավորվեցին շիայական գործոնի ակտիվացմամբ: Արաբական առանձին երկրներում իշխանություններին հաջողվեց բարեփոխումների միջոցով հանդարտացնել իրավիճակը: Հակակառավարական շարժումներին զուգահեռ մեծացավ օտար գործոնի՝ թե՛ արտատարածաշրջանային (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն) և թե՛ տարածաշրջանային ուժերի (Կատար, Թուրքիա, Մաուրյան Արաբիա, Իրան) դերակատարությունն արաբական երկրների ներքաղաքական գործընթացների վրա: Արտաքին միջամտությունների միջոցով առանձին պետություններ նպատակ ունեին ամրապնդել իրենց դերն ու ազդեցությունը տարածաշրջանում՝ մրցակցելով առաջնահերթությունների համար: Մասնավորապես Լիբիայում, Սիրիայում, Եմենում և Իրաքում արտաքին գործոնի ազդեցությամբ սկիզբ առան միջնորդավորված պատերազմներ, որոնք ծանրագույն հետևանքներ ունեցան այդ պետությունների և հասարակությունների համար:

Տարածաշրջանի երկրները «արաբական գարնան» արդյունքում հայտնվեցին հերթական ճգնաժամի ու ստագնացիայի մեջ: Հանուն ժողովրդավարության սկսված շարժումները որոշակի շրջափուլից հետո ձևափոխվեցին միանգամայն այլ որակի գործընթացների: Ժողովրդավարության ընթացքը խափանվեց: Առանձին դեպքերում (Եգիպտոս,

Լիբիա, Եմեն և այլն) քաղաքական գործընթացներին անմիջականորեն միջամտեցին զինվորականներ ու ամենատարբեր ռազմական խմբավորումների առաջնորդներ, որոնք հավակնում էին իշխանության: Բռնությունները, իշխանության ու քաղաքացիական ակտիվիստների միջև բախումները, զինված ընդհարումները սոցիալական տարբեր հանրությունների ու կլանների միջև, անջատողականության դրսևորումները, կրոնական և այլ գործոններով պայմանավորված մոլեռանդությունն ու ջիհադական շարժումները դարձան անհաղթահարելի: «Արաբական գարունը» շատ դեպքերում փոխարինվեց «արաբական ձմեռ» (the Arab winter) արտահայտությամբ:

«Արաբական գարնան» գործընթացները միանգամայն փոխեցին Մերձավոր Արևելքի ընդհանուր պատկերը: Մասնավորապես «Իսլամական պետություն» Դաիշի և ջիհադական այլևայլ խմբավորումների գործունեությունը Սիրիայում, Իրաքում, Լիբիայում, Եմենում, Եգիպտոսում և այլ երկրներում մեծ սպառնալիք ստեղծեց տարածաշրջանային և միջազգային անվտանգությանն ու կայունությանը: «Արաբական գարնան» գործընթացները նպաստեցին սեփական երկրներում անկայունության, քառսի, քաղաքական և տնտեսական անորոշության ձևավորմանը, որի հետևանքով մեծացավ արաբ փախստականների ալիքը դեպի Արևմուտք:

Աշխատության մեջ համաարաբական ըմբոստության գործընթացն ուսումնասիրվել է պատմական որոշակիորեն լայն ժամանակահատվածի համատեքստում՝ դիտարկվելով որպես հերթական ցնցում, որն ապրեց արաբական աշխարհը 21-րդ դարում: Ուսումնասիրության առանցքը կազմում են հիմնականում Թունիսը, Եգիպտոսը, Եմենը և Լիբիան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «արաբական գարնան» արդյունքում նշված երկրներում, ի տարբերություն մնացածների, տեղի ունեցան իշխանափոխություններ: Թունիսի, Եգիպտոսի, Լիբիայի և Եմենի երկարամյա առաջնորդները հեռացվեցին իշխանությունից, ձևավորվեցին նոր կառավարություններ, մշակվեցին նոր սահմանադրություններ: Անցումային շրջանին բնորոշ դարձավ անկայունությունն ու լարվածությունը իշխանության և հասարակության տարբեր թևերում:

«Արաբական գարնան» թեմայի ուսումնասիրությունն ունի թե՛ գիտական և թե՛ քաղաքական կարևորություն և արդիականություն: Համաարաբական ըմբոստությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի համակողմանի կերպով հասկանալ տեղի

ունեցած բարդ ու խրթին իրադարձությունների պատմական, քաղաքական ու սոցիալական պատճառները, ինչպես նաև արտաքին միջամտությունների շարժառիթներն ու նպատակները: Կարծում ենք, որ առանց պատմական հենքի ուսումնասիրության՝ հնարավոր չէ հասկանալ 21-րդ դարում ձևավորված և դեռևս չհանգուցալուծված գործընթացների տրամաբանությունը: Արաբները, որոնք 16-րդ դարում հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում, ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին կեսը ստիպված էին հակազդել եվրոպական գաղութատիրությանը, որին հաջողվեց վերաձևել ու մասնատել արաբական աշխարհի քարտեզը, պառակտվածություն առաջ բերել տարածաշրջանում՝ վերահսկողություն սահմանելով տարածաշրջանի ռեսուրսների նկատմամբ:

Աշխատության ժամանակագրությունը սկսվում է 20-րդ դարի սկզբից, որը համապատասխանում է Օսմանյան կայսրության պատմության վերջին փուլին և շարունակվում մինչև «արաբական գարնան» գործընթացների սկզբնավորման ու հետհեղափոխական փուլի զարգացումների ուսումնասիրությամբ՝ ընդհուպ մինչև 2015 թ.:

Հարկ է նշել, որ թեման կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության տեսանկյունից, քանի որ արաբական աշխարհում գոյություն ունեցող հայկական համայնքները, մասնավորապես Սիրիայում և Իրաքում, մեծապես տուժեցին, կրեցին նյութական ու մարդկային մեծ կորուստներ: Համայնքների շրջանում մեծացան արտագաղթի չափերը, ավելի խորացավ անհանգստությունն արաբական աշխարհում հայապահպանության հեռանկարի նկատմամբ:

Սույն աշխատության խնդրո առարկա արաբական մի քանի երկրների ուսումնասիրության ընտրությունը պայմանավորված է «արաբական գարնան» արդյունքում այդ երկրներում տեղի ունեցած իշխանափոխություններով: Այդ համատեքստում Թունիսը, Լիբիան և Եմենը դիտարկվել են մեկ ամբողջական բաժնում, հաշվի առնելով, որ Թունիսը համարվում է «արաբական գարնան» մեկնակետ, իսկ Լիբիան և Եմենը արաբական այն բացառիկ երկրներից են, որտեղ առկա ցեղային-կլանային հարաբերությունները պայմանավորեցին ներքաղաքական զարգացումների յուրօրինակությունը:

Աշխատության երրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է Եգիպտոսին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եգիպտական հասարակությունը դասական քաղաքագիտության տեսանկյունից, ի տարբերություն արաբական մի շարք այլ երկրների հասարակությունների, որոնցից շատերին բնորոշ է ցեղային կառուցվածքը (տվյալ դեպքում Լի-

բիան և Եմենը), ավելի կազմակերպված էր, քաղաքական առումով ավելի հասուն և ուներ իշխանությունների դեմ պայքարի ինստիտուցիոնալ հարուստ փորձ: Տվյալ բաժինը ներառում է նաև համապատասխան ենթաբաժիններ, որոնք ավելի ընկալելի են դարձնում Եգիպտոսում ընթացող ներքաղաքական զարգացումները:

Աշխատության «Արաբական աշխարհի արդիականացման պատճառներն ու հետևանքները. ընդհանուր հայեցակարգային հիմնադրույթներ» բաժնում գիտական քննարկման է դրված արաբական աշխարհի փուլային զարգացման պատմամշակութային և քաղաքակրթական բաղադրիչը: Մեծ տեղ է հատկացված հետզադուրային շրջանում արաբական երկրների զարգացման ուղու ընտրության հարցին: Պատմահամեմատական մեթոդի միջոցով փորձ է արվել ընդհանրություններ գտնել արաբական աշխարհի ներկա զարգացումների պատճառների և օսմանյան տիրապետության շրջանում ամկա սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների միջև: Առանձնահատուկ տեղ է հատկացվել արաբական երկրներում սերնդափոխության խնդրի ուսումնասիրմանը՝ որպես արդիականացման կարևորագույն նախապայման: Քննարկվել է նաև ըմբոստությունների արդյունքում ստեղծված քառասային իրավիճակը և արաբական երկրներից դեպի Եվրոպա զանգվածային արտագաղթի խնդիրը՝ որպես տարածաշրջանի ժողովրդագրական անվտանգության համակարգի փլուզման նախադրյալ:

«Արաբական գարունը Թունիսում, Լիբիայում և Եմենում» բաժինը նվիրված է տվյալ երկրներում ներքաղաքական զարգացումների առանձնահատկությունների, պետական ինստիտուտների կողքին հասարակության ցեղային կառուցվածքի և տեղական ցեղայնության ավանդույթների ուսումնասիրությանը: Հատուկ տեղ է հատկացված հակակառավարական ընդվզումների բովանդակային խնդիրների քննարկմանը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառների վերհանմանը: Այդ իմաստով, Թունիսը, որպես «արաբական գարնան» մեկնակետ, խթանեց նաև արաբական մյուս երկրներում տարիներ շարունակ կուտակված խնդիրների դեմ արաբական հասարակությունների ընդվզումը: Սույն բաժնում ուսումնասիրվել են նաև «արաբական փողոցի» գործելաճի ընդհանրություններն ու տարբերությունները, երեք երկրների օրինակով քննարկվել է իշխանափոխության բանաձևը և անցումային իշխանությունների քաղաքական ուղեգիծը:

«Արաբական գարունը Եգիպտոսում» բաժինն ամբողջությամբ նվիրված է այդ երկրում քաղաքական համակարգի կերպափոխման

խնդրի ուսումնասիրությանը: Գիտական քննարկման է ենթարկվել Եգիպտոսում գործող ընդդիմության քաղաքական ներուժը և վերջինիս իշխանության գալու նախապայմանները, խորհրդարանական և այլ-ընտրանքային նախագահական ընտրությունները, իսլամիստների հաղթանակը, «մեկանգամյա ժողովրդավարություն» ներդնելու իսլամիստների փորձը և հակաիսլամիստական պետական հեղաշրջումը: Ուսումնասիրվել է նաև Եգիպտոսում ազատական-ժողովրդավարական մոդելների ներդրման ձախողման պատճառները և հետևանքները:

Սույն աշխատությունը գրվել է հայերեն, անգլերեն և ռուսերեն տարբեր աղբյուրների և գրականության հիման վրա: Լայնորեն օգտագործվել են միջազգային փաստաթղթեր, թեմայի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ, հոդվածներ, մամուլի հրապարակումներ, պաշտոնական հայտարարություններ, պարբերականներ:

Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են ծառայել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը¹, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումները², ՄԱԿ-ի Փախստականների գրասենյակի հաշվետվությունները³, Հյուսիսատլանտյան դաշինքի⁴, Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցները⁵, ոչ կառավարական կազմակերպության «Ֆրիդոմ Հաուս»-ի հաշվետվությունները⁶, «Ընտրական համակարգերի

¹United Nations Security Council, Resolution 1973 (2011),

https://www.nato.int/nato_static/assets/pdf/pdf_2011_03/20110927_110311-UNSCR-1973.pdf.

²Declaration on the granting of Independence to Colonial Countries and Peoples. Adopted by General Assembly Resolution 1514 (XV) of 14 December 1960, www.un.org/decolonization/declaration.

³The UN Refugee Agency, Libya, <http://www.unhcr.org/libya.html>.

⁴London Conference on Libya, 29 March, 2011, Chairs statement, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/pdf_2011_03/20110927_110329_London-Conference-Libya.pdf.

⁵The Libyan Political Agreement: Time for a Reset, International Crisis Group, Report N 170/Middle east and North Africa, 11. 04. 2016, <https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/north-africa/libya/libyan-political-agreement-time-reset>.

Yemen's Al Qaeda: Expanding the Base, Crisis Group, Report No 174, Middle East North Africa, 02.02.2017, <https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/yemen/174-yemen-s-al-qaeda-expanding-base>.

⁶Democracy Index 2010,

https://graphics.eiu.com/PDF/Democracy_Index_2010_web.pdf.

միջազգային հիմնադրամի»⁷, «Քարթերի կենտրոնի» զեկույցները⁸, Մեր-ձավոր Արևելքի ժողովրդավարցման ծրագրի հաշվետվությունները և զեկույցները⁹:

Հարկ ենք համարում նշել, որ աշխատության ստեղծման գործում չափազանց մեծ նշանակություն են ունեցել հայ արաբագետների, մասնավորապես Ն. Հովհաննիսյանի¹⁰, սույն աշխատության համահեղինակ Գ. Գևորգյանի¹¹, ինչպես նաև Ա. Փաշայանի ուսումնասիրությունները¹²: Աշխատության թեմայի ուսումնասիրության համար կա-

Egypt 2010, Freedom in the World, <https://freedomhouse.org/report/freedom-world/2010/egypt>

⁷Elections in Egypt: Implications of Recent Court Decisions on the Electoral Framework, Middle East and North Africa International Foundation for Electoral Systems, IFES briefing paper, 09.08.2012, http://www.ifes.org/sites/default/files/egypt_scc_decisions_august9.pdf.

⁸Final Report of the Carter Center Mission to Witness the 2011-2012 Parliamentary Elections in Egypt,

https://www.cartercenter.org/resources/pdfs/news/peace_publications/election-reports/egypt-2011-2012-final-rpt.pdf.

⁹McCurdy Daphne A Guide to the Tunisian Elections, October, 2011, Project on Middle East Democracy, <http://pomed.org/wp-content/uploads/2011/10/Tunisian-Election-Guide-Oct-2011.pdf>.

¹⁰Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն, հ. II, Օսմանյան տրիապետության շրջան, 1516-1918, Եր., 2004, Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն, հ. III, Եր., 2006, Նիկոլայ Հովհաննիսյան-85, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Եր., 2017:

¹¹Գևորգյան Գ. Գ., Կառավարվող ժողովրդավարական մոդելի գործարկումը Եգիպտոսում (2008-2010թթ.), Ժամանակակից Եվրասիա, հատոր 1(2), Եր., 2012, Մերձավոր Արևելքի արդիականացման խնդիրը. «արաբական գարունը» և Եգիպտոսը, Ժամանակակից Եվրասիա, հատոր 2(1), Եր., 2013, 2012թ. այլընտրանքային «ժողովրդավարական» նախագահական ընտրությունները Եգիպտոսում և իսլամականների հաղթարշավը, Ժամանակակից Եվրասիա, հ. 5 (1), Եր., 2016, Եգիպտոսի 2011-2012 թթ. խորհրդարանական ընտրությունները. «մեկ մարդ, մեկ ձայն, մեկ անգամ» համակարգը և «մեկանգամյա ժողովրդավարության» հաղթանակը, Ժամանակակից Եվրասիա, հ. 6 (2), Եր., 2017:

¹²Փաշայան Ա. Ա., «Քաղաքականի իսլամը» արաբական գարնան համատեքստում, Ժամանակակից Եվրասիա, հատոր III (1), Եր., 2014, նույնի՝ Ամեն դարունի իր միջնադարը. Խալիֆայություն 21-րդ դարում, 13.07.2014, <http://168.am>, նույնի՝ Տարածաշրջանը վերադառնում է միջնադարյան արժեքներին, www.thearmenians.am.

րևոր նշանակություն են ունեցել ռուս արևելագետների և քաղաքագետների, ինչպիսիք են Ա.Բ. Ալեքսանդրովայի¹³, Ա.Ս. Վասիլևի¹⁴, Վ.Բ. Գուսթերինի¹⁵, Ա.Ս. Գուսարովի¹⁶, Յ.Ն. Ջինինի¹⁷, Լ.Պ. Ջուդինայի¹⁸, Ս.Ս. Իվանովի¹⁹, Լ.Ս. Իսանի²⁰, Ա.Ա. Քրոլի²¹, Պ.Պ. Ռյարովի²², Մ.Ա. Սապրոնովայի²³, Ն.Ա. Սոլոգուբովսկու²⁴, Ի.Ա. Ցարեգորոդցևայի²⁵, Ի.Ս. Շիշկինի²⁶ և այլոց արժեքավոր ուսումնասիրությունները և աշխատությունները:

Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումների և մասնա-

¹³Александрова А. И., Катар и Саудовская Аравия: отношения обостряются, 11 марта, 2014, <http://www.iimes.ru/?p=20224>.

¹⁴Василев А.М., Гражданское общество в Африке: реалии и мифы, Африка: Пробл. перехода к гражд. обществу. - М., 1995.

¹⁵Густерин П.В., Йеменская Республика на пути к президентским выборам, <http://islam-info.ru/obchestvo/1637-jemenskaya-respublika-na-puti-k-prezidentskim.html>.

¹⁶Гусаров В.И., Тунис: «Жасминная» революция-путь к стабильности?, Арабские страны западной Азии и Африки, ИВ РАН, М., 1998.

¹⁷Зинин Ю.Н., «Арабская весна» в повестке дня экспертного сообщества России, Научная жизнь, N 5 (26) 2012, <http://www.vestnik.mgimo.ru/razdely/nauchnaya-zhizn/arabskaya-vesna-v-povestke-dnya-ekspertnogo-soobshchestva-rossii-obzor>.

¹⁸Зудина Л.П., «Вторая республика» в Тунисе. Либерализм и авторитаризм, Арабские страны западной Азии и Африки, ИВ РАН, М., 1998.

¹⁹Иванов С.М., «Арабская весна»: Год спустя, 07.02.2012, Институт Ближнего Востока, <http://www.iimes.ru/?p=14121>.

²⁰Исаев Л.М., Трубецвев К.М., Йемен: конец эпохи Салеха, Системный мониторинг глобальных и региональных рисков: арабский мир после Арабской весны, М., 2016.

²¹Крол А.А., Египет: силы противостоящие президенту М. Мурси, 06.02.2013, <http://www.iimes.ru/?p=16722>.

²²Рябов П.П., «Арабская весна» по-Йеменски, М., 2017.

²³Сапронова М.А., Египет: 90 лет конституционных трансформаций (1923-2013гг.), М., 2014.

²⁴Сологубовский Н.А., Ливия: «сомализация» плюс «катаризация»? 08.03.2012, <http://trueinform.ru/modules.php?name=News&file=article&sid=3671>.

²⁵Царегородцева И.А., Мусульманские группы Египта и их политические партии накануне и после «революции 25 января», Политическая теория и политический анализ, Серия WP14, <https://publications.hse.ru/preprints/114496156>.

²⁶Шишкин И.С., Зачем Америка взорвала Большой Ближний Восток, 17.04.2011, regnum.ru/news/polit/1395636.html.

վորապես սույն աշխատությունում տեղ գտած խնդիրների ուսումնասիրությունը դժվար է ամբողջականացնել առանց անգլալեզու մի շարք հեղինակավոր գիտնականների աշխատությունների, խոսքը մասնավորապես վերաբերում է Աբուզեյդ Ռանիային²⁷, Ալոուչ Ժասսինային²⁸, Բասլի Ռաջային²⁹, Բասու Թանիային³⁰, Փ. Բոմոնթին³¹, Բուքհաս Անուարին³², Լ. Քամիբեյին³³, Ս. Բորբորանին³⁴, Դ. Հիրոյին³⁵, Փ. Դրեշին³⁶, Դ. Ֆարիսին³⁷, Ջ.Վ. Դավիդսոնին³⁸, Դոբարի Սուհամեդին³⁹, Ջ.

²⁷Abouzeid Rania, Bouazizi: The Man Who Set Himself and Tunisia on Fire, 21, 01, 2011, <http://content.time.com/time/magazine/article/0,9171,2044723,00.html>

²⁸Allouche Yasmina, 6 years after the Arab Spring: Where is Libya now? Middle East Monitor, 15.02.2017, <https://www.middleeastmonitor.com/20170215-6-years-after-the-arab-spring-where-is-libya-now/>.

²⁹Basly Raja, The future of al-Nahda in Tunisia, Carnegie endowment for international peace, April 20, 2011, <http://carnegieendowment.org/sada/43675>.

³⁰Basu Tanya, Who are the Houthis?, The Atlantik, 09.04.2015, <https://www.theatlantic.com/international/archive/2015/04/who-are-yemen-houthis/390111/>.

³¹Beaumont Peter, The truth about Twitter, Facebook and the uprisings in the Arab world, 25 Feb. 2011, <https://www.theguardian.com>.

³²Boukhars Anouar, The Geographic Trajectory of Conflict and militancy in Tunisia, Carnegie endowment for international peace, 20.07.2017, <http://carnegieendowment.org>.

³³Campbell Leslie, Yemen: The Tribal Islamist, Wilson Center Home, 27.08.2015, <https://www.wilsoncenter.org/article/yemen-the-tribal-islamists>.

³⁴Corcoran Mark, Yemen: A century of conflict, ABC News, 15.04.2015, <http://www.abc.net.au/news/mark-corcoran/568708>.


³⁵Hiro Dilip, The Essential Middle East: A Comprehensive Guide, New York, 2003.

³⁶Dresch P. Tribes, Government and History in Yemen, A Clarendon Press Publication, Oxford, 1989.

³⁷Faris David, Constituting Institutions: The Electoral System in Egypt, Middle East Policy Council, Vol. XIX, N 1, Spring, 2012, <http://www.mepc.org/constituting-institutions-electoral-system-egypt>.

³⁸Jason W. Davidson, France, Britain and the intervention in Libya: an integrated analysis, Cambridge Review of International Affairs, volume 26, 2013, pp. 310-329.

³⁹Ghobari Mohammed, Yemen's Saleh leaves for U.S. opponents protest, Reuters, 22.01.2012, <https://www.reuters.com/article/us-yemen/yemens-saleh-leaves-for-u-s-opponents-protest-idUSTRE80LOAS20120122>.



Հարիսին⁴⁰, Հ. Ալիին⁴¹, Շ. Մեհրեզին⁴², Ն. Հասանին⁴³, Շ. Ջերեմին⁴⁴, Ռ. Բրյուսին⁴⁵:

Աշխատությունը գրելիս մշտադիտման է ենթարկվել արաբական մեդիադաշտը, մասնավորապես նշված հարցերին առնչվող «ալ-Ջազի-րայի» հրապարակումները⁴⁶:

⁴⁰Harris George, The Libyan Quagmire. The Middle East Institute, 29.04.2011, <http://myemail.constantcontact.com/The-Libyan-Quagmire.html?soid=1102919617474&aid=ePv3gO7-V48>.

⁴¹Hamza Ali, "Rebel" General Ali Mohsen al Ahmar, Yemen's back-up ruler after Saleh, The National, 24.03.2011, <http://www.abc.net.au/news/mark-corcoran/568708>.

⁴²Shireen T. Hunter, Modernization and Democratization in the Muslim World, Obstacles and Remedies, Center for Strategic and International Studies Washington, D.C., 2004, http://www.iranomid.de/IranOmid/en/ARCHVS/CSIS_modernization.pdf.

⁴³Nafaa Hassan, Parliamentary Elections and the Future of the Political System in Egypt, Contemporary Arab Affairs, Vol. 9, Issue 2, Routledge, Taylors & Francis, 2016, pp. 163-186.

⁴⁴Sharp Jeremy, Egypt: 2005 Presidential and Parliamentary Elections, CRS Report for Congress, 21.09.2005, <https://pdfs.semanticscholar.org/27be/3a7e3f8a5d41c78b6cd87c82699093516ca1.pdf>.

⁴⁵Riedel Bruce, Why did Saudi Arabia save Yemen's ex-president again?, Al-Monitor 18.10.2017, <https://www.al-monitor.com/pulse/originals/2017/10/saudi-arabia-yemen-save-ali-abdullah-saleh-russia.html>.

⁴⁶<http://www.aljazeera.com>.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԱՐԱՄԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ՊԱՏՃԱՆՈՒՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՑՔՆԵՐ

Արաբներն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, որոնք մշտապես, բազում դարերի ընթացքում և այսօր էլ շարունակում են կարևոր դեր խաղալ համաշխարհային պատմության մեջ: Դեռևս վաղ միջնադարում արաբները ստեղծեցին իրենց պետությունը՝ Արաբական խալիֆայությունը, որը մի հզոր և ընդարձակ կայսրություն էր և տարածվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս և վճռական դեր խաղում ժամանակի միջազգային հարաբերություններում:

Մեծ է արաբների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության բնագավառում: Նրանք դարձան իր նշանակությամբ համաշխարհային երկրորդ կրոնի՝ իսլամի հիմնադիրը և արաբական այբուբենի ստեղծողները, որը զործածվում է Ասիայի և Աֆրիկայի բազմաթիվ իսլամադավան ժողովուրդների կողմից: Արաբերեն է գրված մուսուլմանների սրբազան գիրքը՝ Դուրանը: Նրանք մեծ զարկ տվեցին պատմագիտության, աշխարհագրության, փիլիսոփայության, քիմիայի, մաթեմատիկայի, աստղագիտության և այլ գիտությունների զարգացմանը: Արաբներն իրավամբ համարվում են մի ինքնատիպ քաղաքակրթության հիմնադիրը, որը հայտնի է արաբախալամական քաղաքակրթություն անվանումով:

Այս բոլորը խորը հետք է թողել մարդկության պատմության մեջ: Սակայն հեշտ ու խաղաղ չի եղել արաբների զարգացման պատմական ուղին: Հաղթանակների ու նվաճումների քաղցրության հետ միասին նրանք ճաշակել են նաև պարտությունների և կորուստների դառնությունը:

Արաբների համար ճակատագրական եղավ օսմանյան լծի տակ հայտնվելը: Արաբական երկրների նվաճումը Օսմանյան կայսրության կողմից սկսվեց 1516 թ., երբ թուրքական զորքերը սուլթան Մելիմ I-ի գլխավորությամբ ներխուժեցին Միդիա, գրավեցին Հալեպը և Դամասկոսը, իսկ այնուհետև արաբական մյուս երկրները՝ Եգիպտոսը, Իրաքը,

Լիբանանը, Հորդանանը, Մաշրիկի և Մադրիբի մյուս երկրները: Մոտ չորսդարյա օսմանյան դաժան տիրապետությունը (1516-1918 թթ.) կասեցրեց արաբների քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացումը: Դա թերևս արաբների պատմության ամենամոռյալ ժամանակահատվածն էր⁴⁷:

1.1 Արաբական երկրների նորագույն շրջանի զարգացման երեք փուլերը

Արաբական աշխարհն իրենք՝ արաբները, ինչպես և արաբագետները, բաժանում են երկու տարածաշրջանի՝ Արաբական Արևելքի կամ արաբերեն «Մաշրիկի», որը համընկնում է «Մերձավոր Արևելք» աշխարհագրական հասկացության հետ: Նրա մեջ մտնում են հետևյալ արաբական երկրները՝ Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը, Եգիպտոսը, Եմենը, Իրաքը, Լիբանանը, Կատարը, Հորդանանը, Մաուրյան Արաբիան, Սիրիան, Քուվեյթը և Օմանը: Մաշրիկի մեջ է մտնում նաև Պաղեստինյան ինքնավարությունը: Իսկ Արաբական Արևմուտքը՝ «Մադրիբը», ընդգրկում է Հյուսիսային Աֆրիկայի բոլոր պետությունները՝ Ալժիրը, Թունիսը, Լիբիան, Մարոկկոն, Մավրիտանիան և Սուդանը:

Մովորաբար ալ-Մադրիբի մեջ մտնում են Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրները: Բացառություն է կազմում Եգիպտոսը, որը թեև գտնվում է Հյուսիսային Աֆրիկայում, սակայն ավանդաբար մասնագետներն այն համարում են Արաբական Արևելքի մի մասը, ելնելով հավանաբար այն իրողությունից, որ Եգիպտոսը պատմականորեն քաղաքական, տնտեսական և մշակութային առումով սերտորեն կապված է եղել և այժմ էլ կապված է Արաբական Արևելքի հետ: Նա իր պատմաքաղաքական և հոգևոր-մշակութային ժառանգությամբ ավելի շատ մերձավորարևելյան, քան թե աֆրիկյան երևույթ է: Մենք նույնպես, հետևելով այդ ավանդույթին, նպատակահարմար ենք գտել Եգիպտոսը ներառել ալ-Մաշրիկի մեջ:

1918 թվականից, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, արաբները թևակոխեցին իրենց զարգացման նորագույն

⁴⁷ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Երեմեն Ե.Դ., Թուրքերի ծագումը, Երեվան, 1975; Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն, հ. II, Օսմանյան տիրապետության շրջան, 1516-1918, Եր., 2004:

շրջանը, որն առանձնահատուկ տեղ է գրավում նրանց հազարամյա պատմության մեջ: Դա ճակատագրական նշանակություն ունեցող և իրադարձություններով հարուստ, հաղթանակների և պարտությունների, հույսերի և հիասթափությունների, բայց և վերընթաց զարգացման դարաշրջան է:

Օսմանյան կայսրությունը խայտառակ պարտություն կրեց Առաջին համաշխարհային պատերազմում, և արաբական ժողովուրդներն իրենց զարգացման պատմական այս՝ առաջին փուլում, հասան իրենց դարավոր երազանքի իրականացմանը:

Նրանք թոթափեցին օսմանյան 400-ամյա դաժան լուծը, որը նրանց քաղաքական հետամնացության և տնտեսական թշվառության գլխավոր պատճառներից մեկն էր: Արաբական լուսավոր քաղաքական միտքն օսմանյան տիրապետությունից ազատագրվելու մեջ էր տեսնում արաբական զարթոնքի և վերածննդի նախադրյալները և հնարավորությունը: Ուստի և Օսմանյան կայսրության փլուզումն արաբները, նրանց տարբեր սոցիալական խավերը և բոլոր հասարակական-քաղաքական ուժերը դիմավորեցին խանդավառությամբ: Նրանք հավատացած էին, որ հասել է իրենց պատմության աստեղային ժամը՝ դառնալու իրենց սեփական ճակատագիրն ազատորեն տնօրինողներ և իրենց զարգացման ուղին ըստ իրենց պատմական ավանդույթների, պատկերացումների և աշխարհըմբռնման ընտրողներ:

Սակայն դեռ հեռու էր այդ պահը: Արաբական երկրները դեռևս ուշքի չէին եկել օսմանյան տիրապետության տապալումից և ինչպես հարկն է չէին ըմբռնել երևակայական ազատության քաղցր պտուղները, երբ նրանք 1920-ականներից սկսած, դասական գաղութների, պրոտեկտորատների և ենթամանդատային երկրների կարգավիճակով ընկան եվրոպական գաղութատեր պետությունների, գլխավորապես Անգլիայի, Ֆրանսիայի, ինչպես նաև Իտալիայի և Իսպանիայի գաղութային տիրապետության տակ: Այդ ժամանակվանից սկսվեց արաբների համառ և երկարատև պայքարն ընդդեմ եվրոպական գաղութարարների՝ հանուն քաղաքական անկախության և գերիշխանության: Դա արաբական երկրների զարգացման երկրորդ փուլն էր, որը տևեց մի ամբողջ կես դար՝ մինչև 1970-ականների կեսերը և ավարտվեց արաբների հաղթանակով:

Ճիշտ է, սխալ կլիներ հավասարության նշան դնել օսմանյան բարբարոսական լծի, որի վերջնական նպատակը կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների՝ արաբների, հույների, հայերի, քրդերի, ասորի-

ների, սլավոնների բռնի թրջացումն էր, և եվրոպական գաղութատիրության միջև:

Սակայն փաստ է, որ արաբներին չհաջողվեց օսմանյան լուծը թոթափելուց հետո, այսինքն առաջին փուլում, հասնել քաղաքական լիակատար անկախության և ազգային ինքնուրույն պետության ստեղծման: Այդ կարևոր ազգային-քաղաքական խնդիրը կարողացան լուծել միայն երկրորդ փուլի ընթացքում, մասնավորապես Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանում, որը նրանց պատմության մեջ մտել է որպես ազգային-ազատագրական պայքարի դարաշրջան: Այդ պայքարը հիմնականում ավարտվեց, ինչպես նշվեց, 1970-ական թվականների կեսերին: Այդ գործընթացին մեծապես նպաստեց նաև համաշխարհային գաղութային համակարգը վերացնելու վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1960 թ. ընդունած որոշումը⁴⁸:

Երկրորդ փուլի խնդիրների հաջող իրականացման արդյունքում աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց արաբական 18 անկախ պետություն՝ Ալժիրը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը, Եգիպտոսը, Եմենը, Թունիսը, Իրաքը, Լիբանանը, Լիբիան, Կատարը, Հորդանանը, Մավրիտանիան, Մարոկկոն, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Սուդանը, Քուվեյթը և Օմանը: Ստեղծվեց նաև Պաղեստինյան ինքնավարությունը, որը գտնվում է պետականության կազմավորման նախաշեմին, որով արաբական անկախ պետությունների թվաքանակը կհասնի 19-ի:

Արաբները մշտապես փայփայել են միասնական արաբական պետություն ստեղծելու, իսկ նրանց որոշ գաղափարախոսներ անգամ Արաբական խալիֆայության վերականգնման գաղափարը: Սակայն իրականությունն ավելի զորեղ գտնվեց, քան թե երազանքը: Մի շարք քաղաքական, տնտեսական պետության փոխարեն, ինչպես նշվեց, ստեղծվեց մոտ երկուասնյակ անկախ պետություն: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը գտնում է, որ արաբական միասնական պետության ստեղծման գաղափարը հնարավոր չեղավ իրագործել արաբական երկրների անհամաչափ զարգացման հետևանքով: Արաբական երկրների անհամաչափ զարգացման հայեցակարգն առաջին անգամ պատմա-

⁴⁸ Declaration on the granting of independence to colonial countries and peoples. Adopted by General Assembly resolution 1514 (XV) of 14 December 1960, www.un.org/decolonization/declaration.shtml.

գիտության մեջ նա է առաջ քաշել, և քննարկման ներկայացրել 1986 թ. օգոստոսին Համբուրգում գումարված արևելագետների XXXII միջազգային կոնգրեսում⁴⁹, որը լայն արձագանք գտավ գիտական աշխարհում և ընդունելության արժանացավ մասնագետների կողմից:

Արաբական երկրների անհամաչափ զարգացման վերաբերյալ Ն. Հովհաննիսյանի տեսադրույթի մասին տեղյակ էին նաև խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեում⁵⁰: Դրա Միջազգային բաժնին հատկապես հետաքրքրում էր հայ մասնագետի այն տեսակետը, որ անհամաչափ զարգացման պատճառով անհնար է դառնում արաբական միասնության իրականացումը և մեկ արաբական միասնական պետության ստեղծումը:

Արաբների կողմից անկախության նվաճումը և 18 ինքնիշխան արաբական ազգային պետությունների կազմավորումը կարևոր պատմական նշանակություն ունեցող երևույթ էր, որն արմատապես փոխեց իրադրությունը և ուժերի փոխհարաբերությունն ամբողջ Մերձավոր Արևելքում: Արաբական երկրները միջազգային հարաբերությունների կրավորական ենթականերից վերածվեցին համաշխարհային պատմական գործընթացի ակտիվ մասնակիցների, որոնք այսօր ներգործում են միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքական մթնոլորտի ձևավորման վրա:

Երկրորդ փուլում եվրոպական գաղութատիրության դեմ մղված պայքարն իր բնույթով համազգային պայքար էր, որի ընթացքում տվյալ երկրի արաբները հանդես էին գալիս միասնական ճակատով: Դա արաբների ազգային-քաղաքական զարթոնքի և ինքնագիտակցության զարգացման փուլն էր: Եվ այդ ժամանակ ազգային անկախության համար պայքարի մեջ մտած արաբական սերունդները պատվով հանձնեցին իրենց բաժին ընկած գաղութային լծի տապալման պատմական քննությունը: Ավելին նրանք չկարողացան անել, և մի շարք կարևոր հարցերի լուծումը բաժին ընկավ արաբների հաջորդ սերունդին:

⁴⁹Hovhannisyan N.H., *Irregularities in the Development of the Arab Countries and their Consequences (1950-1970)*, Proceedings of the XXXII International Congress for Asian and North African Studies, Hamburg, 25th-30th August, 1986, Stuttgart, 1992, p. 450-451.

⁵⁰Տե՛ս Hovhannisyan N.H., *The Uneven Development of the Arab Countries and Its Consequences (1950-1970s)*, Nauka Publishers Department of Oriental Literature, Moscow, 1986.

1.2 Արաբական երկրների զարգացման ուղիների ընտրության հարցը

Անկախության ուղով ընթացող արաբական երկրների զարգացումը հեշտ ու խաղաղ չի եղել: Դա մաքառումների, քաղաքական փոթորիկների, բախումների, մեծ և փոքր պատերազմների, վրիպումների և սայթաքումների ուղի է եղել: Դա միաժամանակ հաղթանակների, ազգային անկախության ամրապնդման, պետական շինարարության և սոցիալ-տնտեսական առաջընթացի ուղի է եղել:

Քաղաքական անկախության նվաճումից հետո զարգացման հետ կապված դժվարությունները և բարդությունները բնորոշ են ոչ միայն արաբական երկրներին, այլև աշխարհի բոլոր երկրներին: Այդպիսին է կյանքը, այդպիսին են քաղաքական իրողությունները:

Քաղաքական անկախության նվաճումից հետո արաբական երկրների առջև իր ողջ սրությամբ կանգնեց հետագա զարգացման ուղու ընտրության հիմնախնդիրը՝ ի՞նչ ուղի ընտրել, նախապատվությունը ո՞ր կողմնորոշումին տալ:

Զարգացման ուղիների հարցում արաբական 18 պետությունները միասնական տեսակետ չունեցան և նրանք ընտրեցին տարբեր ուղիներ: Վերանալով զանազան մանր խնդիրներից, պետք նշել, որ նրանք ընտրեցին երեք տարբեր ուղիներ:

Առաջինը եղավ զարգացման կապիտալիստական ուղին, որի նախադրյալներն այս կամ այն չափով կային համարյա բոլոր երկրներում: Զարգացման այդ ուղին ընտրեցին արաբական երկրների մեծ մասը և դրա համար հարկ չեղավ հորինել հատուկ արաբական մոդել, և այդ կողմնորոշման աղետյտները բավարարվեցին արդեն եղածով և տեղավորվեցին արդեն գոյություն ունեցող համընդհանուր կապիտալիստական մոդելի կամ ձևաչափերի շրջանակներում՝ սակայն պահպանելով արաբական ֆեոդալական-ցեղային վերնախավի իրավունքները և դարերի խորքից եկող նրանց առանձնաշնորհները:

Երկրորդ ուղին, ի զարմանս շատերի, եղավ զարգացման սոցիալիստական կողմնորոշումը: Սակայն խոսքը ոչ թե գիտական սոցիալիզմի մասին է, այլ հատուկ «արաբական սոցիալիզմի» ընտրության մասին, որի տարատեսակներն անցյալ դարի երկրորդ կեսերից մեծ տարածում ստացան: Զարգացման սոցիալիստական կողմնորոշումն ընտրեցին Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Շմենը, Ալժիրը, Լիբիան, Թունիսը և Մուդանը: Դրանք այն երկրներն էին, որոնք սերտ հարաբերություն-

ներ էին հաստատել խորհրդային Միության հետ, նրա հետ կնքել քաղաքական, տնտեսական, անգամ ռազմական համագործակցության պայմանագրեր և այլն: Նրանք արտոնյալ ֆինանսական և տնտեսական լայն օգնություն էին ստանում խորհրդային Միությունից, որը նրանց մատակարարում էր նաև արդիական զենք ու զինամթերք, համապատասխան կադրեր պատրաստում խորհրդային ռազմական ուսումնական հաստատություններում, ռազմաբազաներում և այլն: Պետք է ենթադրել, որ այդ հանգամանքը իր դերն է խաղացել այդ երկրների կողմից զարգացման սոցիալիստական կողմնորոշման մոդելին նախապատվություն տալու հարցում:

Երրորդ ուղին հռչակվեց զարգացման իսլամական ուղին, որի դասական օրինակը հանդիսացավ Մաուլյան Արաբիան, ինչպես նաև Կատարը, Բահրեյնը, Քուվեյթը, Օմանը: Մաուլյան Արաբիան իր բնույթով թեոկրատիկ աստվածապետություն է: Նա հատուկ սահմանադրություն չունի, և նրա համար սահմանադրությունը մուսուլմանների սբազան գիրքը՝ Ղուրանն է: Այս ուղղության կողմնակիցները հրապարակավ այն տեսակետն էին արտահայտում, որ մուսուլման ժողովուրդների և երկրների երջանկությունը և զարգացման միակ ուղին իսլամի դոգմաներին, Ղուրանի դրույթներին, շարիաթի պահանջներին և կրոնաիրավական դպրոցներին մագհաբներին, հավատարիմ լինելն է: Զարգացման իսլամական ուղին ժխտում է զարգացման թե՛ կապիտալիստական, և թե՛ սոցիալաստական ուղիները: Երրորդ ուղու կողմնակիցները հավատացած են, որ զարգացման իսլամական ուղին կամ մոդելը առավելագույնս է համապատասխանում արաբ մուսուլմանների դարավոր պատկերացումներին և միակ ուղին է, որն ի վիճակի է երջանկացնել համայն արաբական աշխարհը և աշխարհի բոլոր մուսուլմաններին:

Բայց, ինչպես հաճախ է պատահում պատմության մեջ, զարգացման վերոնշյալ երեք ուղիներն էլ ձախողվեցին: Նրանք լրիվ զարգացում չունեցան և շատ դրույթներ լույս չէին արարտիվ բնույթ կրեցին: Իշխանության գլուխ եկած նոր ուժերն ընթացան այլ ուղիով, որը ոչ միայն խոչընդոտ հանդիսացավ վերոնշյալ երեք ուղիներից որևէ մեկի լիակատար կենսագործմանը, այլև ստեղծեց նոր իրադրություն համայն արաբական աշխարհում՝ թե՛ Մաշրիկում, և թե՛ Մադրիբում: Այդ ուժերը և նրանց առաջնորդները նախկին սերունդների ուղղակի հաջորդները եղան: Նրանք չունեին ա) բավականին բարձր կրթություն և հասարակական զարգացումների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ,

բ) հոգեբանորեն և իրենց մենթալիտետով բնավ աչքի չէին ընկնում, գ) չէին տիրապետում պետության կառավարման և հասարակության ղեկավարման արվեստին, դ) նախկինի պես ապավինում էին արաբական դարավոր սովորություններին և անընդունակ գտնվեցին նոր առաքելության իրականացման համար:

1.3 Արաբական երկրներում պետական կառավարման աննախադեպ մոդելի հաստատումը

Ինչպես նշվեց, չնայած արաբական երկրների անկախացմանը, այդուհանդերձ, չհաջողվեց հաստատել մի այնպիսի պետական համակարգ, որը բավարարեր արաբական հասարակությանը: Արաբների այն սերունդը, որը ձևավորվել էր XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին, իրեն վիճակված պատմական քննությունը գաղութային լծի թոթափումը, հանձնեց գերազանց, բայց ավելին անել չկարողացավ: Դա արտահայտվեց նրանում, որ անկախության նվաճումից հետո արաբական երկրներում տեղի չունեցան արմատական բնույթի համակարգային փոփոխություններ, ինչը կարող էր նպաստել արաբական երկրների դարակազմիկ թռիչքին միջազգային արժեքային համակարգից արդիական համակարգ: Առերևույթ, ձևականորեն, արաբական մի շարք երկրներում, իհարկե, եղան որոշ փոփոխություններ՝ տապալվեցին միապետություններ, ինչպես Եգիպտոսում: Իրաքում, Եմենում, Լիբիայում, հաստատվեցին հանրապետական կարգեր, ստեղծվեցին մեջլիսներ՝ պառլամենտներ, քաղաքական ասպարեզում ձևավորվեցին և հայտնվեցին քաղաքական կուսակցություններ և այլն: Բայց դրանք կյանքի չկոչեցին խորքային, արմատական և համակարգված արդիական փոփոխություններ և չէին էլ կարող դա անել, քանի որ իշխանության գլուխ եկած ուժերն իրենց առջև անգամ նման խնդիրներ չէին դնում:

Անկախության նվաճումից հետո արաբական երկրներում աստիճանաբար ձևավորվեց պատմության մեջ իր նախադեպը չունեցած կառավարման մի այնպիսի համակարգ, որն իրավաբանորեն շատ դժվար է ձևակերպել: Բայց պայմանականորեն դա կանվանենք ժառանգականության վրա հիմնված հանրապետական-միապետական համակարգի վրա հիմնված յուրահատուկ մի սիմբիոզ: Արդի իրավագիտությունն ի վիճակի չէ տալ նման համակարգի խիստ գիտական սանձաձեռնումը, որն անվիճելիորեն ընդունվի բոլորի կողմից՝ թե՛ իշխանության գլուխ եկած

սոցիալ-քաղաքական էլիտայի, և թե՛ ստորին խավերի, արաբական հասարակայնության և ժողովրդական լայն զանգվածների կողմից:

Հանրապետական-միապետական սիմբիոզիկ կամ համակարգի՝ վերաբերյալ բանաձևում հանրապետական բաղադրիչը տվյալ արաբական պետության պաշտոնապես հանրապետական լինելն է, ինչը ամրագրված է տվյալ երկրի սահմանադրությամբ, և՛ նախագահը որպես պետության ղեկավարը լինելու հանգամանքով, որը նույնպես ամրագրված է սահմանադրությամբ, և նման այլ ատրիբուտներով:

Իսկ միապետական բաղադրիչը ներկայացված է նախագահի փաստացի անժամկետ կառավարելու, պետության ղեկավարը լինելու հնարավորությամբ և իրողությամբ, չնայած որ նա այդ պաշտոնը զբաղեցնում է ընտրությունների արդյունքով: Բայց ընտրությունները, ինչպես վկայում է արաբական երկրների պրակտիկան, ձևական են, քանի որ պրեզիդենտի պաշտոնը զբաղեցնողն ունի այնպիսի լծակներ, որոնք ընտրությունները իրոք դարձնում են ձևական և միայն դրոշմակնքում քվեարկության նախապես հայտնի արդյունքները և հաստատում «պրեզիդենտի» հերթական հաղթանակը: Պատահականություն չէ, որ արաբական երկրներում ընտրողների շրջանակներում տարածված է այն տեսակետը, որ նախագահը ոչ թե ընտրվում, այլ անընդմեջ ինքն իրեն է նշանակում այդ պաշտոնում:

Միապետական բաղադրիչի օրգանական մասն է կազմում իշխանությունը նախագահ հորից որդուն փոխանցելու միտումը, փորձերը և քաղաքականությունը:

Այսպիսով, արաբ քաղաքագետներն աշխարհին պարզեցին կառավարման մի յուրահատուկ մոդել, որը մենք կոչում ենք «**նախագահական-միապետական-դինատստիական կառավարման մոդել**»: Այդ բոլորի մասին են վկայում ստորև բերվող օրինակները:

Թունիսում 1957-1987 թվականներին, ուղիղ 30 տարի երկրի նախագահի պաշտոնն անընդմեջ զբաղեցնում էր Հաբիբ Բուրգիբան, որը հաստատել էր իր անձնիշխանական վարչակարգը: 1974 թ. նա հռչակվեց ցմահ նախագահ և ստացավ «Թունիսի հայր» կոչումը, որը չտեսնելով՝ երևույթ էր պետական կառավարման տեսանկյունից: Նա իր որդուն՝ Հաբիբ Բուրգիբա կրտսերին սկսեց պատրաստել որպես իրեն փոխարինող, որը պետք է ապահովեր Բուրգիբաների տոհմի ժառանգականությունը: Թեև երկրի վարչապետ Ջին ալ-Աբիդին Բեն Ալին 1987 թ. կատարեց պետական հեղաշրջում և տապալեց Բուրգիբաներին, սակայն նա ևս մոտ քառորդ դար, մինչև 2011 թ. Թունիսը կառավարեց

նույն կերպ, նույն մեթոդներով, ինչպես իր տապալած նախորդը:

Նույն ուղիով էր ընթանում Եգիպտոսի Արաբական Հանրապետությունը: 1981 թ., նախագահ Անվար Սադատի սպանությունից հետո, նախագահի պաշտոնը գրավեց նախկին փոխնախագահ Հոսնի Մուբարաքը, ով եգիպտական «գահը» զբաղեցրեց 30 տարի, մինչև 2011 թ.: Նա երկրում մտցրեց արտակարգ դրություն, որը պահպանվեց 30 տարի, ինչը հնարավորություն էր տալիս նրան երկիրը կառավարել այնպես, ինչպես իր կամքն էր թելադրում: Նա նույնպես պատրաստվում էր նախագահությունը փոխանցել իր ավագ որդուն՝ Գամալին, ինչպես ընդունված է միապետական համակարգում:

Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Մեծ Զանախորհայի առաջնորդ Մուամմար Կադաֆին «գահի» վրա մնաց 42 տարի՝ 1969-2011 թթ.: Նա հանրապետությունը կառավարում էր բացարձակ միապետի հավակնություններով և գահի վրա իրեն փոխարինող էր նախապատրաստում իր որդիներից մեկին, որը կրում էր «Մեյֆ ուլ-Իսլամ»՝ «Իսլամի սուր» անունը:

Ավելի քան 32 տարի Եմենը գլխավորում էր նախագահ Ալի Աբդալլահ Սալիի, ով նույնպես իրեն պատկերացնում էր անփոխարինելի և տուրք տալով միապետական ժառանգականության մոդելին, իրեն փոխարինող էր պատրաստում իր որդուն:

Գրեթե նույն սցենարով էին ընթանում իրադարձությունները նաև Սիրիայում: Այստեղ արտակարգ դրություն էր մտցվել դեռևս 1963 թ., որը պահպանվեց ավելի քան 48 տարի: 1970 թ. իշխանությունն անցավ Հաֆիզ Ասադին և նրա գլխավորած ալավիների կլանին: Նա կառավարեց 1970-2000 թթ., ավելի քան 30 տարի, մինչև իր մահը: Այդ տարիները եղան ներքին լարվածության տարիներ, երբ բացահայտ պայքար էր ընթանում ուղղափառ սուննի մուսուլմանների և ալավիների միջև: Սիրիան եղավ միակ երկիրը, որտեղ իրականացվեց արաբական դիկտատորների երազանքը՝ իշխանության փոխանցումը նախագահ իրից որդուն: Հաֆիզ Ասադը դրան պատրաստվել էր շատ խնամքով: Այդ պատճառով էլ նրա մահից հետո նախագահական իշխանության անցումը նրա որդուն՝ Բաշար Ասադին, կատարվեց համեմատաբար հեշտությամբ և առանց արյունահեղության:

Արաբական մյուս երկրներում էլ տեղի էին ունենում նույն բնույթի խմորումներ, ներքին պայքար, պետական հեղաշրջման փորձեր, որի հետևանքով ստեղծվել էր անկայուն իրադրություն:

Ակնհայտ է, որ շատ արաբական երկրներում առկա հայտնի

ժողովրդագրական և տնտեսական խնդիրները դարձան արդեն գոյություն ունեցող տարաբնույթ լատենտ և ակնառու հակամարտությունների ակտուալացման պատճառ, ինչը զգալիորեն ռադիկալացրեց այդ երկրների ներքին իրավիճակը⁵¹:

1.4 Մերեղավիժությունը՝ որպես արաբական արդիականացման առանցքային նախապայման

2011 թ. սկզբներին արաբական աշխարհում շատերի համար անսպասելորեն սկսվեց պատմության մեջ իր գուգահեռները չունեցած ազգային, քաղաքական և սոցիալական մի պոռթկում, որը շարունակվում է մինչև օրս:

Իսկ ի՞նչ բնույթի իրադարձություններ են դրանք, որտե՞ղ են դրանց պատճառները: Բնույթի վերաբերյալ գոյություն չունի միասնական տեսակետ: Ոմանք այդ իրադարձությունները դիտում են որպես խռովություն կամ բուհտ, ոմանք՝ պետական հեղաշրջման փորձ կամ հեղաշրջում, ոմանք՝ իսլամական դավադրություն կազմակերպված «Իսլամի ալ-մուսլիմին» «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական ծայրահեղական կազմակերպության կողմից, կան նաև տեսակետներ օտար պետությունների միջամտության վերաբերյալ և այլն: Բավականին լայն տարածում է գտել և մոդայիկ է դարձել համաարաբական պոռթկումը դիտարկել որպես «արաբական գարուն», թեև դա թե՛ ժամանակի առումով (իրադարձությունները ծավալվել են դեկտեմբեր ամսից), և թե՛ արյունահեղության աստիճանով ու սպանված-մորթվածների քանակով ոչ մի ընդհանուր բան չունի տարվա այդ ձմեռային եղանակի հետ: Այդ տեսակետները կամ կարծիքները շատ հեռու են ճշմարիտ լինելուց և պատմական այս կարևոր երևույթի գիտական բացահայտումից:

Դեպքերի զարգացումը և իրադարձությունների վերլուծությունն ու պատմահամեմատական մոտեցումը մեզ բերել են այն եզրահանգման, որ այն, ինչ կատարվում է 2011-2017 թթ. ողջ արաբական աշխարհում՝ դա համաարաբական ընթոստություն է հանուն արաբական

⁵¹ Նովիանիսյան Դ., Տրանսֆորմացիոն գործընթացները Միջին Արևելքում և Հայաստանը, Վերլուծական տեղեկագիր (հոդվածների ժողովածու), N 6, Եր., 2013, էջ 14:

հասարակության արդիականացման: Ինչ վերաբերում է պատճառներին, ապա սովորաբար շեշտը դրվում է տնտեսական և սոցիալական բաղադրիչների վրա: Միամտություն կլիներ դրանց անտեսումը: Սակայն դրանք այնպիսի սուր բնույթ չեն կրում, որ կարողանային համաժամանակյա համաարարական ընդվզման պատճառ դառնալ: Մանավանդ, որ արաբական մի շարք երկրներում, ինչպես, օրինակ, Լիբիայում, Թունիսում, Քուվեյթում, կամ Բահրեյնում, Կատարում, էլ չենք խոսում Մաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների մասին, կենսամակարդակը մեկ շնչին ընկնող եկամուտների չափով չէր զիջում աշխարհի ամենագարգացած երկրներին, իսկ արաբական մյուս երկրները ընդհուպ մոտեցել են կամ մոտենում են այդ մակարդակին: Ուրեմն հարցի էությունն այն է, որ դրանք ոչ միայն նախապատճառներ չեն, այլև դրանք հետևանք են մեկ այլ ֆենոմենի, առանց որի բացահայտման հնարավոր չէ ճիշտ հասկանալ և մեկնաբանել արդի արաբական ըմբոստությունը: Այդ հարցում արդի քաղաքագիտությունը մեր կարծիքով, անընդունակ գտնվեց տալ հավաստի և սպառիչ պատասխաններ ու հայտնվեց փակուղու մեջ:

Ինչպես նշվեց, քաղաքական անկախության նվաճումից հետո արաբական երկրների առջև կանգնեց զարգացման հետագա ուղու ընտրության հարցը, և նախապատվությունը որոշ երկրներ սովեցին զարգացման կապիտալիստական, որոշ երկրներ սոցիալիստական, իսկ որոշ երկրներ էլ իսլամական ուղուն: Նշվեց նաև, որ վերոնշյալ երեք ուղիներն էլ չարդարացրին արաբների հույսերը: Արաբների այն սերունդը, որը ձևավորվել էր օսմանյան տիրապետության և եվրոպական գաղութատիրության դարաշրջանում, ի վիճակի չեղավ լուծել այդ կարևորագույն խնդիրը: Զարգացման ուղու հետ կապված հարցերի լուծումը բաժին ընկավ արաբների այն սերնդին, որը լույս աշխարհ էր եկել և ձևավորվել անկախության դարաշրջանում:

Իսկ ինչո՞ւ արաբական այդ նոր սերունդը, ի տարբերություն նախորդ երկու սերունդների, կարողացավ նախաձեռնել արաբական երկրների արդիականացման շարժումը, գլխավորել այն և տասնյակ միլիոնավոր մարդկանց ոտքի հանել ընդդեմ գոյություն ունեցող հանրապետամիապետական վարչակարգերի: Դրա պատասխանը պետք է գտնել հետևյալում:

Առաջին, անկախության դարաշրջանում ձևավորված արաբական սերունդը, ի տարբերություն նախորդ երկու սերունդների, կրթվել և դաստիարակվել էր ոչ թե միջնադարյան մեղրեսներում, որտեղ տի-

րապետող էին դարերի խորքից եկող քարացած կրոնական դոգմաների և արժեքների անգիր անելը, նրանց հավատարիմ ու նվիրված լինելը, միջնադարյան բարքերին հնազանդ լինելը, այլ աշխարհիկ դպրոցներում, որը այլ ոգով էր դաստիարակում իր սաներին, այլ բնույթի և մակարդակի կրթություն ու գիտելիքներ էր տալիս նրանց: Մեղրեսեների, որպես համընդհանուր կրթական հիմնական կենտրոնների դարաշրջանն արդեն անցել է: Աշխարհիկ դպրոցների աշակերտներն ավելի մեծ գիտելիքների տեր են, ավելի անկաշկանդ իրենց դաստղություններում, ավելի պատրաստ հրաժարվելու իր դարն ապրած արժեքներից և դաստիարակման մեթոդներից և ավելի ընկալուչ նորի հանդեպ:

Երկրորդ, արաբական նոր սերունդը փայլուն կերպով օգտվեց արտասահմանյան ավելի զարգացած երկրների համալսարաններում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններից: Այդ ընթացքում հարյուր հազարավոր երիտասարդներ բարձրագույն կրթություն ստացան բրիտանական, ֆրանսիական, գերմանական, իտալական, ամերիկյան, խորհրդային և այլ երկրների համալսարաններում: Գտնվելով զարգացած եվրոպական և ամերիկյան երկրներում, շփվելով գիտության և մշակույթի գործիչների հետ, ծանոթանալով զարգացած գիտական ուղղություններին, բարձրագույն ուսումնական հաստատությունների դրվածքին, դասավանդման մեթոդներին, ընթերցելով բուհական դասագրքերը և ականավոր մասնագետների աշխատությունները՝ նրանք ակամայից տեսնում էին այն ահռելի տարբերությունները, որոնք կային այդ երկրների և իրենց հայրենիքի պետական կառուցվածքներում, հասարակական, քաղաքական, կրթական համակարգերում և առօրյա կյանքում: Նրանք արդեն եվրոպական արժեքների կրողներ էին, ծանոթ էին համաշխարհային գիտական և փիլիսոփայական ուսմունքներին և տեսչում էին հաղթահարել իրենց երկրների դարավոր հետամնացությունը, արդիականացնել իրենց հայրենիքը, կիսաբաց հասարակական առաջադիմական սկզբունքները և դուռ բացել քաղաքակրթական, ժողովրդավարության և համամարդկային այլ գլոբալ արժեքների առջև: Ձևավորվեց նոր տիպի զարգացած արաբը, որն այլևս նախկին խեղճ, հնազանդ, մեջքը շեխի և տիրոջ առջև կքած, գլուխը խոնարհած հեզ արաբը չէր: Նա պատրաստ էր արմատական վերափոխություններ կիրառել, պայքարել դրա համար և իր երկիրը տանել արդիականացման ուղիով: Այդ շրջանավարտները և քաղաքակիրթ երկրներ տարբեր նպատակներով այցելած արաբները, վերադառնալով հայրենիք դարձան նոր արժեքների ոչ միայն կրողներ, այլև տարա-

ծողներ և ձեռք բերեցին մեծ հեղինակություն հասարակության մեջ՝ մագնիսի նման իրենց ձգելով այլ երիտասարդների:

Երբորդ, արտակարգ դեր խաղացին համացանցը, հեռուստացույցը և տեղեկատվական արդի այլ միջոցները: Արաբական նոր սերնդի կյանք մտնելը ժամանակի առումով համընկավ համացանցի հայտնության հետ, որը իսկական հեղաշրջում էր թե՛ զարգացած, և թե՛ զարգացող երկրների համար: Արաբական նոր սերունդն անցավ համացանցի բովոյ, հայտնվեց տեղեկատվական բուռն հոսանքի ոլորապտույտում, դարձավ ավելի հասուն, լավատեղյակ աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին, և այդ ֆոնի վրա ավելի ակնհայտ դարձավ արաբական երկրների հետամնաց լինելու իրողությունը, ինչն ավելի ամրապնդեց նրանց վճռականությունը արդիականացնելու իրենց երկիրը: Նրանց կողմնակիցների և համակիրների բանակն օրեցօր ստվարանում էր, և նրանք դարձան թերևս ամենաազդեցիկ ուժն իրենց երկրում:

Այդ բոլորը չէր կարող չհանգեցնել և իրոք հանգեցրեց բախման նոր ձևավորվող հասարակության և իր դարն ապրած, հնամաշ պետական, քաղաքական և հասարակական կառույցների կողմնակիցների միջև: Արաբական հասարակությունը երկփեղկվեց: Մի կողմում հին վարչակարգերի և կառույցների կողմնակիցներն էին, կառավարող վերնախավը, որոնք արդեն փոքրամասնություն էին կազմում, սակայն շարունակում էին սեփական բնակչությանը վերաբերվել ինչպես միջնադարյան ֆեյլախի և բեդվինի, իսկ մյուս կողմում՝ արդիականացման կողմնակիցները, որոնց գլխավոր ուժը ըմբոստացած, կրթված և ինքնագոհության պատրաստ երիտասարդությունը, որին համակրում, աջակցում են, և որոնց շարքերը ստվարացնում են հասարակության ավելի ու ավելի լայն խավեր: Նրանց հիմնական նպատակը դարձավ արդիականության սկզբունքների հիման վրա վերակառուցել պետական, կառավարական, վարչական, սոցիալ-տնտեսական և մշակութային ողջ համակարգը, հրաժարվել արխայիկ, իր դարն ապրած կառույցներից, պատկերացումներից, գաղափարներից և որդեգրել պետական-հասարակական այնպիսի մոդելներ, որոնք ընդունված են քաղաքակիրթ երկրներում:

Կարևոր խնդիրներից մեկն էլ ուղիներ հարթելն էր ժողովրդավարացման, մարդու իրավունքների հարգման և պաշտպանության, ինչպես նաև միջնադարյան-ճորտատիրական զանազան կապանքների վերացման համար: Շատ էական էին նաև ժողովրդի բարեկեցիկ կյանքի ապահովման հիմնախնդիրները: Ցավոք, հնարավոր չէ այդ բոլոր հար-

ցերին հանգամանորեն անդրադառնալը: Ուստի կանգ կառնենք երկու ամենակարևոր հարցերի վրա:

Առաջինը՝ պետության, պետական կառավարման և ռեժիմի հարցերն են: Արաբական պրակտիկան եկավ հաստատելու այն հանրահայտ ճշմարտությունը, որ ամեն մի հեղափոխության, արմատական, խորքային փոփոխությունների և ըմբոստության գլխավոր հարցը իշխանության հարցն է:

Հանուն արդիականության արաբական ըմբոստության սկիզբը դրվեց 2010 թ. դեկտեմբերին: Արդեն նշվել է, որ 30 տարի՝ 1957-1987 թվականներին Թունիսում անընդմեջ կառավարում էր Հաբիբ Բուրգիբան, ով 1974 թ. պաշտոնապես հռչակվեց ցմահ պրեզիդենտ և «Թունիսի հայր»: Սակայն վարչապետ Ջին ալ-Աբիդին Բեն Ալին 1987 թ. կատարեց պետական հեղաշրջում և Հաբիբ Բուրգիբային զրկեց իշխանությունից և բոլոր կոչումներից: Բեն Ալին կառավարեց մինչև 2011 թ.: Այդ նույն թվականի հունվարին թունիսցիներն ապստամբեցին և տապալեցին Բեն Ալիին, որը փախավ Թունիսից և ապաստան գտավ Մաուրյան Արաբիայում: Այդ գործողությունն ընդունված է համարել «արաբական գարնան» կամ համաարաբական ըմբոստության սկիզբ, որը նպատակադրված էր հանուն արաբական հասարակության արդիականացման: Դրանից հետո ըմբոստությունը շղթայական ռեակցիայի տրամաբանությամբ կամ դոմինոյի սկզբունքով տարածվեց և այս կամ այն չափով իր մեջ ներառավ արաբական մյուս 18 պետությունները: Կրկնում ենք, այս կամ այն չափով, քանի որ, ինչպես նշել ենք, գործում էր արաբական երկրների անհամաչափ զարգացման օրենքը, և յուրաքանչյուր երկիր ուներ իր յուրահատկությունը և տարբերվում էր մյուս երկրներից:

Արդիականության հաջորդ «գոհը» դարձավ Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը և նրա մերձակա քաղաքական շրջապատը: Ինչպես նշվել է, նա նույնպես արաբական ամենաազդեցիկ պետությունը՝ Եգիպտոսը կառավարում էր ուղիղ 30 տարի՝ 1981-2011 թվականներին: Նա պատրաստվում էր հեռանալ կառավարումից և իր փոխարեն նախապատրաստում էր նախագահ նշանակել իր որդուն Գամալին: Սակայն այս անգամ նա, ինչպես Թունիսի պարագայում, այդ «միապետական» քայլը ձախողվեց: Ըմբոստացած երգիպատեցիները Հոսնի Մուբարաքին գահընկեց արեցին: Նա ձերբակալվեց և բանտ նետվեց դատապարտելով մահվան, ինչը հետագայում փոխարինվեց ցմահ բանտարկությամբ:

Արաբական երկու կարևոր և ազդեցիկ պետություններում՝ Թու-
նիսում և Եգիպտոսում, «հանրապետական միապետական» ռեժիմների
տապալումը համաարաբական ըմբոստության կարևոր հաղթանակներից
էր, որը ռզկորեց արաբական մյուս երկրների ապստամբության պատ-
րաստ ուժերին:

Ըմբոստ ուժերը ռոքի ելան նաև Եմենում, որոնք ի վերջո տապա-
լեցին Ալի Աբդալլահ Սալիհին, որն ավելի քան 32 տարի կառավարում
էր Եմենը և իրեն համարում անփոխարինելի: Եմենում, կարելի է ասել
դրությունը միշտ շատ լարված և անկայուն է եղել, և պետական արյու-
նալի հեղաշրջումները հաջորդում էին մեկը մյուսին: Ալի Աբդալլահ
Սալիհին հաջողվեց մի կարճ շրջան նորից երկրի ղեկավարությունը
վերցնել իր ձեռքը, սակայն 2017 թ. նոյեմբերին նա սպանվեց:

Շատ բարդ և լարված իրավիճակ էր ստեղծվել Լիբիայում: Լի-
բիան մոտ 42 տարի՝ 1969-2011 թթ. ղեկավարել է Մուամմար Աբու Մին-
յար ալ-Կադաֆին: Դա համարյա մի ամբողջ դարաշրջան է: Ինչպես
նշվել է, Կադաֆին իրեն փոխարինող էր պատրաստում իր որդիներից
Սեյֆ ուլ-Իսլամին: Մակայն այդ բոլոր նկրտումներին վերջ տվեց ըմբոս-
տությունը, որը Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ակտիվ միջամտու-
թյամբ և խրախուսման արդյունքում շեղվեց իր ուղուց և վերածվեց Կա-
դաֆիին հետապնդելու ու որսալու ակցիայի: Դա ավարտվեց նրան
հրապարակայնորեն տանջամահ անելու և մարդկային արժանապատ-
վությունը ստորացնելու զգվելի արարքներով, ինչը բողոքի մեծ ալիք
բարձրացրեց դասական գաղութատեր երկրներ Մեծ Բրիտանիայի և
Ֆրանսիայի իրագործած այդ «քաղաքականկրթական» գործողության
դեմ: Կադաֆին դարձավ այդ քստմնելի արարքի զոհը:

Այսպիսով, արդիականացման շարժման հետևանքով իշխանու-
թյունից հեռացվեցին տասնամյակներ շարունակ երկրի ղեկավարու-
թյունն իրենց ձեռքում կենտրոնացրած միապետերը: Բայց դա չէր բա-
վարարում այդ շարժման կողմնակիցներին: Նրանց անհրաժեշտ էին
նաև համակարգային փոփոխություններ, որոնք ամրագրվեին համա-
պատասխան սահմանադրությամբ: Առաջինն այդ ուղղությամբ քայլ
կատարեց Եգիպտոսը, որտեղ 2011 թ. մարտին անցկացվեց հանրաքվե
սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ: Ըստ
փոփոխված սահմանադրության՝ երկրի նախագահի կառավարման
ժամկետը սահմանվում էր չորս տարի և անընդմեջ ոչ ավելի, քան երկու
ժամկետ, ինչը շատ սկզբունքային և կարևոր նորություն էր: Մյուս կա-
րևոր նորությունը վերաբերում էր արտակարգ դրություն մտցնելուն:

Նոր սահմանադրության համաձայն նախագահն այլևս չէր կարող արտակարգ դրություն մտցնել: Արտակարգ դրություն կարելի էր մտցնել միայն խորհրդարանի համաձայնությամբ, եթե դա մտցվում էր ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով, իսկ ավելի երկար ժամկետի դեպքում՝ միայն համաժողովրդական քվեարկությամբ: Փաստորեն, հանրապետական կառույց ունեցող երկրների համար նախընտրելի էր դառնում կառավարման ամերիկյան մոդելը: Արաբական բացարձակ միապետական վարչակարգ ունեցող երկրների համար, ինչպես Բահրեյնը, Կատարը և Քուվեյթը, որոնք նույնպես այս կամ այն չափով հայտնվել էին արդիականացման շարժման ալիքների մեջ, ընդունելի էր բրիտանական մոդելը՝ այսինքն սահմանադրական միապետության վերածվելու ուղին, որը շատ ընդգծված ձևով արտահայտվեց Բահրեյնում 2011-2012 թթ. տեղի ունեցած արյունալի բախումների ժամանակ: Ցուցարարները մեծ ցույց կազմակերպեցին մայրաքաղաքում կառավարական շենքի առջև: Նրանք պահանջում էին Բահրեյնում հաստատել սահմանադրական միապետություն և ընտրովի կառավարություն⁵²: Բահրեյնի արքայազնը Նալիֆա իբն Սալման ալ-Նալիֆան կոչ արեց ցուցարարներին և ընդդիմությանը ցուցաբերել «համբերություն և լավատեսություն»⁵³: Նա վստահեցրեց, որ «Բահրեյնն այլևս չի վերադառնա իր նախկին դրությանը, որովհետև մի բան որոշակիորեն պարզ է՝ կյանքը փոխվում է»⁵⁴: Բահրեյնում մտցվեց արտակարգ դրություն, որին հաջորդեց Սաուդյան Արաբիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների ռազմական ներխուժումը: Սաուդյան Արաբիան Բահրեյն մտցրեց 1000 սաուդյան զինվոր, իսկ ԱՄԷ-ն՝ 500 զինյալ ոստիկաններ՝ «կարգը վերականգնելու և էներգիայի և ֆինանսական կարևոր կենտրոնները պաշտպանելու պատրվակով»⁵⁵: Միաժամանակ Բահրեյնի թագավոր Համադի հրամանով ռազմական ուժերի վրա դրվեց երկրում անվտանգությունն ապահովելու պատասխանատվությունը:

Սաուդյան Արաբիայում ձեռնարկվեցին մի շարք կանխարգելիչ քայլեր: Այստեղ ընդդիմության յուրաքանչյուր արարք հռչակվեց որպես Շարիաթի օրենքներին հակասող քայլ: Ներքին գործերի նախարարու-

⁵²Ulrichsen K.C., Bahrain's Uprising: Regional Dimensions and International Consequences, International Consequences. Stability: International Journal of Security & Development, 2 (1), article 14, 2013, <https://www.stabilityjournal.org>.

⁵³Նույն տեղում:

⁵⁴Նույն տեղում:

⁵⁵Նույն տեղում:

թյան որոշումով «արգելվեցին երկրում բողոքի ամեն մի դրսևորում, այդ թվում և նստացույցերն ու երթերը, քանի որ նման գործողությունները հակասում են շարիաթի իսլամական օրենքներին և սաուդյան հասարակության ավանդույթներին»⁵⁶։ Սակայն սաուդյան ավելի քան 100 երևելի հայտնի գործիչներ գիտնականներ, գրողներ, քաղաքացիական հասարակության և գործարար աշխարհի ներկայացուցիչներ, պահանջեցին կիրառել լայնածավալ բարեփոխումներ, մասնավորապես նրանք կոչ արեցին Սաուդյան Արաբիայում հաստատել սահմանադրական միապետություն»⁵⁷, ինչն արտակարգ երևույթ էր։

Այդ մոդելի հետևողական կիրառման անհրաժեշտության մասին բացեիքաց պահանջներ էին հնչում նաև Հորդանանում և Մարոկկոյում։

Երկրորդ, արդիականացման ճանապարհին կանգնած մյուս խոչընդոտը տոհմացեղային հարաբերություններն են՝ իրենց աներևակայելի սահմանափակումներով և տաբուներով։ Հասկանալի է, որ ցեղերի և ցեղային հարաբերությունների վերացման մասին անգամ խոսել չի կարելի, դա առայժմ գործնականորեն անհնար բան է և կպահանջի երկար գործընթաց։ Չպետք է մոռանանք, որ ցեղային հարաբերությունների ծածկույթի տակ են գտնվում ամբողջ արաբական գավառը, հողագործ ֆելլահները և բեդվին քոչվոր անասնապահները։ Արաբական երկրների մեծ մասը գյուղաբնակ է և ենթակա ցեղային հարաբերություններին, սովորույթներին, ցեղապետ-շեյխերին, հոգևոր առաջնորդ իմամներին ու նրանց անօրինականություններին ու կամայականություններին։ Այստեղ ազատորեն գործում է շարիաթը, կրոնական դատ ու դատաստանը, թեև արաբական մի շարք երկրներում օրենքով սահմանված են նաև աշխարհիկ իրավական նորմեր։ Սակայն դրանք լիարժեք չեն գործում կամ գործում են շարիաթին զուգահեռ։

Ցեղային հարաբերությունների տաբուներից և շարիաթի օրենքներից հատկապես տուժում են կանայք։ Այդ պատճառով էլ արդիականացման կողմնակիցների կոչերն արաբ կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրական շատ մեծ արձագանք գտավ վերջինների մոտ։ Կանայք դարձան արդիականացման շարժման ակտիվ մասնակիցներ, որի հետևանքով այդ շարժումն ավելի մասսայական դարձավ և մեծ թափ առավ։ Կատարի «Ալ-Ջազիրան» այդ կապակցությամբ

⁵⁶Ulrichsen K.C., Bahrain's Uprising: Regional Dimensions and International Consequences, International Consequences. Stability: International Journal of Security & Development, 2 (1), article 14, 2013, <https://www.stabilityjournal.org>.

⁵⁷Նույն տեղում։

շատ հետաքրքիր դիտողություն է կատարում: Նա նշում է, որ արաբական ըմբոստության կամ ապստամբության կարևոր յուրահատկություններից մեկն այն է, որ «Ապստամբությունը արաբական երկրներում ունի նաև ֆեմինիստական բնույթ, քանի որ այն քանդում է մուգ չադրայով լռակյաց և հնազանդ մուսուլման կնոջ ավանդական կերպարը: Գործնականում բոլոր երկրներում մուսուլման կանայք եղել են փողոցային բողոքի ելույթների առաջին շարքերում, չխոսելով սոցիալական ցանցերում նրանց ակտիվության մասին»: Իհարկե, այս բնագավառում դեռ շատ անելիքներ կան, որոնք արդիականության կողմնակիցներից պահանջում են մեծ համբերություն, հնարամտություն և ճկուն քաղաքականություն:

1.5 Գաղթականների ալիքն Աֆրիկայից և Ասիայից Եվրոպա. Մուսուլմար Կադաֆիի անեծքը

Մենք ականատեսն ենք մի նոր ողբերգության, որը համաշխարհային բնույթ է կրում: Խոսքը դեպի Եվրոպա Մերձավոր Արևելքից և Աֆրիկայից հարյուր հազարավոր փախստականների անկազմակերպ, հախուռն, հարկադրական ներգաղթի մասին է, որն ավելի շատ նման էր ներխուժման: Ներգաղթյալները հաստատվել են Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Նիդեռլանդներում, Բելգիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Պորտուգալիայում, Շվեդիայում, Ավստրիայում, Չեխիայում, Հունգարիայում, Ֆինլանդիայում և այլ երկրներում: Ներգաղթյալները՝ ծեր ու մանուկ, կին ու տղամարդ, հիվանդ ու զառամյալ, լքելով իրենց երկրները, փորձում են ապաստան գտնել եվրոպական երկրներում, համարելով դրանք իրենց համար որպես «փրկության խարիսխ»:

Իսկ ո՞րն է պատճառը: Պատճառները շատ են և բազմատեսակ: Նշված տարածաշրջանի երկրներում տիրող քաղաքական անկայունությունը, տարածաշրջանում անվտանգության ու ապահովության բացակայությունը, ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, հեռանկարի բացակայությունը, ռազմական գործողությունները, որոնք միշտ չէ որ հասկանալի են, թե ով ում դեմ և ինչի համար է պատերազմում, երեկվա դաշնակիցների վերածումն անհաշտ թշնամիների՝ ահա դրդապատճառների ոչ լրիվ ցանկը, որը ստիպում է հարյուր հազարավոր մարդկանց դառնալ գաղթական, որոնց թիվն այսօր արդեն մոտենում է հինգ միլիոնի: Հախուռն կերպով բռնելով՝ գաղթականի

ցուպը և դեպի Եվրոպա գաղթի ճանապարհը՝ նրանք «մոռանում» են, որ իրենց այդ անելանելի ծանր դրության համար պատասխանատվության զգալի բաժինը ընկնում է նաև հենց այդ եվրոպական երկրների վրա, որոնք որպես գաղութատեր պետություններ, երկար տարիներ թալանել և կոդոպտել են Ասիայի և Աֆրիկայի երկրներին և իրենց երկրների բարեկեցությունը կառուցել կոդոպուտի ու թալանի վրա: Իսկ ասիական և աֆրիկյան երկրների կողմից անկախություն ձեռք բերելուց հետո, նախկին գաղութատեր եվրոպական պետություններն ամեն կերպ փորձում են նրանց պահել իրենց ազդեցության ոլորտում և անուղղակի տիրապետության ներքո:

Իսկ ինչպե՞ս է Եվրոպան դիմավորում այսօր Ասիայից և Աֆրիկայից եկող փախստականների հոսքին: Ամեն կերպ, սակայն ոչ ծաղկեփնջերով: Եվրոպական երկրներն ամեն տեսակի խոչընդոտներ, այդ թվում, իրավական, ֆինանսական, տրանսպորտային և այլ բնույթի դժվարություններ են ստեղծում եվրոպական տարածաշրջանում նրանց հաստատման դեմ: Նրանց քշում են մի երկրից մյուսը, իսկ առավել արմատական հակառակորդները կոչ են անում փախստականներին սահմանների մոտ դիմավորել գնդացիներով: Հունգարիան իր սահմանների վրա փշալարերով ծածկված քարե պատնեշ է բարձրացրել և պատրաստել օրենքի նախագիծ, որով անօրինական ճանապարհով երկիր մտած փախստականը դատապարտվում է երեք տարվա բանտարկության: Նա գորքեր է կենտրոնացրել Չեխիայի սահմանի վրա՝ կանխելու փախստականների ներթափանցումը Հունգարիա: Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Կամերոնը, որն անթաքույց թշնամական դիրք է զրավել ներգաղթյալների նկատմամբ, բրիտանական խորհրդարանում բացեիքաց դատապարտեց Շենգենյան համաձայնագրի ընդունումը, գտնելով, որ սխալ էր եվրոպական երկրների միջև սահմանների վերացումը, որը այժմ հնարավորություն է տալիս ասիական և աֆրիկյան փախստականներին ներս սողոսկել եվրոպական երկրներ: Գերմանիան, Չեխիան և Ավստրիան արդեն որոշում են ընդունել ուժեղացնել իրենց սահմանների հսկողությունն ընդդեմ գաղթականների ներթափանցման: Գաղթականների նկատմամբ ոչ բարյացկամ դիրքորոշում են դրսևորում նաև Եվրոմիության մյուս անդամ երկրները՝ մասնավորապես Լեհաստանը, Ռումինիան, Բուլղարիան, Մերձբալթյան եռյակը և այլն: Հունգարիայի վարչապետ Օրբանը հայտարեց. «Մենք կարծում ենք յուրաքանչյուր երկիր իրավունք ունի որոշելու՝ արդյոք նա ուզում է ունենալ մեծաթիվ մուսուլմաններ իր երկրում: Մենք չենք ուզում»: Իսկ

եվրոպական սիրողական մակարդակի որոշ «տեսաբաններ» հիստերիա են բարձրացրել, թե այն, ինչ տեղի է ունենում այժմ Եվրոպայում ասիա-աֆրիկյան գաղթականության հոսքի հետևանքով, դա «կոլապս է» և «համամարդկային ապոկալիպսի սկիզբը»:

Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրերից գաղթականության հոծ գանգվածների ներխուժումը Եվրոպա, տրամաբանական արտահայտությունն է այն քստմենտի և դատապարտման արժանի քաղաքականության, որ երկար տարիներ վարել են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան Մերձավոր և Միջին Արևելքում և Աֆրիկայում՝ աջակից ունենալով Թուրքիային և տարածաշրջանային մի շարք այլ երկրներին, ինչպես Սաուդյան Արաբիան, Կատարը և այլն: Այդ քաղաքականության սկիզբը դրվեց ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ կրտսերի կառավարման ժամանակ, ինչն ինքնին նոր փուլ էր նշանակում միջազգային հարաբերություններում: Ռուս քաղաքագետ Իգոր Շիշկինը հետադարձական հարց է տալիս «Ինչո՞ւ Ամերիկան պայթեցրեց Մեծ Մերձավոր Արևելքը»⁵⁸:

2003 թ. մարտին ԱՄՆ-ի և նրա գլխավորած կոալիցիոն ուժերը ներխուժեցին Իրաք, պատրվակ բռնելով, թե Իրաքը պատրաստում է միջուկային և քիմիական-կենսաբանական գանգվածային ոչնչացման զենք: Թեև դա չհաստատվեց, և միջազգային հատուկ հանձնաժողովը հայտարարեց, որ Իրաքը նման զենք չունի, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ կրտսերը և Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյրը, անտեսելով հանձնաժողովի այդ եզրակացությունը, շարունակեցին ռազմական գործողությունները, որոնք ավարտվեցին ապրիլին՝ Իրաքի պարտությամբ: Զավթիչները սկսեցին մարդաորսը, ձերբակալելով Իրաքի քաղաքական և ռազմական էլիտային, մոտ 60 մարդու, որոնց զգալի մասը մահվան դատապարտվեց, մի մասն էլ բանտարկվեց: Ձերբակալվածների մեջ էր նաև Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը, ով կախաղան հանվեց: Դա պատմության մեջ աննախադեպ երևույթ էր: Ամերիկյան զորքերը ներխուժեցին անկախ և ինքնիշխան, ՄԱԿ-ի անդամ պետություն՝ Իրաք, և նրանց հրամանով կախաղան հանվեց նրա օրինակարգ նախագահն ու մերձավոր զինակիցները: Դա արեց մի երկիր, որն իրեն համարում է աշխարհի ամենաժողովրդավարական երկիրը, մարդու իրավունքների հետևողական պաշտպանը,

⁵⁸Шишкин И., Зачем Америка взорвала Большой Ближний Восток, 17.04.2011, regnum.ru/news/polit/1395636.html.

որը դաս է տալիս աշխարհի բոլոր երկրներին և ժողովուրդներին, թե ինչպես պետք է ապրել և հանդես գալ որպես օրենքի գերակայության ջատագով: Իրաքցիներն ու արաբական մյուս ժողովուրդները չներեցին ԱՄՆ-ին և նրա մանկլավիկ դաշնակիցներին նրանց իրագործած ոճրագործությունը, իսկ շատ երկրներ դատապարտեցին ԱՄՆ-ին և նրա երկդիմի քաղաքականությունը: Հենց այդ ժամանակ սկիզբ առավ Իրաքի արաբների, հայերի և ասորիների արտագաղթի առաջին ալիքը:

ԱՄՆ-ի ներխուժման արդյունքում Իրաքը կազմալուծվեց այն աստիճան, որ անգամ ի վիճակի չէրավ դիմակայել «Բալամական պետություն» կոչված ինքնակոչ, հանելուկային խալիֆայությանը, պահպանել իր տարածքային ամբողջականությունը, այն ծվեն-ծվեն էր լինում, և նրա հյուսիսային տարածքները՝ Մոսուլով հանդերձ, անցան այդ խալիֆայության տիրապետության տակ: Իսկ «Բալամական պետության» դեմ ուղարկվող անօդայնու ինքնաթիռների ռմբակոծումներից ավելի շատ տուժում էին խաղաղ բնակիչները, քան թե սալաֆիական իսլամական խաժամուժը: Իսկապես, հանելուկներն ավելի շատ են, քան հավաստի պատասխանները, մանավանդ որ «Բալամական պետությանը» պաշտպանող, օգնող և աջակցող մի շարք երկրներ հանդես են գալիս նրա հակառակորդի դիմակի տակ:

Իրաքյան մոդելը հետագայում օրինակ ծառայեց ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք երկրների համար համանման քաղաքականություն իրականացնել նաև աշխարհի այլ մասերում, մասնավորապես Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների հանդեպ: Ինչպես հայտնի է, 2011 թ. հունվարին սկսվեց համաարաբական ապրստամբությունը, որի կենտրոններն էին Թունիսը, Եգիպտոսը, Սիրիան, Եմենը, Լիբիան, ինչպես նաև Ալժիրը, Մարոկկոն, Բահրեյնը, Քուվեյթը, Հորդանանը և արաբական մյուս երկրները: Հենց այդ հանգամանքն անհանգստացրեց ԱՄՆ-ին և եվրոպական ամենաազդեցիկ երկրներին, առաջին հերթին Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Արդիականացումը, որն ընդգրկում է բոլոր ոլորտները՝ պետական, հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթութական և այլն, անընդունելի էր ԱՄՆ-ի և եվրոպական ազդեցիկ երկրների համար, քանի որ դա կթուլացներ նորանկախ պետությունների կախվածությունը նրանցից և կամրապնդեր նրանց դիրքերը: ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, ձևականորեն ճանաչելով Ասիայի և Աֆրիկայի երկրների անկախությունը, միաժամանակ ձգտում էին և շարունակում են ձգտել նորանկախ պետությունները պահել իրենց քաղաքական և տնտեսա-

կան ազդեցության ներքո, ստիպել նրանց անվերապահորեն կատարել Վաշինգտոնից, Լոնդոնից, Փարիզից, Բեռլինից եկող հրամանները և կարգադրությունները: Իսկ դա արդեն հնարավոր չէր իրագործել հորդորներով, համոզելով և նման այլ լծակներ գործադրելով: Մնում էր միակ ուղին՝ միջամտել այդ երկրների ներքին գործերին, կազմակերպել և հրահրել ներքին խռովություններ և այդ ուղիով հասնել գործող իշխանությունների տապալմանը՝ նրանց փոխարինելով իրենց դրածոներով: Նրանց հաջողվեց մի շարք երկրներում՝ Եգիպտոս, Թունիս, Եմեն տապալել գործող նախագահներին, կառավարություններին և կառավարող կուսակցություններին՝ այդ երկրներում հրահրելով քաղաքացիական պատերազմներ, հեղաշրջումներ և ստեղծելով անտանելի քաղաքական մթնոլորտ և ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ: Նրանք հատուկ դաժանությամբ վարվեցին այն ղեկավարների հետ, որոնք դիմադրում էին արևմտյան երկրների ոտնձգություններին և պաշտպանում իրենց երկրների ազգային պետական շահերը (Բաշար Ասադ՝ Սիրիա, Մուամմար Կադաֆի՝ Լիբիա և այլն): Արևմտյան տերություններին միացավ և նրանց հետ համատեղ շարունակում է գործել Թուրքիան, որը տառապում է տարածաշրջանային գերտերություն դառնալու մարմաջով՝ գտնելով, որ իր ազդեցության ոլորտում պետք է գտնվեն ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան: Սկսվեց մարդաորսը, որն իր գազաթնակետին հասավ և ամենանողկալի ձևով իրակալացվեց Լիբիայի առաջնորդ Մուամմար Կադաֆիի նկատմամբ, որը Լիբիան կառավարում էր 1969 թ. սեպտեմբերի 1-ից, մոտ 42 տարի, և ժամանակակից Լիբիայի հիմնադիրն էր: Տապալելով Մանուսիների միապետությունը՝ Կադաֆին հիմնեց Լիբիայի Հանրապետությունը, որը 1977 թ. վերանվանվեց Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Ջամահիրիայի: «Որսալով» Կադաֆիին, նրա հետ վարվեցին ամենագարշելի ձևով, ծաղրուծանակի ենթարկելով, տղամարդու արժանապատվությունը ոտնահարելով՝ համաեվրոպական միասնականության արժեքային համակարգի սկզբունքներին խստիվ ներդաշնակ: Դա իրականացվեց իրենց քաղաքակիրթ աշխարհի լուսատուներ համարող Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի թողութությամբ և նրա ներկայացուցիչների քթի տակ, ԱՄՆ-ի և բազմաթիվ այլ երկրների քար լուծության պայմաններում: Նա արժանի չէր նման վերաբերմունքի: Մենք 1985 թ. խորհրդային պատվիրակության կազմում եղել ենք Լիբիայում, երբ Կադաֆիի համաձայնությամբ ու աջակցությամբ Լիբիայում անցկացվեցին Հայաստանի հետ բարեկամության և մշակութային օրեր, և

ես զեկուցումով հանդես եմ եկել խորհրդա-լիբիական քաղաքական հարաբերությունների վերաբերյալ: Եղել ենք տարբեր քաղաքներում, հանդիպել պետական բարձրաստիճան գործիչների, պատմաբանների, արվեստագետների, հասարակ մարդկանց հետ և լսել նրանց կարծիքները Կադաֆիի մասին: Ամեն երկրում էլ, իհարկե, կան թերություններ, դժգոհություններ և այլն, բայց լիբիացիները շատ բարձր էին գնահատում Կադաֆիին, նրա նվիրվածությունը երկրին ու ազգին, նրա վիթխարի ներդրումը Լիբիայի զարգացման, առաջընթացի և ժողովրդի սոցիալ-տնտեսական դրության բարելավման գործում: Նա մեծ հեղինակություն էր վայելում: Մնացածը բամբասանք է⁵⁹:

Արևմտյան տերությունների միջամտությունից հետո, Կադաֆին, ով հարկադրված էր անընդհատ փոխել իր բնակատեղին, ամենայն հավանականությամբ կռահել էր իր ողբերգական վախճանը: Այդ մասին է վկայում նրա անեծքը՝ հասցեագրված Եվրոպային, և նրանում տեղ գտած նրա դատողությունները:

Ղուբ մոբակոծում եք այն պատնեշը, որը թույլ չէր տալիս աֆրիկացի փախստականներին մտնել Եվրոպա, մի պատնեշ, որը զսպում էր «ալ-Գաիդայի» ահաբեկիչներին: Այդ պատնեշը Լիբիան էր: Ղուբ այն քանդեցիք: Ղուբ ապուշ եք: Հանուն աֆրիկացի հազարավոր փախստականների, «ալ-Գաիդային» սատարելու համար թող վառվեք դուք դժոխքում: Եվ դա այդպես էլ կլինի»⁶⁰:

Ի տես ներկա անտանելի իրավիճակի, որը դեպի Եվրոպա գաղթականության նոր և հուժկու ալիք բարձրացրեց, որը սասանեց եվրոպական երկրների ներքին անդորրը, կայունությունն ու կյանքի ռիթմը, կարող ենք ասել, որ Կադաֆիի արդար անեծքն արդեն տեղ է հասել և գործում է: Նրա անեծքը լայնորեն մեկնաբանվում է մամուլում: Տեղի սղության պատճառով, բերենք դրանցից միայն մեկը, որի հեղինակն է Վլադիմիր Լինդերմանը: Նա նշում է, որ Եվրոպային, որը սովոր է որևէ մեկին ամեն ինչում մեղադրել, չպետք է խղճալ, ընդգծելով, որ «Ոչնչացնելով Հարավսլավիան, Իրաքը, Լիբիան, Սիրիան և ուրքի հանելով գաղթականների հոսքը, նա ինքն ընտրեց ինքնառնչացման ուղին: Ծիծաղում էր իր կողմից ցինիկաբար ոչնչացրած Կադաֆիի նախագոյշա-

⁵⁹ Նիկոլայ Հովհաննիսյան-85, Երևան, 2017:

⁶⁰ Сбывается проклятие Каддафи, 31.08.2015, <http://www.segodnia.ru/content/165721>.

ցումների վրա, որը սակայն ճիշտ դուրս եկավ»⁶¹: Նա հույս է հայտնում, որ «գուցե մի օր, ամբարտավան և ինքնագոռ Եվրոպայի գերեզմանաքարի վրա որպես էպիթաֆիա կգրվեն Լիբիական Ջամահիրիայի հռչակված առաջնորդի անեծքի բառերը»⁶²:

Ուշագրավ է նաև Չեխիայի նախկին նախագահ Վացլավ Կլաուսի տեսակետը: Նա գտնում է, որ փախստականների ճգնաժամի պատճառը եվրոպական էլիտաները և կեղծ էլիտաներն են: Պետք է հստակ ընդունել, որ զանգվածային ներհոսքը դեպի Եվրոպա ոչ թե ԻՊ գործունեության կամ Մերձավոր Արևելքում տիրող քաոսի, այլ եվրոպական էլիտաների և կեղծ էլիտաների քաղաքականության արդյունքն է: ԱՄՆ-ի և Եվրոպական Միության մի մասի քաղաքականությունը նպաստել է մերձավորարևելյան տարածաշրջանի քայքայմանը: Կասկած չկա, որ ներգաղթը Եվրոպայում իրականացվող ահաբեկչական հարձակումների աղբյուր է: Եթե Եվրոպան վերջ ի վերջո խելքի չգա և անհրաժեշտ ու արդյունավետ փոփոխություններ չիրականացնի, մեր վիճակը վատ կլինի»⁶³:

1.6 Մերձավորարևելյան քաոսային իրադրությունը. հայությունն ու Հայաստանը

Արաբների պատմության ուսումնասիրությունն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հայերի համար: Արաբական երկրները Հայաստանի մերձավոր հարևաններն են և նրանք պատկանում են միևնույն՝ մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանին: Հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված է Արաբական Արևելքի պատմության հետ թե՛ Արաբական խալիֆայության շրջանում, թե՛ օսմանյան տիրապետության ժամանակ, երբ արաբները և հայերը գտնվում էին միևնույն սուլթանական դաժան լծի ներքո և դարձել էին բախտակից ժողովուրդներ, և թե՛ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ի մասնավորին հայոց ցեղասպանության ընթացքում, երբ արաբները, որոնց գլխին նույնպես կախված էր

⁶¹Сбывается проклятие Каддафи, 31.08.2015, <http://www.segodnia.ru/content/165721>.

⁶² Նույն տեղում:

⁶³Exclusive interview with Vaclav Klaus. EU elites aim to destroy European society as we know it, <http://valdaiclub.com/a/highlights/klaus-eu-elites-aim-to-destroy-europe/>.

ցեղասպանության իրական վտանգը, օգնության ձեռք մեկնեցին հայ տարագիրներին:

Արաբական Արևելքի երկրներում, առաջին հերթին Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Եգիպտոսում, Հորդանանում և այլն, հենց ի վեր գոյություն են ունեցել հայ համայնքներ, որոնք որոշակի ներդրում ունեն հյուրընկալ արաբական երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Նրանք, ըստ էության, կամրջի դեր են կատարում արաբական երկրների և Հայաստանի միջև:

Իսկ Հայաստանի անկախության նվաճումից հետո հայ-արաբական հարաբերությունները բարձրացվեցին միջպետական հարաբերությունների մակարդակի: Արաբական աշխարհը՝ մասնավորապես Արաբական Արևելքը, ռազմավարական, ինչպես նաև տնտեսական կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար, և հարաբերությունների սերտացումը նրանց միջև կամրապնդի Հայաստանի միջազգային դիրքերը և կնպաստի նրա տնտեսական զարգացմանը:

Մակայն այս բոլորի համար անհրաժեշտ է լավ իմանալ մեր հարևան և բարեկամ արաբ ժողովրդի ճշմարտացի պատմությունը:

Սույն ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկն էլ դա է:

Եվ վերջին հարցը: Ինչպե՞ս կարող է այս քառասյին փճակն անդրադառնալ հայության և Հայաստանի վրա: Պատասխանը մեկն է՝ խիստ բացասաբար: Հայությունն առաջին հարվածը ստացավ 2003 թ. Իրաք ամերիկյան ներխուժումից հետո, սակայն ամենածանր հարվածը նրանց հասցրեցին «Իսլամական պետության» ահաբեկիչները, որոնք գրավեցին Մոսուլ քաղաքն ու նրա շրջակայքը և սկսեցին հայ քրիստոնյաների դեմ հալածանքները: 2015 թ. մայիսի վերջերին Ն. Հովհաննիսյանը մասնակցելով Բաղդադում գումարված միջազգային գիտաժողովին՝ նվիրված հայոց ցեղասպանության հարյուրամյակին, հնարավորություն ունեցավ ավելի ճշգրիտ պատկերացում կազմել իրաքահայության մասին: Պարզվեց հետևյալը. Մոսուլում՝ հայության երբեմնի կենտրոնում, այլևս ոչ մի հայ չկա: Բասրայում, որտեղ մի ժամանակ բնակվում էր երեք հազարից ավելի հայ, այժմ մնացել է ընդամենը երկու հարյուր հայ, Քիրքուքում՝ 120 հայ, խիստ պակասել է Բաղդադի հայության թվաքանակը: Եվ եթե անցյալ դարավերջին Իրաքում բնակվում էր մոտ 20-25 հազար հայ, ապա այժմ մնացել է դրա մեկ երրորդը: Ահավոր վիճակում հայտնվեց նաև սիրիահայ համայնքը, որն անասելի կորուստներ կրեց: Շատ քիչ բան է մնացել նախկին բարգավաճ համայնքից, ավերվել են Հալեպը և այլ բնակավայրեր, շատ հալեպցի

հայեր հեռացել են Միդիայից, որոնցից մոտ 20 հազարը հաստատվել է Հայաստանում, զգալի թվով սիրիահայեր հաստատվել են նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում և այլ երկրներում: Արտագաղթի հետևանքով հայերի թիվը խիստ նվազել է նաև մերձավորարևելյան մյուս երկրներում: Եվ եթե ամփոփելու լինենք, ապա կարելի է ասել՝ Մերձավոր Արևելքը դադարել է սփյուռքահայության կենտրոնը լինելուց: Համանման վիճակում են հայտնվել նաև մյուս քրիստոնյա հարանվանությունները՝ ասորիները, կաթոլիկները, քաղղեացիները, հունաղավանները և այլն: Ասորական քրիստոնյա համայնքի ղեկավարներից մեկը՝ Կավան, Երևանում 2014 թ. գումարված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գումարած գիտաժողովում հայտարարեց, որ ամենվազն տասը տարի հետո Մերձավոր Արևելքում այլևս ոչ մի քրիստոնյա չի լինի⁶⁴:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա ոչ մի պետության էլ դուր չի գալիս, որ հարևան երկրներում այս կամ այն ծավալի ռազմական գործողություններ են ծավալվում, որոնք կարող են ընդլայնվել և լուրջ սպառնալիքներ ստեղծել, մասնավորապես, երբ դրանց շարքում է մի այնպիսի անկառավարելի արհեստածին պետություն, ինչպես «Իրաքի և Լևանտի Իսլամական պետություն-խալիֆայությունը»: Դա պահանջում է Հայաստանից շատ մեծ զգնություն, ստեղծված աննախադեպ իրավիճակի մասնագիտական խորը վերլուծություն և պահուստային ռազմավարական ու մարտավարական մշակված ծրագրերի առկայություն: Հակառակ դեպքում «Ի» գեն. Հայրենիքը վտանգի մեջ է» կոչը, ուշացած կլինի:

⁶⁴The Armenian Communities of the Middle East and Syria and their Perspectives, Yerevan, 2015, p. 46.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐ

«ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԹՈՒՆԻՍՏՈՒՄ,
ԼԻԲԵՐԱՅՈՒՄ ԵՎ ԵՄԵՆՈՒՄ2.1 «Արաբական գարունը» Թունիսում.
«Հասմիկների հեղափոխությունը»
(նախադրյալները, ընթացքն ու հետևանքները)

21-րդ դարի երկրորդ տասնամյակում Արաբական Արևելքում սկիզբ առած իրադարձությունները, որոնք, ինչպես արդեն նշել ենք, պատմության մեջ մտան «արաբական գարուն» անվամբ, փաստացիորեն սկիզբ առան հենց Թունիսից: Թունիսում սկսված համաժողովրդական հուզումները և դրանց հաջորդած 2011 թ. հունվարի 14-ի իշխանափոխությունը, որի արդյունքում նախագահ Ջին ալ-Աբիդին Բեն Ալին (1987-2011 թթ.) հրաժարվեց իշխանությունից, կրկին ստացան «Հասմիկների հեղափոխություն» անվանումը:

Նշենք, որ 1987 թ. նոյեմբերի 7-ին Թունիսում տեղի ունեցած հեղաշրջումը, երբ պետության հիմնադիր, Թունիսի երկարամյա առաջնորդ Հաբիբ Բուրգիբան (1956-1987 թթ.) հեռացվեց իշխանությունից, նույնպես հայտնի է «Հասմիկների հեղափոխություն» անվամբ: Ջինվորական հեղաշրջման կազմակերպիչը նախագահ Հ. Բուրգիբայի կողմից 1987 թ. հոկտեմբերի 2-ին երկրի վարչապետ նշանակված քաղաքական ու զինվորական գործիչ, գեներալ Ջին ալ-Աբիդին Բեն Ալին էր, ով նաև իշխող սոցիալիստական-դուսթուրիական կուսակցության գլխավոր քարտուղարն էր⁶⁵: Հղում անելով Թունիսի սահմանադրության 57-րդ հոդվածին, որը նախատեսում էր իշխանության փոխանցումն այն պարագայում, երբ նախագահը հիվանդության պատճառով ի գործու չէ կատարել իր պարտականությունները, Բեն Ալին հայտարարեց, որ իր վրա է վերցնում թե՛ նախագահի, և թե՛ իշխող կուսակցության առաջնորդի պարտականությունները: Նշվում էր, որ Թունիսի պատմության մեջ նոր

⁶⁵Гусаров В.И., Тунис: «Жасминная» революция-путь к стабильности?, Арабские страны западной Азии и Африки (новейшая экономика и политика), вып 3., Институт Востоковедения РАН, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 1998, с. 126.

փուլ է սկսվում⁶⁶:

Թունիսում ձևավորված նոր կառավարությունը բազմաթիվ բարեփոխումներ իրականացրեց թե՛ քաղաքական, և թե՛ սոցիալ-տնտեսական ոլորտներում, որոնց մի մասն առաջ էին քաշվել և մշակվել դեռևս Հ.Բուրգիբայի իշխանության տարիներին: Բեն Ալին Թունիսի զարգացման իր նոր հայեցակարգի հիմքում դրեց քաղաքական և տնտեսական համակարգերի ազատականացման, բազմազանության և պլուրալիզմի, քաղաքացիական հասարակության ձևավորման և ուղղորդված ժողովրդավարության մոդելի ստեղծման գաղափարները: Ծրագրի գործնական իրականացման ապացույցն էին՝ դատաիրավական ոլորտի բարեփոխումները (որոնք ուղեկցվեցին կանանց իրավունքների ընդլայնմամբ⁶⁷), կրթության համակարգի ապաքաղաքականացումը, քաղաքական կուսակցությունների գործունեության մասին նոր օրենքը և այլն:

1988 թ. իշխող կուսակցությունը վերանվանվեց «Ժողովրդավարական սահմանադրական միության» (ԺՄՍ) և ենթարկվեց որոշակի վերափոխումների թե՛ գաղափարական, թե՛ կառուցվածքային առումով⁶⁸: 1988 թ. նոյեմբերին ԺՄՍ-ն քաղաքական մի քանի կուսակցությունների հետ ստորագրեց «ազգային դաշինքը»: Դրանում անհրաժեշտ համարվեց ազգային միասնության հենքի վրա Թունիսում ժողովրդավարության զարգացումը⁶⁹: Ստեղծվեց որոշակիորեն ազատ դաշտ կուսակցությունների գործունեության համար:

1987 թ. դեկտեմբերի 31-ին Բեն Ալին համաներում հայտարարեց, որը նշանակում էր հրաժարվել Հաբիբ Բուրգիբայի իշխանության տարիներին բնորոշ հետապնդման քաղաքականությունից: Բանտերից ազատ արձակվեցին այլախոհության համար ձերբակալված հազարավոր մարդիկ՝ հասարակական-քաղաքական դաշտի, արհմիությունների

⁶⁶Гусаров В.И., *ibid.*, էջ 126.

⁶⁷Մանրամասն տե՛ս Ворончанина Н.И., Женский вопрос в странах Северной Африки на примере Алжира и Туниса, Арабские страны западной Азии и Африки (новейшая экономика и политика), вып. 3., Институт Востоковедения РАН, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 1998, с. 116-125.

⁶⁸Гусаров В.И., *ibid.*, էջ 126-127:

⁶⁹Зудина Л.П., «Вторая республика» в Тунисе. Либерализм и авторитаризм, Арабские страны западной Азии и Африки (новейшая экономика и политика), вып. 3., Институт Востоковедения РАН, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 1998, с. 147.

ներկայացուցիչներ, քաղաքացիական ակտիվիստներ, որոնց թվում՝ «Իսլամական ուղղության կուսակցության» (1989 թ. -ից «ան-Նահդա»-ի («Վերածննդի կուսակցության») 405 ներկայացուցիչ: Նախագահը ներում շնորհեց նաև Ռաշիդ Ղաննուշիին՝ կուսակցության հիմնադրին, որը տեղափոխվեց Մեծ Բրիտանիա: Վտարանդիության մեջ գտնվող բազմաթիվ թունիսցիներ վերադարձան հայրենիք⁷⁰:

1989 թ. ապրիլի 2-ին Թունիսում առաջին անգամ տեղի ունեցան նախագահական և խորհրդարանական ազատ ընտրություններ: 1974 թ.-ից հետո նախագահական ընտրություններ տեղի էին ունենում առաջին անգամ: Չայների ճնշող մեծամասնությամբ հաղթանակ տարավ Բեն Ալին: Իսկ երկրի օրենսդիր մարմնում («Մաջլիս ալ-նուաբ») հաղթանակած դուրս եկավ իշխող Ժողովրդավարական-սահմանադրական միությունը: «Իսլամական ուղղության կուսակցությունը» մասնակցեց «անկախ» պատգամավորների միջոցով և կարողացավ ստանալ 13 տոկոս⁷¹:

Հատկանշական է, որ չնայած հռչակված ժողովրդավարությանը և քաղաքական դաշտի որոշակի բազմազանությանը, Թունիսի իշխանությունները պետության աշխարհիկ բնույթը պահպանելու նպատակով փորձում էին քաղաքական գործընթացներից դուրս մղել և լուսանցքայնացնել իսլամական կրոնաքաղաքական ուժերին, առաջին հերթին «Իսլամական ուղղության շարժմանը», որի գործունեությունը նույնպես միտված էր քաղաքական դաշտի բազմազանությանը: Զգուշանալով իսլամամետ շարժումների ակտիվացումից՝ իշխանությունները փորձեցին պաշտոնական եզրափակությամբ բնորոշված «կրոնական մոլեռանդության» դեմ համախմբել և ուղղորդել թունիսյան հասարակությանը և աշխարհիկ քաղաքական դաշտին⁷²:

Մյուս կողմից, նախագահ Բեն Ալին մտավախություն ուներ, որ հարևան Ալժիրից մարտնչող իսլամիզմի և իսլամիստական ամենատարբեր հոսանքների ալիքը կարող է ներթափանցել և ապակայունացնել Թունիսի ներքաղաքական իրավիճակը⁷³:

Մինչդեռ ցանկացած անկայունություն Թունիսում ուղղակիորեն հարված էր զբոսաշրջությանը, որն ապահովում էր պետության եկա-

⁷⁰Зудина Л.П., նշվ.աշխ., էջ147:

⁷¹Նույն տեղում, էջ 152:

⁷²Նույն տեղում, էջ 144:

⁷³Նույն տեղում:

մուտների զգալի մասնաբաժինը⁷⁴։ Թունիսի հասարակական-քաղաքական գործիչ, տեսաբան Սադոկ Շաաբանը Մոսկվայում ռուսերենով հրատարակված իր գրքում նշում է, որ իսլամիստներն իրականում չեն հավատում ժողովրդավարությանը և այլակարծությանը, հետևաբար իշխանությունները պետք է փորձեն հակազդել իսլամիստներին, քանի որ նրանք խանգարում են ժողովրդավարության զարգացմանը և տեղ տան առողջ քաղաքացիական ընդդիմությանը⁷⁵։

Դրան զուգահեռ, նախագահ Բեն Ալիի ամեն կերպ աշխատում էր նպաստել երկրում իսլամական մշակույթի զարգացմանը «պաշտոնական իսլամի» շրջանակներում։ Նրա իշխանության գալուց ի վեր մինչև 1990-ականների վերջերը Թունիսում մոտ հազար նոր մզկիթ կառուցվեց⁷⁶։

Մյուս կողմից, տնտեսական ազատականացման շրջանակներում լայն հնարավորություններ ստեղծվեցին անհատ գործարարների ու անհատական նախաձեռնությունների համար։ Կրճատվեցին պետական ու մաքսային հարկերն ու տուրքերը, արտահանումն ազատվեց պետական վերահսկողությունից, սահմանվեց գների ազատականացում, զգալիորեն ամրապնդվեց ֆինանսական շուկան։ Արդյունքում, գրանցված տնտեսական աճի շրջանակներում, արդեն 1993 թ., նախորդ տարիների համեմատ, մոտ 1603-1708 ԱՄՆ դոլարի չափով մեծացան մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշները⁷⁷։ 1995 թ. նվազագույն աշխատավարձը 120 դինարից դարձավ 154։ Բեն Ալիի իշխանության գալուց հետո սոցիալական բնույթի լայնամասշտաբ ընդվզումներ մասնավորապես «հացի խռովություններ», գրեթե չարձանագրվեցին⁷⁸։ Ընդունված է այն տեսակետը, որ տնտեսական դաշտի զարգացումը շատ դեպքերում կապված էր նաև էկոնոմիկայի նախարար Մուհամմեդ Դաննուշիի անվան հետ։

1990-ականների կեսերից մասնավոր ոլորտում ներդրումները հասան ավելի քան հիսուն տոկոսի։ Ամփոփելով Բեն Ալիի նախագահության տասը տարիները՝ ուսումնասիրողները նշում էին, որ զգալի

⁷⁴Մանրամասն տե՛ս Robert A. Poirier, *Tourism and development in Tunisia*, http://www.climateaudit.info/data/mask/TREN/tourism%20cd/Annals_Tour_Res_1995_157.pdf.

⁷⁵Շաաբան С., «Тунис: путь к политическому плюрализму», М., 1996, с. 25, 21.

⁷⁶Зудина Л.П., *ibid.*, էջ 153:

⁷⁷Гусаров В.И., *ibid.*, էջ 127:

⁷⁸Նույն տեղում, էջ 128:

աշխատանք է տարվել մանր բուրժուազիայի զարգացման ուղղությամբ, որը դարձել է բուրժուազիայի ամենամեծ շերտը (ավելի քան 450 000 մարդ)՝ առաջ անցնելով միջին ու խոշոր բուրժուազիայից: Նպաստավոր դաշտ է ստեղծվել Թունիսում արտաքին և ներքին ներդրումների համար, զգալիորեն ընդլայնվել է ներդրումների ծավալը, աշխուժացել է արդյունաբերության ընթացքը⁷⁹:

Այսպիսով, Բեն Ալիի իրականացրած բարեփոխումների շնորհիվ հնարավոր եղավ հաղթահարել Հաբիբ Բուրգիբայի իշխանության մասնավորապես վերջին տարիներին ստեղծված ճգնաժամային իրավիճակը և որոշ չափով կայունացնել Թունիսի քաղաքական և սոցիալ-տնտեսական դաշտը՝ զրանցելով տնտեսական աճ: Թունիսում, այնուամենայնիվ, կար մի հարց, որը իշխանությունների համար լուրջ գլխացավանք էր, և որը կարող էր դառնալ հնարավոր սոցիալական ընդվզումների գլխավոր ու անվերապահ պատճառը, ինչը գործազրկությունն էր: 1980-ականների կեսերից մինչև 1990-ականների կեսերը Թունիսում պաշտոնապես հայտարարվել է մինչև 15,5 % գործազրկության մասին, սակայն 18-25 տարեկան երիտասարդների շրջանում այն շատ ավելի մեծ թիվ էր կազմում:

2010-2011 թթ. Թունիսում ծավալված հեղափոխական գործընթացները բնականաբար ունեին թե՛ քաղաքական, և թե՛ սոցիալ-տնտեսական նախադրյալներ: Համաժողովրդական ընդվզումը, ըստ էության, ուղղված էր նախագահ Ջին էլ-Աբիդդին Բեն Ալիի երկարամյա քսաներեքամյա, կառավարման դեմ: Փաստ է, որ «Հասմիկների հեղափոխության» ամենակարևոր ու վճռորոշ նախադրյալներից մեկը, ըստ էության, գործազրկությունն էր, որը շարունակում էր մնալ երկրի ամենացավոտ խնդիրներից մեկը⁸⁰: Պատահական չէ, որ Թունիսում երիտասարդները դարձան հակակառավարական հուզումների հիմնական շարժիչ ուժը:

Ինչպես արաբական այլ երկրներում, Թունիսում նույնպես գործազուրկների հիսուն տոկոսից ավելին երիտասարդներն էին, մասնավորապես ԲՈՒՀ-երի շրջանավարտները, այսինքն բարձրագույն կրթություն ունեցողները⁸¹: Խնդիրը ցավոտ էր նաև ծնողների համար, ովքեր

⁷⁹Зудина Л.П., *ibid.*, էջ 145:

⁸⁰Леонов Г. А., Кузнецов Н. В., Кудряшова Е. В., Тунис 2011–2014. Бифуркация, революция и управляемая стабилизация, Вестник СПбГУ, Сер. 10, 2016, вып. 4, <http://vestnik.spbu.ru/html16/s10/s10v4/09.pdf>.

⁸¹Филатов С., Тунисский бунт. Бессмысленный и беспощадный, Русский обзор

իրենց զավակների ուսման վրա զգալի գումարներ էին ծախսել, բայց վերջիններս չէին կարողանում աշխատանք գտնել: Հարկ է նշել նաև, որ Թունիսում կրթության որակը չէր համապատասխանում միջազգային չափորոշիչներին: Այսինքն՝ բարձրագույն կրթություն ստացած շրջանավարտները չէին կարող գտնել լավ վարձատրվող աշխատանքներ համապատասխան որակավորում չունենալու պատճառով: Մյուս կողմից, Թունիսում կրթությունն իրականացվում էր արաբերեն և ֆրանսերեն, իսկ միջազգային շուկայում պահանջարկ ունեին առաջին հերթին անգլերեն իմացող մասնագետները, չնայած Թունիսում կրթություն ստացած երիտասարդները շատ դեպքերում աշխատանք էին գտնում Ֆրանսիայում: Սակայն հեղափոխությունից առաջ Ֆրանսիայում նույնպես նկատվում էր աշխատաշուկայի լճացում⁸²:

Թունիսում կային այլ խնդիրներ ևս, որոնք կապված էին սոցիալական արդարության, հովանավորչության, կոռուպցիայի, աշխատավարձերի և եկամուտների ընդհանուր ցածր ցուցանիշների, երկրի շրջանների անհամաչափ զարգացման հետ: Բացի այդ, Թունիսում տնտեսության մի շարք ոլորտներ մոնոպոլիզացված էին, որի մեջ ներգրավված էր նախագահի ընտանիքը և նրան մոտ կանգնած այլ ընտանիքներ: Թունիսյան հասարակության համար դժգոհության առիթ էր Բեն Ալիի, նրա կնոջ՝ Լեյլայի, նրանց մերձավորների ճոխ ապրելակերպը⁸³:

Ամեն պարագայում, արդյոք վերը նշված խնդիրները, որոնք բնորոշ էին աշխարհի պետությունների մեծ մասին, կարող էին Թունիսում առաջ բերել հեղափոխություն: Միջազգային ամենահեղինակավոր կազմակերպություններից մեկի՝ «The Sustainable Society Foundation»-ի հրապարակած «Հասարակության կայունությունների ինդեքսում (2008-2012)» (The Sustainable Society Index 2008-2012) Թունիսը, միջինացված տվյալներով, Չինաստանի հետ զբաղեցնում էր 80-րդ հորիզոնականը, այն դեպքում, երբ Ռուսաստանը, Ուկրաինան և ԱՄՆ-ը, զբաղեցնում էին 96-րդ հորիզոնականը⁸⁴:

Թունիսի կառավարության օգտին էր խոսում նաև տարեկան մոտ

ревателъ, 21/01/2011, <http://www.rus-obr.ru>.

⁸² Леонов Г. А., Кузнецов Н. В., Кудряшова Е. В., նշվ. աշխ., էջ 95-96:

⁸³ Sudarsan Raghavan, In Tunisia, Luxurious Lifestyles of a Corrupt Government, Washington Post, January 28, 2011.

⁸⁴ Леонов Г. А., Кузнецов Н. В., Кудряшова Е. В., նշվ. աշխ., էջ 94-95:

5 տոկոս կայուն աճի ցուցանիշը⁸⁵։ Հստ այդ՝ 2004-2009 թթ. Թունիսում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշները 3.5000 թունիսյան դինարից (2.7000 ԱՄՆ դոլլար) բարձրացան մինչև 5000 թունիսյան դինար (3.9000 ԱՄՆ դոլլար)։ Եթե 1984 թ. բնակչության 14 տոկոսն ապրում էր աղքատության ամենացածր շեմին, ապա 2010 թ. այդ ցուցանիշը կրճատվեց 3.8 տոկոսով։ 2011 թ. հեղափոխությանը նախորդող շրջանում շոշափելի կերպով բարձրացավ կյանքի միջին տևողությունը հասնելով 75-ի⁸⁶։

Չնայած նշված փաստերին, որոնք կառավարության որոշակիորեն արդյունավետ աշխատանքի օգտին էին խոսում, այնուամենայնիվ, թունիսյան հասարակության համար փաստացիորեն կային խնդիրներ, որոնք ցավոտ էին ընկալվում։ Գործազրկությունից բացի, դա առաջին անհրաժեշտության ապրանքներն էին, մասնավորապես՝ հացը, որոնց թանկացումը նույնպես հղի էր սոցիալական ընդգվումների հետանկարով։ Հիշենք Թունիսի ամենահայտնի «հացի խոռվությունը», որը տեղի ունեցավ 1984 թ., երբ սննդամթերքի գները թանկացան, հացի գինը բարձրացավ երեսուն տոկոսով։ Թե՛ մայրաքաղաքում, և թե՛ շրջաններում տեղի ունեցած ցույցերի և հանրահավանքների արդյունքում նախագահ Հաբիբ Բուրգիբան չեղարկեց թանկացումները⁸⁷։ Եվ ահա, 2010 թ. վերջերին կառավարությունը հայտարարեց առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացման մասին, որը կապ ուներ 2008 թ.-ից միջազգային շուկայում լայն սպառման ապրանքների թանկացման հետ⁸⁸։

Հեղափոխության նախադրյալները հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել նաև քաղաքական համակարգին բնորոշ իրողությունները։ Արդյոք Թունիսը հեղափոխության նախօրեին ժողովրդավարական երկիր էր այնպես, ինչպես հռչակել էր Բեն Ալին առաջին «Հասմիկների հեղափոխությունից» հետո։ Իրականում, Թունիսին բնորոշ էր պետության ավտորիտար բնույթը՝ այսպես կոչված վերահսկելի ժողովրդավարությամբ, որի ապացույցը քաղաքական դաշտի որոշակիորեն իմիտացիոն բազմազանությունն էր։ Թունիսյան տիպի քաղա-

⁸⁵ Նույն տեղում։

⁸⁶Global Food Markets Group. U. K. Government. The 2007/08 Agricultural Price Spikes: Causes and Policy Implications, London, 2008, <http://www.growthenergy.org/images/reports>.

⁸⁷Филатов С., նույն տեղում։

⁸⁸Global food markets group, նույն տեղում։

քական համակարգերը ռուս արևելագետ Ա. Վասիլևը բնորոշում է որպես «լուսավորչական ավտորիտարիզմ», երբ ավտորիտար իշխանությունն իրականացնում է սահմանափակ ժողովրդավարություն, հարգում մարդու իրավունքները՝ ապահովելով սոցիալ-տնտեսական զարգացում: Ժողովրդավարության հարցում իրականացվող սահմանափակումները նպատակ ունեն ստեղծել նպաստավոր պայմաններ պետության ու հասարակության զարգացումն ապահովելու համար⁸⁹: Հստակ է, որ փաստացի և իրական ժողովրդավարությունը Թունիսում կարող էր հանգեցնել իշխանափոխության: Ինչպես նախկինում՝ այլախոհությունը շարունակում էր հետապնդվել: Թունիսի բազմաթիվ հասարակական-քաղաքական գործիչներ, գործարարներ, մտավորականներ գտնվում էին վտարանդիության մեջ: Պատահական չէ, որ 2010 թ. ժողովրդավարության ինդեքսներում Թունիսը զբաղեցնում է ոչ այդքան նպաստավոր 144-րդ տեղը⁹⁰:

Այնուամենայնիվ, զանգվածային հուզումների համար խթան դարձավ 2010 թ. դեկտեմբերի 17-ին Թունիսի Միդի Բուզիդ քաղաքի քաղաքապետարանի մոտ քսանվեցամյա փողոցային մանրավաճառ Մոհամմեդ Բուազիզի ինքնահրկիզման փաստը: Նա այդ քայլին էր դիմել այն բանից հետո, երբ ոստիկանության կին ներկայացուցիչը նրան արգելել էր փողոցում վաճառք իրականացնել համապատասխան թույլտվություն չունենալու պատճառով և առգրավել էր նրա բանջարեղենը, վիճաբանել նրա հետ⁹¹: Բուազիզին փորձել էր հետ ստանալ առգրավված բանջարեղենը, բայց նրան մերժել էին: Ինքնահրկիզմամբ վերջինս բողոքում էր ոստիկանության կամայականությունների և գործադրության դեմ:

Արդեն դեկտեմբերի 24-ին Բուազիզիի հայրենի Մենզել Բուզայան քաղաքում ոստիկանության գործողությունների դեմ կազմակերպված ցույցի մասնակիցների թիվը հասավ երկու հազարի: Որպես բողոքի նշան ցուցարարները հարձակվում էին ոստիկանության բաժանմունքների և տարբեր վարչական շենքերի վրա, հրահրում անկարգություններ: Մենզել Բուզայանում սկիզբ առած հուզումները ցրելու համար

⁸⁹Васильев А.М., Гражданское общество в Африке: реалии и мифы, «Восток», М., 1995, № 2, с. 14.

⁹⁰Democracy Index 2010, https://graphics.eiu.com/PDF/Democracy_Index_2010_web.pdf.

⁹¹Иванов С. М., «Арабская весна»: год спустя, 07.02.2012, Институт Ближнего Востока <http://www.iimes.ru/?p=14121>.

Միդի Բուզիդից ուղարկվեցին ոստիկանական ստորաբաժանումներ: Ոստիկանները կրակ բացեցին ցուցարարների վրա: Մահացավ 18 տարեկան մի ցուցարար, մոտ տասը մարդ վնասվածքներ ստացավ և տեղափոխվեց հիվանդանոցներ: Մենզել Բուզայանում հայտարարվեց պարետային ժամ⁹²:

Դեկտեմբերի 28-ին նախագահ Բեն Ալին հիվանդանոցում այցելում է Մոհամմեդ Բուազիզին, որը հունվարի 4-ին ստացված այրվածքներից մահանում է Բեն Արուսի այրվածքաբանության հիվանդանոցում⁹³, ինչն էլ ավելի է նպաստում համաժողովրդական հուզումների ընդլայնմանը: Նշենք, որ մինչ այդ թե՛ Թունիսում, թե՛ արաբական աշխարհում տեղի էին ունեցել ինքնահրկիզման բազմաթիվ դեպքեր, սակայն միայն Բուազիզի ինքնահրկիզումը նման լայնածավալ գործողությունների պատճառ դարձավ:

Արդեն հունվար ամսից բողոքի և ընդվզումների ալիքը դուրս եկավ Մենզել-Բուզայանից և տարածվեց ամբողջ երկրով մեկ՝ ուղեկցվելով աննախադեպ անկարգություններով: Թունիսի տարբեր քաղաքներում և գյուղաքաղաքներում սկսեցին տեղի ունենալ բազմամարդ հանրահավաքներ և ցույցեր, որոնք ուղեկցվում էին անվտանգության աշխատակիցների և իշխանության ներկայացուցիչների հետ սուր բախումներով, ինչպես նաև պետական-վարչական հաստատությունների և շենքերի, այդ թվում՝ իշխող կուսակցության, դեմ ուղղված հարձակումներով: Ցուցարարներն այրում էին ոստիկանական ավտոմեքենաներ, անվադողեր, օգտագործում «մոլոտով կոկտեյլներ» և այլն: Բացի երիտասարդներից, ժողովրդական հուզումներին մասնակցում էին ամենատարբեր սոցիալական շերտերի, այդ թվում՝ արհմիությունների ներկայացուցիչներ: Բողոքի գործողությունները, որոնք որոշ դեպքերում խաղաղ բնույթ էին կրում, որոշ դեպքերում վերածվում անկարգությունների, որպես կանոն ցրվում էին ոստիկանության կողմից: Շատ դեպքերում ոստիկաններն անհամաչափ ուժ էին կիրառում ցուցարարների նկատմամբ, կրակ բացում կամ ծեծի ենթարկում մասնակիցներին:

Ամենակատաղի ցույցերը սկզբնական շրջանում տեղի ունեցան

⁹²Նույն տեղում:

⁹³Rania Abouzeid, Bouazizi: The Man Who Set Himself and Tunisia on Fire, 21, 01, 2011, <http://content.time.com/time/magazine/article/0,9171,2044723,00.html>.

Թունիսի երեք քաղաքներում՝ Կասերինում, Թալայում և Ռեգաբում: Հիշատակության արժանի է հատկապես հունվարի 3-ին Միդի Բուզիդի իրադարձություններին որպես գորակցություն կազմակերպված Թալայի ցույցը, որին մասնակցեցին 200 000 ցուցարարներ, հիմնականում երիտասարդներ: Այն նույնպես բռնի ձևով ցրվեց ոստիկանության կողմից: Հանրահավանքերի և ցույցերի կազմակերպման հարցում մեծ դեր խաղացին սոցիալական ցանցերը, մասնավորապես՝ Twitter-ը և Facebook-ը⁹⁴: ՄԱԿ-ի տվյալներով՝ անկարգությունների ողջ ընթացքում Թունիսում մահացել է 219 մարդ, վիրավորվել 510-ը: Պետությանը հասցված նյութական վնասը հաշվվում է 1.6 միլիարդ եվրո⁹⁵:

Հունվարի 10-ին ազգային հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Թունիսի նախագահ Բեն Ալին՝ ահաբեկիչներ որակելով անկարգությունների մասնակիցներին: Նա խոստացավ նոր աշխատատեղեր բացել, նշեց, որ ընդվզումները կարող են վնասել Թունիսի շահերը ներդրողների և զբոսաշրջության տեսանկյունից: Հայտարարվեց Թունիսում դայրոցների և համալսարանների ժամանակավոր փակման մասին⁹⁶:

Հասարակական անհանգստություններն իրենց կիզակետին հասան հունվարի 13-ին, երբ երկրի մայրաքաղաքում և մեծությամբ երկրորդ Մֆաքս քաղաքում տեղի ունեցան բազմահազարանոց հակակառավարական ցույցեր: Ստեղծված ճգնաժամային իրավիճակում նախագահ Բեն Ալին հայտարարեց, որ լուծարում է կառավարությունը, հայտարարեց արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասին: Նա խոստացավ գների ցածրացում, պայքար կոռուպցիայի և գործազրկության դեմ⁹⁷: Մակայն 2011 թ. հունվարի 14-ին Բեն Ալին 23 տարի երկիրը ղեկավարելուց հետո հրաժարվեց իշխանությունից և փախուստի դիմեց Սաուդյան Արաբիա:

2011 թ. հունվարի 15-ին Թունիսի Ազգային ժողովի նախագահ Ֆուադ Մրագան Թունիսի սահմանադրության համաձայն ստանձնում է նախագահի ժամանակավոր պարտականությունները: Ըստ սահմանադրության, նա պարտավոր էր 60 օրվա ընթացքում կազմակերպել նախագահական ընտրություններ: Երկրի վարչապետ նշանակվեց Էկո-

⁹⁴Beaumont Peter, The truth about Twitter, Facebook and the uprisings in the Arab world, 25 Feb. 2011, <https://www.theguardian.com>.

⁹⁵Иванов С. М., նույն տեղում:

⁹⁶Bilal Randeri, Tunisian leader promises new jobs, 10, January, 2011, <http://www.al-jazeera.com>.

⁹⁷Президент Туниса отправляет правительство в отставку, 14.01.2011, <https://ria.ru>.

նումիկայի նախկին նախարար Մուհամմեդ Ղաննուշին, որն էլ ձևավորում է ժամանակավոր կառավարություն: Շատ չանցած՝ երկրում անվտանգության համակարգը դուրս է գալիս վերահսկողությունից: Ակտիվանում են քրեածին խմբավորումները: Փախուստի դիմած նախագահի պալատը թալանվում է: Ժամանակ առ ժամանակ բախումներ են տեղի ունենում ռազմաքաղաքական տարբեր խմբավորումների միջև: Ստեղծված իրավիճակում Թունիսում քրեական տարրերից պաշտպանվելու նպատակով ստեղծվում են ժողովրդական ջոկատներ⁹⁸:

Նոր կառավարությունը, որի մաս կազմեցին մի շարք նախկին նախարարներ, հայտարարեց, որ վարելու էր ազատական քաղաքականություն բոլոր ուղղություններով⁹⁹: Նախկին նախագահի 33 ազգակիցներ բանտարկվեցին: Քնություն սկսվեց կոռուպցիայի բացահայտման և երկրին վնաս հասցնելու ուղղությամբ¹⁰⁰:

Ժամանակավոր կառավարության ստեղծումը սակայն չհանդարտեցրեց իրավիճակը Թունիսիում: Հասարակական-քաղաքական տարբեր շրջանակների ներկայացուցիչներ պահանջեցին, որպեսզի կառավարության՝ նախորդ իշխանության ներկայացուցիչները հրաժարական տան: Ժամանակավոր կառավարությունը, փաստորեն, ձախողվեց: Հրաժարական տվեցին նախորդ վարչակարգի բոլոր նախարարները, այդ թվում՝ Մուհամմեդ Ղաննուշին: Մինչև համազգային ընտրությունները Թունիսն անցավ բարդ ու խրթին, բավական երկար մի ժամանակաշրջան՝ շարունակական ցույցերով, հանրահավաքներով, բռնության ակտերով, որոնք ուղեկցվում էին բազմաթիվ զոհերով:

Հեղափոխությունից ինն ամիս անց՝ հոկտեմբերի 23-ին, Թունիսում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում «ան-Նահդան» հաղթանակ տարավ¹⁰¹: Նշենք, որ 2011 թ. հունվարի 30-ին 22 տարի վտարանդիության մեջ ապրած Ռաշիդ Ղան-

⁹⁸В Тунисе создаются отряды самообороны по защите от грабителей и погромщиков, 16.01.2011, <https://www.1tv.ru>.

⁹⁹В Тунисе провозглашена свобода информации, 18.01.2011, <https://www.rbc.ru/rbcfreenews/20110118053456.shtml>.

¹⁰⁰Экс-президент Йемена Салех получил судебный иммунитет, Новая газета 21.01.2012, <https://www.novayagazeta.ru/news/2012/01/21/53259-eks-prezident-yemena-saleh-poluchil-sudebnyy-immunitet>.

¹⁰¹«Ան-Նահդայի» մասին մանրամասն տե՛ս Wael Derki, Tunisia's Annahda. Towards a Genuine Modernist Arab Islamism?, Political Sciences and Public Affairs, 2015, 3/2.

նուշին Լոնդոնից վերադարձավ Թունիս և ներգրավվեց քաղաքական գործընթացների մեջ: «Ան-Նահդան» անցումային խորհրդարանի 217 տեղերից զբաղեցրեց 89-ը (մոտ 41 տոկոս)¹⁰²: Հաջորդ տեղերը զբաղեցրեցին ձախակողմյան ուղղվածությամբ «Հանրապետական կոնգրեսը» (29 մանդատ), «Ազգային պետիցիան» (26 մանդատ) և «Աշխատանքի և ազատության ժողովրդավարական ֆորումը» («Էթաքաթուլ») (20 մանդատ): «Ան-Նահդան» դաշինք կնքեց քաղաքական ազգային ուժերի հետ¹⁰³: Նորընտիր խորհրդարանը 2011 թ. դեկտեմբերի 12-ին անցումային շրջանի նախագահ ընտրեց միասնական թեկնածու Մուհսիֆ Ալ-Մարգուլիհին, ով դեկտեմբերի 14-ին անցումային շրջանի վարչապետ նշանակեց «Ան-Նահդայի» գլխավոր քարտուղար Համադի Ջեբալիին¹⁰⁴:

Թունիսում ազատ ընտրությունների և այդքան ակտիվ մասնակցության փաստն աննախադեպ էր: Աշխարհիկ երկիր համարվող Թունիսում ընտրությունը կանգ առավ չափավոր իսլամամետ «ան-Նահդայի» վրա: Կուսակցության առաջնորդը՝ Ղաննուշին, մինչ այդ թունիսյան հասարակությանը շատ պարզ հասկացնել տվեց, որ իշխանության գալու դեպքում իրենք չեն ձգտելու ստեղծել շարիաթական պետություն, այլ նախապատվությունը տալու են թուրքական մոդելին՝ եզրեր փնտրելով իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության վարած քաղաքականության հետ, ինչը ենթադրում էր բազմակարծություն, բազմակուսակցություն, տնտեսության զարգացում և այլն¹⁰⁵: Ղաննուշին նույնիսկ նշեց, որ համագործակցելու է քաղաքական և քաղաքացիական ուժերի հետ՝ թունիսը օրենքի պետություն դարձնելու համար¹⁰⁶:

«Ան-Նահդան» կարողացավ շատ ճկուն դիսկուրս վարել՝ որոշակիորեն փոխելով գաղափարական շեշտադրումները: Նա սկսեց քննադատել կրոնաքաղաքական պահպանողական և արմատական ուժերին,

¹⁰²Մանրամասն տե՛ս Anna Mahjar-Bardussi, December 16, 2011, Inquiry & Analysis Series Report No. 774, <http://www.memri.org>.

¹⁰³Թունիսի քաղաքական կուսակցությունների և ընտրությունների մասին մանրամասն տե՛ս A Guide to the Tunisian Elections, October, 2011, <http://pomed.org/wp-content/uploads/2011/10/Tunisian-Election-Guide-Oct-2011.pdf>.

¹⁰⁴Փաշայան Ա., «Քաղաքական իսլամը» արաբական գարնան համատեքստում, Ժամանակակից Եվրասիա, հատոր III (1), Եր., 2014, էջ 31:

¹⁰⁵Profile. Tunisia's Ennahda Party, 25 October 2011, <http://www.bbc.co.uk>.

¹⁰⁶What role for the Islamists?, Al-Ahram weekly online, 27 January – 2 February 2011 Issue No. 1033, <http://weekly.ahram.org.eg/Archive/2011/1033/re132.htm>.

աջակցություն հայտնել ժողովրդավարական արժեքներին ու մարդու հիմնարար իրավունքներին հավաստիացնելով, որ գիտակցում է շարիաթականացման ոչ շահեկան հետևանքները երկրի հիմնական եկամուտներն ապահովող զբոսաշրջության զարգացման համար: Ղաննուշին հայտարարեց, որ ընտանեկան օրենսգիրքը կհենվի շարիաթի վրա, սակայն կարգելվի բազմակնությունը, դպրոցներում հիջաբի արգելք գոյություն չի ունենա, կնոջ և տղամարդու միջև կհաստատվի հավասարություն, շարիաթով ամրագրված քարկոծումը և անդամահատումը չեն դիտարկվի որպես պատժամիջոցներ և այլն¹⁰⁷:

Հատկանշական է, որ նույնիսկ չափավոր հայացքներ որդեգրած «ան-Նահդայի» հաղթանակը որոշակի մտահոգություն ստեղծեց Թունիսի աշխարհիկ հասարակության շրջանակներում: Ասվածի ապացույցն այն բուռն և բացասական արձագանք էր, որ հաջորդեց կուսակցության գլխավոր քարտուղար, իսկ հետագայում վարչապետ Համադ Ջեբալիի՝ «Վեցերորդ խալիֆայության» (հինգերորդն օսմանյանն էր, որը կործանվեց 1924 թ.-ին) դարաշրջան սկսելու մասին արված հայտարարությունը, որով նկատի էր առնվում Թունիսը: Հասարակության ազատական և աշխարհիկ շերտերի մտահոգությունը փարատելու համար հետագայում թե՛ «ան-Նահդայի», թե՛ իշխող դաշինքի մաս կազմող ուժերի կողմից հնչած գնահատականը համարվեց թյուրըմբռնում¹⁰⁸:

Հարկ է նշել, որ Թունիսում հեղափոխությունից և իսլամամետների իշխանության գալուց հետո երկրում կայունությունը չվերականգնվեց: Թունիսում մի կողմից աննախադեպ ակտիվացան սալաֆիական խմբավորումներն ու շարժումները, որոնք սկսեցին կոշտ ձևով պայքարել Թունիսը շարիաթական պետություն դարձնելու համար¹⁰⁹: Մյուս կողմից մեծ թափ ստացան աշխարհիկ հենք ունեցող քաղաքացիական շարժումները: 2013 թ. փետրվարի 6-ին աշխարհիկ ընդդիմադիր գործիչ Բելաիդ Շուքրիի սպանությունից հետո Թունիսում սկիզբ առան հակակառավարական նոր ցույցեր, որոնց արդյունքում փետրվարի 19-ին Ջեբալին հրաժարական տվեց: Ի վերջո, ազգային երկխոսության արդյունքում 2014 թ. հունվարին իշխող դաշինքի և ընդդի-

¹⁰⁷Rajaa Basly, The Future of al-Nahda in Tunisia, April 20, 2011, <http://carnegieendowment.org/sada/43675>.

¹⁰⁸Ennahda Discourse: The Sixth Caliphate or Misunderstanding?, 16 November, 2011, <http://www.tunisia-live.net>.

¹⁰⁹Tunisia's Nahda-led government takes on the Salafist challenge, 20 March, 2013, <https://www.middleeastmonitor.com>.

մադիրների միջև համաձայնություն ձեռք բերվեց: Գործող իշխանությունը, որպես զինուժ, իր լիազորությունները փոխանցեց արհեստավարժների կառավարությանը: Անցումային շրջանի նոր վարչապետ դարձավ արդյունաբերության նախարար Մեհդի Ջոման¹¹⁰:

Այսպիսով, ինչպես արդեն նշել ենք, հենց Թունիսում բարձրացված բողոքի ալիքն էր, որ հետագայում տարածվեց Եգիպտոսում, Լիբիայում, Եմենում, Ալժիրում, Հորդանանում, Բահրեյնում, Սաուդյան Արաբիայում, Քուվեյթում և այլն: Այս տեսանկյունից, «արաբական գարնան» գործընթացների համատեքստում Թունիսի դերը խիստ հանգուցային էր: Հարկ է նշել, որ Թունիսում, իսկ հետագայում Եգիպտոսում իշխանության եկան կամ իշխանության մաս կազմեցին իսլամամետ ուժերը, որոնք, սակայն, չկարողացան արդարացնել հասարակության սպասումները: Թունիսյան հեղափոխությունից հետո իշխանությունը Թունիսում բազմաթիվ ցնցումների ու վայրիվերումների ենթարկվեց, մի շարք կառավարություններ փոխվեցին, զգալի թվով չլուծված հարցեր մնացին: Հեղափոխությունից յոթ տարի անց, ուսումնասիրելով Թունիսում ընթացող արդի գործընթացները, հանգում ենք այն եզրակացության, որ հեղափոխությունն, ընդհանուր առմամբ, չարդարացրեց թունիսցիների սպասումները: Չլուծված մնացին ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական ոլորտի մի շարք հարցեր, առաջին հերթին գործազրկությունը: Թունիսում հասարակության առանձին շերտեր կորցրեցին հավաստի դրական և հիմնարար փոփոխությունների հարցում¹¹¹: Հատկանշական է նաև, որ հակակառավարական իուզումներն ու ցույցերը Թունիսում շարունակվեցին նաև «Համիկների հեղափոխությունից» հետո¹¹²: Թե քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական ոլորտի բազմաթիվ խնդիրներ Թունիսում շարունակվում են չլուծված մնալ: Դրանցից, ինչպես արդեն նշել ենք, մասնավորապես գործազրկությունը կառավարության առաջ ծառացած ամենաբարդ խնդիրներից մեկն է¹¹³:

¹¹⁰Tunisia PM Ali Larayedh hands over to Mehdi Jomaa, January, 2014,

<http://www.bbc.co.uk>.

¹¹¹The Geographic Trajectory of Conflict and militancy in Tunisia,

<http://carnegieendowment.org>.

¹¹²Tarek Amara, Five years on, unrest tests of Arab Spring model Tunisia,

<https://www.reuters.com>.

¹¹³Violence flares after Tunisians rally to mark revolution's anniversary, 14 Jan, 2018,

<https://www.theguardian.com>.

2.2 «Արաբական գարունը» Լիբիայում. արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը Մուամմար Կադաֆիի իշխանափոխության հարցում

1969 թ. սեպտեմբերի 1-ին Լիբիայում «Ազատ սպաները» ի դեմս Մուամմար Կադաֆիի և նրա կողմնակիցների կազմակերպեցին անարյուն հեղափոխություն: Միապետությունը Լիբիայում տապալվեց, Բողոքաբանական թագավորը գահընկեց եղավ, իշխանությունն անցավ Հեղափոխական հրամանատարության խորհրդին (ՀՀԽ): Հռչակվեց Լիբիայի Արաբական Հանրապետությունը: Հայտարարվեց, որ հեղափոխության նպատակն էր կառուցել հեղափոխական, սոցիալիստական և առաջադիմական Լիբիա, որը կապաքարեր իմպերիալիզմի, ռասայական խտրականության, սոցիալական ճնշման և անարդարության դեմ¹¹⁴: ՀՀԽ-ն 1969 թ. սեպտեմբերի 8-ին Մ. Կադաֆիին շնորհեց գնդապետի աստիճան և նշանակեց Լիբիայի ռազմական ուժերի գլխավոր հրամանատար¹¹⁵:

Իշխանությունները Լիբիայում ձեռնարկեցին քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտի մի շարք բարեփոխումներ, որոնք միտված էին երկրում իրավիճակի բարելավմանը: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքական ոլորտին, ապա Լիբիան ձգտում էր ինքնուրույնության: Պատահական չէ, որ Լիբիայի նոր ձևավորված կառավարությունը պաշտոնապես դիմեց ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային՝ պահանջելով հանել Լիբիայից իրենց ռազմական բազաները: Չնայած ձեռնարկված քայլերին միապետության տապալումից հետո նոր իշխանությունների գործունեությունն արդյունավետ չէր: Որպես հեղափոխության առաջնորդ՝ Կադաֆիի առջև կանգնած էր Լիբիայի պետական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրթական և մշակութային համակարգն արմատապես փոխելու խնդիրը:

1970-ականների առաջին կեսին Կադաֆին, պահպանելով պետության առաջնորդի և զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնները, գործնականում չունեւ քաղաքական և վարչական պարտականություններ¹¹⁶: Նա ձեռնամուխ եղավ «Երրորդ համաշխարհային տեսության» հիմնադրույթների մշակմանը և դրանք ներկայացրեց 1976-

¹¹⁴Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Եր., էջ 710-715:

¹¹⁵Նույն տեղում, էջ 718:

¹¹⁶Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Եր., էջ 730:

1979 թթ. լույս տեսած իր «Կանաչ գրքում»¹¹⁷, որն ընկավ Ջամահիրիայի քաղաքական, տնտեսական և հասարակական համակարգի զարգացման հիմքում: 1977 թ. Լիբիայի Արաբական Հանրապետությունը վերանվանվեց Լիբիական Արաբական Ժողովրդական Մոցիալիստական Ջամահիրիայի¹¹⁸: Պետությունը շարունակեց բարեփոխումների իր քաղաքականությունը:

Շնորհիվ նավթից ստացվող եկամուտների կտրուկ աճի՝ Ջամահիրիայի ղեկավարությունը հետևողականորեն վարում էր ժողովրդի դրության բարելավման քաղաքականություն: Մոտ երկու անգամ բարձրացվեց նվազագույն աշխատավարձը, մեծ թափ ստացավ բնակարանային շինարարությունը, հողագուրկ և սակավահող շատ գյուղացիներ ապահովվեցին հողակտորներով, անգամ նրանց տրվեցին պետության կողմից կառուցված ֆերմերական ագարակներ: Մեծ ուշադրություն դարձվեց կրթության կազմակերպմանը և անգրագիտության վերացմանը, որի համար ստեղծվել էին միանգամայն մատչելի պայմաններ: Ջամահիրիայի իշխանությունների ուշադրության կենտրոնում էին նաև առողջապահության հարցերը, այդ թվում՝ գյուղական վայրերում: Լուծվում էր նաև ազգային մասնագետների պատրաստման հարցը: Լիբիայի տնտեսության գլխավոր ճյուղը շարունակում էր մնալ նավթարդյունաբերությունը: Վերոնշյալ քայլերը վկայում էին, որ Ջամահիրիայի ղեկավարությունը հավատարիմ էր «Տունը պետք է պատկանի նրան, ով այնտեղ ապրում է» սկզբունքին¹¹⁹:

Միևնույն ժամանակ, Լիբիայում, արաբական մյուս երկրների նման կային համակարգային խնդիրներ, ինչպես օրինակ՝ երիտասարդների շրջանում գործազրկության բարձր ցուցանիշը, խոսքի ազատության բացակայությունը, մարդու իրավունքների սահմանափակումները, սոցիալական երկփեղկվածությունը, միջին դասի գոյության հետ առնչվող խնդիրները և այլն:

Պատահական չէ, որ «արաբական գարունը» շրթայական ձևով տարածվեց նաև Լիբիայում: Առաջին զանգվածային ելույթներն ու ըմբոստությունները Լիբիայում սկսվեցին 2011 թ. փետրվարի 15-ին հիմնականում Բենգազի քաղաքում, որտեղ ձերբակալվեց մարդու իրավունքների պաշտպան Ֆեթհի Թարբեյը, ինչը առիթ դարձավ բողոքի

¹¹⁷St' u The Green book, Muammar al-Qaddafi,

<http://openanthropology.org/libya/gaddafi-greenbook.pdf>.

¹¹⁸Նույն տեղում, էջ 730-738:

¹¹⁹Նույն տեղում, էջ 745:

գործողությունների ընդլայնման համար: Ցուցարարներն իրենց գործողությունները հիմնավորում էին առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներով՝ մարդու իրավունքների ոտնահարումներ, սոցիալական վատ կառավարում, կոռուպցիա և այլն: Սոցիալական հուզումներն աստիճանաբար ձևափոխվեցին Մուամմար Կադաֆիի իշխանության տապալման պահանջներով: Փետրվարի 27-ին ստեղծվեց Ազգային անցումային խորհուրդը, որի նպատակն էր Կադաֆիի վարչակարգի դեմ ձևավորել զինված ապստամբական ուժեր և կազմակերպել դրանց հետագա կառավարումը: Ազգային անցումային խորհուրդը հստակեցրեց իր օրակարգն ու սկսեց հակակառավարական ելույթներին ավելի կազմակերպված բնույթ հաղորդել: Ի դեպ, Կադաֆիի շրջապատից մի շարք մարդիկ անցան ընդդիմադիրների կողմը: Կադաֆիի վարչակարգի դեմ ընդվզող ցուցարարները սկսեցին ավելի ու ավելի հաճախ բախվել ոստիկանության և անվտանգության ուժերի հետ: Ձևավորվեցին հակակադաֆիական զինված խմբավորումներ: Կադաֆիի կիրառած կոշտ ուժին ի պատասխան, նաև արտաքին գործոնի միջամտության հետևանքով, երկիրը հայտնվեց արյունոտ քաղաքացիական պատերազմի հորձանուտում: Մարտի 5-ին Ազգային խորհուրդն իրեն հռչակեց Լիբիայի ժողովրդի օրինական ներկայացուցիչ: Մարտի 10-ին Ֆրանսիան հայտարարեց, որ ճանաչում է Ազգային խորհրդին և կատեցրեց հարաբերությունները Կադաֆիի վարչակարգի հետ¹²⁰:

Օգտվելով Լիբիայում ստեղծված լարված իրավիճակից՝ ՆԱՏՕ-ի անդամ արևմտաեվրոպական երկրները և ԱՄՆ-ը մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին Կադաֆիին և նրա անմիջական շրջապատին հարված հասցնելու, նրանց իշխանությունից հեռացնելու կամ ավելին՝ ֆիզիկապես ոչնչացնելու ուղղությամբ՝ համագործակցելով տարածաշրջանային պետությունների մասնավորապես Կատարի հետ: Արդեն 2011 թ. փետրվարի 26-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց 1970 բանաձևը Լիբիայի, Կադաֆիի և նրա ամենամոտ շրջապատի դեմ զինվորական և ֆինանսական ոլորտներում համապատասխան պատժամիջոցների կիրառման մասին¹²¹:

¹²⁰Timeline: Libya's uprising against Muammar Gaddafi, August, 22.08.2011, <https://www.reuters.com/article/us-libya-events/timeline-libyas-uprising-against-muammar-gaddafi-idUSTRE77K2QH20110822>.

¹²¹Security Council imposes sanctions on Libyan authorities in bid to stem violent repression, 26.02.2011, <https://news.un.org/en/story/2011/02/367672-security-council-imposes-sanctions-libyan-authorities-bid-stem-violent>.

Ի դեպ, այս բանաձևի իրականացման շրջանակներում միջազգային մի շարք բանկերում բացահայտվեցին լիբիական հեղափոխության առաջնորդի, նրա ընտանիքի անդամների, նրանց մոտ կանգնած առանձին մարդկանց հաշվեհամարները, որոնք կազմում էին միլիարդավոր դոլլարներ: Առանձնապես տպավորիչ էր Մեծ Բրիտանիայում Կադաֆիի ընտանիքին պատկանող կարողությունը¹²²:

1970 բանաձևով լիբիական իշխանություններին կոչ էր արվում գերծ մնալ խաղաղ բնակչության դեմ բռնություններից, վերականգնել խաղաղությունը, նաև միջազգային հանրությանը, ՄԱԿ-ի անդամ պետություններին կոչ էր արվում նպաստել Լիբիայում խաղաղության վերականգնմանը: Բանաձևը իր խոր անհանգստությունն էր հայտնում խաղաղ ցուցարարների շրջանում գրանցված մարդկային զոհերի համար: Միևնույն ժամանակ, հանձնարարվում էր ստեղծել անկախ միջազգային դիտորդական խումբ՝ տեղում ուսումնասիրելու միջազգային իրավունքի ոտնահարումները և գոյություն ունեցող խնդիրները: Նախատեսվում էր դիտորդական առաքելություն իրականացնել այն բոլոր վայրերում՝ առաջին հերթին Բենգազիում և Միսրատայում, որտեղ իրականացվել էին զանգվածային բռնություններ ու վայրագություններ: ՄԱԿ-ի առանձին պաշտոնյաներ, ինչպես օրինակ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցով գերագույն հանձնակատար Ն. Փիլեյը սուր քննադատության ենթարկեց Կադաֆիի քաղաքականությունը՝ որակելով այն որպես միջազգային հանցագործություն¹²³:

Հատկանշական է, որ 2011 թ. փետրվարին երկրի մի շարք քաղաքներում տեղի ունեցած զինված բախումներն ի հայտ բերեցին այն փաստը, որ կառավարական զորքերի հետ բախումների մեջ մտած ցուցարարների մի մասը վարձկաններ էին: Պատահական չէ, որ Լիբիայում անմիջապես ակտիվացավ «Իսլամական Մադրիբի ալ-Կաիդան», որը ձգտում էր Լիբիայում ստեղծել խալիֆայություն: Աֆղանստանում «ալ-Կաիդայի» առաջնորդ Աբու Յահյա Ալ-Լիբին հայտարարեց, որ Թունի-

¹²²Gaddafis' hidden billions: Dubai banks, plush London pads and Italian water, 22.02.2011, <https://www.theguardian.com/world/2011/feb/22/gaddafi-libya-oil-wealth-portfolio>.

¹²³Libya's attacks on civilians may be international crimes, UN rights chief, 20.04.2011, <https://news.un.org/en/story/2011/04/372832-libyas-attacks-civilians-may-be-international-crimes-un-rights-chief>.

սից և Եգիպտոսից հետո հաջորդը Լիբիան է¹²⁴։ Հետագայում, Կադաֆիի վարչակարգի կողմից արված հետաքննությունը ցույց տվեց, որ անկարգությունների ընթացքում ոստիկանների, զինծառայողների և «խաղաղ ցուցարարների» շարքերում զոհվածների թիվը գրեթե նույնն էր¹²⁵։

2011 թ. մարտի 12-ին Արաբական պետությունների լիգան դիմեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ Լիբիայի օդային տարածքը ոչ թռիչքային գոտի սահմանելու նպատակով։ Մի շարք ՆԱՏՕ-ի անդամ և Մոցի արաբական պետություններ միացան ընդդեմ Լիբիայի իշխանությունների ձևավորված դաշինքի, որը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից մարտի 17-ին ընդունած 1973 բանաձևի կիրառումն ապահովելու նպատակով մարտի 19-ին սկսեց Միասնական պաշտպան գործողությունը (Operation Unified Protector)¹²⁶։ Նշենք, որ ըստ 1973 բանաձևի, վկայակոչելով ԱՄ 1970 բանաձևը, դատապարտում էր Կադաֆիի վարչակարգի կողմից բնակչության դեմ ուղղված վայրագությունները, հերթական անգամ հայտարարում էր Լիբիան ոչ թռիչքային գոտի, կոչ էր անում միջազգային կազմակերպություններին ապահովել Լիբիայի ժողովրդի պաշտպանությունը¹²⁷։ ՄԱԿ-ի ԱՄ թե՛ 1970, թե՛ 1973 բանաձևերը կանաչ ճանապարհ էին Լիբիայում ՆԱՏՕ-ի և դաշնակից ուժերի կողմից ռազմական գործողություններ սկսելու համար։ 2011 թ. մարտի վերջին ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման նույնպես հայտարարեց, որ պաշտպանում է իր երկրի ռազմական ներխուժումը Լիբիայում, Ջամահիրիայի առաջնորդ Մ. Կադաֆիի դեմ¹²⁸։

Ի վերջո, ռազմական գործողություններն այնքան սրընթաց զարգացում ունեցան, որ շփոթություն առաջացրեցին անգամ այդ գործողությունների մասնակից երկրների ներկայացուցիչների մոտ (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Բելգիա, Նորվեգիա, Դանիա, Նի-

¹²⁴Al-Qaida commander calls for Islamic rule in Libya, Sunday, 13.03.2011, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2011/03/13/AR2011031300652.html>.

¹²⁵Սանրամսան տն ու Подгорица Н.П., «Арабская весна» в странах Магриба, Институт Ближнего Востока, М., 2014.

¹²⁶Nato and Lybia, Operation Unified Protector, <https://www.nato.int/cps/en/natohq/71679.htm>.

¹²⁷United Nations Security Council, Resolution 1973 (2011), https://www.nato.int/nato_static/assets/pdf/pdf_2011_03/20110927_110311-UNSCR-1973.pdf.

¹²⁸Barack Obama defends US military intervention in Libya, 29.03.2011, <https://www.theguardian.com/world/2011/mar/29/barack-obama-us-speech-libya>.

դեռանդներ, Կատար և այլն): Լիբիայի դեմ ռազմական արշավ իրականացնելուն կողմ հանդես եկած հիմնական երկիրը Ֆրանսիան էր, և ի դեպ, դեռևս դաշինքի միասնական հրամանատարության կազմավորումից առաջ Ֆրանսիան հանդես էր գալիս որպես մի երկիր, որը պետք է այդ գործողությունների իրագործման նախագիծը մշակեր և կառավարեր ընթացքը: Կադաֆիի վարչակարգի հարցում ոչ պակաս դերակատարություն ունեցավ նաև Մեծ Բրիտանիան¹²⁹: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչու էին այս երկու պետությունները շահագրգռված Լիբիայում ներքաղաքական փոփոխություններով: Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Կամերունը հայտարարեց, որ Մուամմար Կադաֆիի դեմ ռազմական գործողությունները անհրաժեշտ էին, օրինական և ճիշտ. դրանց նպատակն էր թույլ չտալ, որ Կադաֆին սպանի սեփական ժողովրդին: Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին հավատացած էր, որ միջազգային հանրությունը չէր կարող հանդուրժել նման հանցագործություն¹³⁰: Փաստ է, որ շատ ու շատ հարցեր կապված էին Լիբիայի աշխարհագրական բարենպաստ դիրքի, բնական ռեսուրսների և այլն-այլ աշխարհաքաղաքական հետաքրքրությունների հետ, որոնք հետապնդվում էին նախկին գաղութային պետությունների կողմից:

Հատկանշական է, որ 1973 բանաձևի ընդունումից անմիջապես հետո Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հայտարարեց, որ պատրաստ է «ռազմական միջամտություն» իրականացնել: Նրա կարգադրությամբ՝ Լիբիայում արձակվեցին ֆրանսիական թվով 20 կործանիչներ: Պաշտոնական տվյալների համաձայն՝ կործանիչները Ջամա-հիրիայի վրա մեկ ժամ իրականացրած «հետախուզական և նախազգուշական» թռիչքների ընթացքում ոչնչացրել են զրահամեքենաներ Լիբիայի խաղաղ բնակչության պաշտպանության նպատակով: Սակայն, ըստ անկա տեղեկությունների, ֆրանսիական հարվածները ուղղված են եղել ոչ թե ռազմաբազաներին, այլ Կադաֆիին հավատարիմ լիբիական բանակի ցամաքային զինված ուժերի դեմ¹³¹:

¹²⁹St' u Jason W. Davidson, *France, Britain and the intervention in Libya: an integrated analysis*, Cambridge Review of International Affairs, volume 26, 2013, pp. 310-329.

¹³⁰Viewpoint: How Libya Became a French and British War, March 19.03.2011,

<http://content.time.com/time/world/article/0,8599,2060412,00.html>.

nt: How Libya Became a French and British War, March 19, 2011.

¹³¹Подгорнова Н.П., նշվ. աշխ., էջ 20:

2011 թ. մարտի 29-ին Լոնդոնում տեղի ունեցավ համաժողով, որին մասնակցում էին ՄԱԿ-ի, Արաբական պետությունների լիգայի, Իսլամական կոնֆերանս կազմակերպության, Եվրամիության արտաքին գործերի նախարարներ: Հանդիպմանը վերահաստատվեց ՄԱԿ-ի 1970 և 1973 բանաձևերի իրականացման անհրաժեշտությունը և Լիբիայում բռնությունները կանխարգելելու հրամայականը: Նշվեց, որ Կադաֆիի և նրա վարչակարգը այլևս չեն կարող լինել լիբիական ժողովրդի օրինական ներկայացուցիչը: Կարևորվեց Լիբիայի գծով ՄԱԿ-ի հանձնակատար Աբդել էլահ Մուհամմադ Ալ-Ֆատիհի դերը¹³²:

Բացի այդ, քննարկվեց Լիբիային մարդասիրական օգնություն տրամադրելու, Կադաֆիի վրա ճնշում գործադրելու և ՄԱԿ-ի ԱՆ-ի պատժամիջոցների օգնությամբ նրա վարչակարգի մեկուսացման և լիբիական ընդդիմությանը քաղաքական փոփոխությունների հասնելու ուղղությամբ գործադրած ջանքերին աջակցելու մասին: Ի դեպ, շեշտվում էր, որ դաշինքի անդամ երկրները Լիբիայում խաղաղարարի դեր են կատարում: «Մենք այնտեղ ենք մարդկանց պաշտպանելու, այլ ոչ զինելու նպատակով», - հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը և կոչ արեց լիբիական հակամարտության կարգավորման գործընթացի մեջ ընդգրկված բոլոր կողմերին հետամուտ լինել խնդրի խաղաղ կարգավորմանը: Նա նշեց. «Ակնհայտ է, որ Լիբիայում իրավիճակը չի կարող միայն և բացառապես ռազմական ճանապարհով լուծվել»: Բայցևայնպես, համաժողովի մասնակիցները որոշում կայացրեցին, որ Լիբիայում ռազմական գործողությունները պետք է համակարգի ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհուրդը¹³³:

Սակայն արևմտյան տերությունների այդ շրջանի հույսերը, կասկած չկա լիբիական ճգնաժամի արագ կարգավորման հետ, չիրականացան: Կադաֆիին հաջողվում էր վերահսկել իրավիճակն անգամ անցումային Ազգային խորհրդի լիբիական ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ ճանաչվելուց հետո: Ընդդիմության զինված ուժերը ի վիճակի չեղան նաև մայրաքաղաք Տրիպոլիում Լիբիայի կառավարական զինված ուժերի նկատմամբ առավելություն ձեռք բերել: Այս իրավիճակը կարող էր հանգեցնել երկարատև հակամարտության, ինչը շահեկան չէր արևմտաեվրոպական տերությունների համար: Բացի այդ, ընդդիմության

¹³²London Conference on Libya, 29 March, 2011, Chairs statement, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/pdf_2011_03/20110927_110329_-_London-Conference-Libya.pdf.

¹³³Подгоркова Н. П., նշվ. աշխ., էջ 20-21:

շարքերը սկսեցին ակտիվորեն համալրվել ծայրահեղ իսլամիստներով, մասնավորապես «ալ-Կաիդայի» մարտիկներով, որոնք ունեին արտաքին հովանավորներ¹³⁴:

Լիբիական հակամարտության ռազմական ճանապարհով լուծույնը ձգձգվում էր: Կադաֆիի դեմ կռվող զինված ջոկատները զինվում էին, տեղեկատվական պատերազմը շարունակվում էր Զազիրայի և այլ տեղեկատվական կենտրոնների կողմից:

Արտաքին դերակատարներին հնարավորություն տրվեց մեծ ճնշում գործադրել իշխող վերնախավի և Լիբիայի զինված ուժերի հրամանատարության ներկայացուցիչների վրա: Նպատակը նրանց ապակողմնորոշումն ու պառակտումն էր: Կադաֆիի դեմ տեղեկատվական պատերազմի նպատակը նրա վարչակարգի քայքայումն էր ներսից և այդպիսով երկիր ցամաքային զորքեր մտցնելու անհրաժեշտությունից խուսափելը¹³⁵:

Օգտվելով այս իրավիճակից, Լիբիայի իշխանությունները հայտարարեցին երկրի քաղաքական համակարգում բարեփոխումներ իրականացնելու նպատակով ընտրություններ կամ հանրաքվե անցկացնելու պատրաստակամության մասին: 2011 թ. ապրիլի 5-ին հայտարարությամբ հանդես եկավ կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Մուսա Իբրահիմը: Վերջինս հայտարարեց, որ միայն Լիբիայի ժողովուրդը, այլ ոչ թե դրսի ուժերը, կարող են որոշել արդյոք պետք է Կադաֆին լքի իշխանությունը, թե ոչ: Նա հայտարարեց. «Կադաֆին պետք է շարունակի մնալ երկրի ղեկավար՝ որպես երկրի միասնության պահպանման և անվտանգության ապահովման երաշխիք: Նա սոսկ մի մարդ չէ, նա անվտանգության և Լիբիայի ամբողջականության պահպանման երաշխավորն է: Մենք կարող ենք տարբեր քաղաքական համակարգեր ունենալ, սահմանադրություն փոխել, ընտրություններ անցկացնել և այլն, սակայն այդ ամենի միջով մենք պետք է անցնենք ուժեղ առաջնորդի հետ միասին: Մենք վստահ ենք դրանում»¹³⁶:

Սակայն Լիբիայի կառավարության առաջարկը՝ ճգնաժամի հաղթահարմանը հասնել բարեփոխումների միջոցով, չստացավ ոչ Արևմուտքի, ոչ Լիբիական ընդդիմության աջակցությունը, որոնք ցանկացած փոխզիջման միակ նախապայման համարում էին Կադաֆիի և նրա

¹³⁴Violence flares after Tunisians rally to mark revolution's anniversary, 14 Jan, 2018, <https://www.theguardian.com>.

¹³⁵Подгорнова Н. П., ևշվ. աշխ., էջ 21:

¹³⁶Նույն տեղում:

ընտանիքի անդամների հեռացումն իշխանությունից: Այս հարցի լուծմանը չօգնեց անգամ Աֆրիկյան միության միջնորդությունը: Արևմտա-եվրոպական տերությունների համար ճգնաժամի կարգավորման միակ միջոցը, ինչպես իրենք էին պնդում, Կադաֆիի անհապաղ չեզոքացումն էր¹³⁷:

Այդ նպատակով 2011 թ. մարտի 19-ին, այսինքն՝ ՄԱԿ-ի Ան 1973 բանաձևի ընդունումից երկու օր անց, Լիբիայի դեմ շատ օպերատիվ ձևով իրագործվեց միջազգային ռազմական գործողություն: Ֆրանսիական օդային ուժերը հարված հասցրեցին լիբիական հակաօդային ուժերին¹³⁸: Ֆրանսիայից հետո ռազմական գործողություններին միացան ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Դանիան, Բելգիան, Նիդեռլանդները: Այն բանից հետո, երբ դաշնակիցների ուժերը սկսեցին աջակցել լիբիական ապստամբ ուժերին, ամբողջ երկրով մեկ բավական ինտենսիվ ցամաքային ռազմական գործողություններ ծավալվեցին, որոնց արդյունքում եղան բազմաթիվ քաղաքացիական զոհեր, շատուշատ խաղաղ բնակիչներ հայտնվեցին շրջափակման մեջ, մեծացավ Լիբիայից արտագաղթողների թիվը:

Լիբիայում ՆԱՏՕ-ի կողմից իրականացրած ռազմական գործողությունների ընթացքում միջազգային զինված ուժերը իրականացրել են 8.878 մարտական թռիչք, որոնցից 3.385-ը ստույգ թիրախավորմամբ¹³⁹: Դաշինքի Ջամահիրիային զենք մատակարարելու էմբարգոյի խախտումը թույլ չտալու նպատակով երկրի ափամերձ ջրերը վերահսկվում էին թվով 19 ռազմանավերի կողմից: ՆԱՏՕ-ի ուժերին համարժեք դիմադրություն ցույց տալու անկարողության պատճառով զինվորական ծառայությունը թողեցին և երկիրը լքեցին Լիբիայի զինված ուժերի շուրջ 120 սպաներ: Արդյունքում Կադաֆիի բանակը կրճատվեց մոտ 20%-ով: Փախուստի դիմած գեներալ Սասուդ Խալասի խոսքերով «Կադաֆիի կողքին մնացել էին ընդամենը մի քանի հարյուր զինվոր և տասից ոչ ավել գեներալ»: Չնայած սրան ապստամբների ռազմական ցածր պատրաստվածությունը և մեծ մարտերի ընթացքում կրած կորուստները թույլ չէին տալիս նրանց կոտրել կառավարական ուժերի

¹³⁷Նույն տեղում:

¹³⁸Նույն տեղում:

¹³⁹Zenko M. Popular Protest in North Africa and the Middle East: Making Sense of Libya International Crisis Group. Middle East/North Africa Report N. 107, 6 June 2011.

դիմադրությունը: Երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական հեռանկարները դառնում էին անկանխատեսելի¹⁴⁰:

Պաշտոնապես համարվում է, որ քաղաքացիական բախումները Լիբիայում ավարտվել են 2011 թ. հոկտեմբերի 20-ին Մուամար Կադաֆիի սպանությամբ և Ազգային անցումային խորհրդի հաղթանակի հայտարարմամբ¹⁴¹: Կադաֆին դաժանորեն սպանվեց իր ծննդավայր Միրս քաղաքում: Օպերացիան, որը ղեկավարում էին Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, տևեց մինչև 2011 թ. հոկտեմբերի 31-ը: Հոկտեմբերի 31-ին Տրիպոլի այցելեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ռասմուսենը և հանդիպեց անցումային Ազգային խորհրդի նախագահ Մուստաֆա Աբդու Ջալիլի հետ, որը Լիբիայի ժողովրդի անունից երախտագիտություն հայտնեց նրան ցուցաբերած աջակցության համար:

Լիբիայում առաջին ազատ խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան 2012թ. ամռանը, և լիբիացիներն առաջին անգամ վերջին 40 տարվա ընթացքում մասնակցեցին քաղաքական իշխանության ձևավորման գործընթացին: Խորհրդարանական ընտրություններին մասնակցեցին ընտրելու իրավունք ունեցողների 60 %-ը, որոնք արդեն ընտրությունների ավարտին դուրս էին եկել փողոցներ տոնելու այդ իրադարձությունը¹⁴²: Ընտրությունների արդյունքում ձևավորվեց նոր կառավարություն, որն անմիջապես ճանաչվեց միջազգային ասպարեզում: Սակայն լիբիական նոր կառավարությունը չկարողացավ միավորել քաղաքական ուժերին և սահմանել իր ամբողջական վերահսկողությունը երկրում: Հայտնվեցին ուժեր, որոնք ապակայունացրեցին իրավիճակը: Դրանցից էր իսլամիստական «Լիբիական լուսաբաց» դաշինքը, որը մերժեց ընտրությունների արդյունքները և վերահսկողություն սահմանեց մայրաքաղաք Տրիպոլիում: 2014 թ. -ից Լիբիան թևակոխեց քաղաքացիական պատերազմի և ներքաղաքական անկայունության մի շրջան, որը շարունակվում է մինչ օրս: Տրիպոլիում տեղակայված կառավարությունը ստիպված տեղափոխվեց Արևելյան Լիբիայում գտնվող Տոբրուկ քաղաք և հայտնի է «Տոբրուկի կառավարություն» անունով, որի հիմնական կորիզը անցումային Ազգային խորհրդի ներկայացուցիչներն էին: Իսկ «Լիբիական լուսաբաց» դաշինքն աջակցեց Տրիպոլիում

¹⁴⁰Zenko M. Popular Protest in North Africa and the Middle East: Making Sense of Libya International Crisis Group. Middle East/North Africa Report N. 107, 6 June 2011.

¹⁴¹Նույն տեղում:

¹⁴²Clinton Hillary, Hard Choices, Simon and Schuster, New York, 2014, p. 381.

գտնվող «Համընդհանուր ազգային կոնգրեսին»: Արևմտյան պետությունները, արաբական երկրներից Եգիպտոսը, Արաբական Միացյալ Էմիրությունները և Սաուդյան Արաբիան ընդդիմանում էին «Համընդհանուր ազգային կոնգրեսին», մինչդեռ Թուրքիան, Կատարը և Սուդանը աջակցում էին իսլամական ծայրահեղականությամբ տոգորված այդ կառույցին: «Համընդհանուր ազգային կոնգրեսի» կողմից շարիաթն ընդունվեց որպես երկրի օրենսդրության հիմք, որին պարտավոր էին հետևել երկրի բոլոր պետական կառույցներն ու տնտեսության մասնավորապես բանկային ոլորտն ու ֆինանսական գործունեությունը կարգավորող հաստատությունները: Երկրի քրեական օրենսգիրքը նույնպես շարիաթականցվեց: Բոլոր օրենքները, որոնք հակասում էին շարիաթի նորմերին, կասեցվեցին: Իսլամի նորմերը մուտք գործեցին լիբիական հասարակության ամբողջ: Նշենք, որ Լիբիայի քաղաքական գրեթե բոլոր ուժերն էին կողմ շարիաթին: Արդեն 2011 թ. հոկտեմբերի վերջին անցումային Ազգային խորհրդի նախագահ Մուստաֆա Աբդու Ջալիլը իր հերթին հայտարարեց, որ շարիաթը պետք է ընկած լինի Լիբիայի օրենսդրության հիմքում կիրարկվելով չափավոր ձևով¹⁴³:

Արևմտավորապական երկրների, ԱՄՆ-ի և տարածաշրջանում նրա դաշնակից երկրների՝ մասնավորապես Կատարի վարած քաղաքականության արդյունքում երբեմնի միասնական Լիբիան արդեն Կադաֆիի իշխանափոխությունից անմիջապես հետո սկսեց պառակտվել, բաժանվել անկլավների, որտեղ սկսեցին գործել տարբեր, իրար դեմ պայքարող ցեղեր, զինված խմբավորումներ: Կադաֆիի անկումը լիբիական պետականությանը մեծ վնաս հասցրեց: Նոր իշխանությունը, որի հիմնական կառույցները գործնականում չէին աշխատում, ի գործու չեղավ կարգավորել ստեղծված իրավիճակը, և Լիբիան, ըստ էության, կորցրեց կենտրոնական կառավարումը: Լիբիայի մի շարք շրջաններ սկսեցին վերահսկվել նախկին աշխարհագրայինների այդ թվում ծայրահեղ իսլամիստների կողմից: 2015 թ. դեկտեմբերի 17-ին Մարոկկոյում ստորագրվեց ՄԱԿ-ի միջնորդությամբ Լիբիական քաղաքական համաձայնության փաստաթուղթը, որը միտված էր ազգային միասնության կառավարության ձևավորմանը¹⁴⁴: Այս համաձայնագրով ստեղծ-

¹⁴³Sharia law to be main source of legislation in Libya, 25.10.2011, The Christian Science Monitor, <https://www.csmonitor.com/World/Latest-News-Wires/2011/1025/Sharia-law-to-be-main-source-of-legislation-in-Libya>.

¹⁴⁴The Libyan Political Agreement: Time for a Reset, International Crisis Group, Report N170/Middle East and North Africa, 11.04.2016, <https://www.crisisgroup.org>.

վեց ՄԱԿ-ի աջակցությունը վայելող Ազգային համաձայնության կառավարություն ու նախագահական խորհուրդ, որը նույնպես ի գործու չեղավ վերականգնել Լիբիայի ամբողջականությունն ու անվտանգությունը:

Լիբիան, որ ժամանակին մեծ ներուժ և տնտեսության զարգացման մեծ հեռանկար ունեցող պետություն էր, փաստացիորեն վերածվեց Արևմուտքի համար բնական հումքի շահագործման գոտու, որը հետաքրքրություն էր ներկայացնում զուտ իր նավթային և գազի պաշարների շահագործման, ինչպես նաև աշխարհագրական բարենպաստ դիրքի տեսանկյունից: Արդեն 2013 թ. դեկտեմբերի սկզբներին երկրի տնտեսությունը շատ մեծ դժվարությունների առաջ կանգնեց, որը կապ ուներ էներգետիկ ռեսուրսներից ստացված շահույթի մոտ 80% կրճատման հետ: Դրա համար պատճառ դարձավ զինված աշխարհագրայինների կողմից նավթային օբյեկտների աշխատանքների արգելափակումը¹⁴⁵: Բացի այդ, Արևմուտքը ցանկանում էր կանխել Կադաֆիի հավակնությունները կապված հյուսիսաֆրիկյան շրջանում քաղաքական և ֆինանսական գերակայություն հաստատելու, ինչպես նաև առաջատար պետություն դառնալու գործում: Արդյոք Եվրոպայում տեղյակ չէին, որ Լիբիայում ինքնիշխանության կործանումը կարող է հանգեցնել փախըստականների մեծ հոսքի դեպի Արևմուտք, ինչպես դա եղավ հետագա տարիներին: Հստ ամենայնի, Եվրոպայում փախստականների ճգնաժամը ձեռնառու էր ԱՄՆ-ին, որի համար ցանկալի էր Եվրոպայի թուլացումը:

Այսպիսով, Լիբիայի ժողովրդի հույսերը չարդարացան, քանի որ երկիրը թևակոխեց մի նոր շրջան, որը նկարագրվում էր քաղաքական, սոցիալական, ցեղային և երկրամասային ուժեղ պառակտվածությամբ: Լիբիան ազդեցության տարբեր գոտիների միջև բաժանվեց, և այն սկսեցին ղեկավարել զինված խմբավորումները, մրցակից ցեղերը, զինվորական հրամանատարները¹⁴⁶:

2011 թ. -ից Լիբիայում գրանցվել է 5000 մարդկային զոհ տարբեր խմբավորումների միջև զինված բախումների և նույնիսկ «Իսլամական պետություն» խմբավորման դեմ իրականացված գործողությունների ընթացքում: Արդեն շուրջ յոթ տարի անց մոտ կես միլիոն լիբիացիներ ստիպված լքել են երկիրը, 1,3 միլիոն մարդ մարդասիրական աջակցու-

¹⁴⁵The Libyan Political Agreement: Time for a Reset, International Crisis Group, Report N 170/Middle east and North Africa, 11. 04. 2016, <https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/north-africa/libya/libyan-political-agreement-time-reset>.

¹⁴⁶Harris G., The Libyan Quagmire. The Middle East Institute, 29.04.2011.

թյան կարիք ունի, հարյուր հազարավորները տառապում են անպաշտպան միջավայրում ապրելով և գրկված լինելով սոցիալական, առողջապահական ծառայություններից¹⁴⁷:

Սոցիալ-տնտեսական իրադրությունը երկրում գնալով ծանրանում է, քանի որ 2011 թ. համեմատությամբ ածխաջրածնային ռեսուրսների արտահանումը նվազել է 90%-ով, իսկ համախառն ներքին արդյունքի կորուստը կազմել է շուրջ 200 միլիարդ ԱՄՆ դոլար: Լիբիայում իրադրությունը բարդանում է նաև փախստականների և միգրացիոն հոսքերի ընդունման հետևանքով: Ամենաբարդ խնդիրը երկրում գործող քաղաքական միասնական իշխանության ձևավորման խնդիրն է: Իշխանության վակուումի, անպաշտպան ու անվերահսկելի սահմանների առկայության հետևանքով՝ Լիբիայի տարածքում իրենց գործունեությունն են ծավալում «ալ-Կաիդայի» և «Իսլամական պետության» զինված խմբավորումները: Տարբեր խմբավորումներ զբաղված են ռազմական նշանակության ապրանքների անօրինական վաճառքով: Լիբիական բանակի զինանոցում առկա տարբեր տեսակի ռազմամթերք է վաճառվել աֆրիկյան մի շարք երկրների¹⁴⁸:

2.3 «Արաբական գարունը» Եմենում. ներքաղաքական վայրիվերումներից մինչև միջնորդավորված պատերազմ

Ինչպես արաբական մի շարք երկրներում, Եմենում ևս հեղափոխական գործընթացների համար օրինակ դարձավ Թունիսի «Հասմիկների հեղափոխությունը»: Այստեղ նույնպես շրջանառության մեջ դրվեց քաղաքական պայքարի «թունիսյան նախադեպը», ըստ որի ավտորիտար իշխանությունից կարելի էր ազատվել ոչ միայն ռազմական հեղաշրջման, այլև համաժողովրդական ապստամբության միջոցով: Փաստորեն, «արաբական գարունը» «դոմինոյի էֆեկտով¹⁴⁹» ներխուժեց նաև Եմեն:

¹⁴⁷The UN Refugee Agency, Libya, <http://www.unhcr.org/libya.html>.

¹⁴⁸Allouche Y., 6 years after the Arab Spring: Where is Libya now? Middle East Monitor, <https://www.middleeastmonitor.com>, 15.02.2017.

¹⁴⁹Քաղաքական այս տեսությունն առաջադրել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Դալեսը, որի հիմքում ընկած է «շղթայաձև արձագանքի» սկզբունքը: Այս տեսությունն օգտագործվում էր ԱՄՆ-ի վարչակարգի կողմից Վիետնամում պատերազմ սկսելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար, քանի որ Վաշինգտոնը կարծում էր, որ եթե Հարավային Վիետնամում հաղթի կոմունիզմը, ապա

Ժամանակագրորեն Եմենում սոցիալ-քաղաքական հուժկու ցնցումները սկսվեցին Եգիպտոսում 2011 թ. հունվարին մեկնարկած հակակառավարական բողոքի ցույցերին զուգընթաց, որի շարժառիթը Սանայում 2011 թ. հունվարի 18-ին Ֆահր Ալ-Ազգաբի ինքնահերկիզման փորձն էր¹⁵⁰։ Այս դեպքից հետո հազարավոր ցուցարարներ, որոնց զգալի հատվածը երիտասարդներ էին, այդ թվում՝ ուսանողներ, շրջապատեցին Սանայի պետական համալսարան տանող երեք գլխավոր ճանապարհները՝ հայտարարելով հակաիշխանական պայքարի մեկնարկի մասին¹⁵¹։

Ցուցարարներն առաջ քաշեցին Եմենի նախագահ Աբդալլահ Սալիհի հրաժարականի, պետական կառավարման համակարգի բարեփոխումների և սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծման պահանջներ¹⁵²։

Լշենք, որ «արաբական գարնան» արդյունքում Եմենում սկսված զարգացումները և դրանց հետևած քաղաքական ցնցումներն ու ճգնաժամը պայմանավորված էին բազմաթիվ խորքային խնդիրներով։ Եմենում սկսված ներքաղաքական ճգնաժամը, որը ռազմական բնույթ կրեց, աստիճանաբար վերածվեց քաղաքացիական պատերազմի, իսկ ավելի ուշ՝ տարածաշրջանային միջնորդավորված պատերազմի։

դա շղթայաձև ազդեցություն կունենա տարածաշրջանի մյուս երկրների վրա։ «Դոմինոյի էֆեկտի» տեսությունը լայնորեն օգտագործում էր նաև 1980-ականներին Ռեյգանի վարչակարգը՝ Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ իր քաղաքականության հստակեցման առանցքում։ St u Eisenhower gives famous «domino theory» speech, April 7, 1954, <http://www.history.com/this-day-in-history/eisenhower-gives-famous-domino-theory-speech>, <http://www.martinfrost.ws/htmlfiles/april2009/domino-theory.html>։ St' u նաև Գ. Գևորգյան, Կառավարվող ժողովրդավարական մոդելի գործարկումը Եգիպտոսում (2008-2010թթ.), Ժամանակակից Եվրասիա, հատոր 1(2), Եր., 2012։

¹⁵⁰Исаев Л.М., Трубецвев К.М., Йемен: конец эпохи Салеха, Системный мониторинг глобальных и региональных рисков: арабский мир после Арабской весны, М., 2016, с. 146.

¹⁵¹Բողոքի այս հավաքը Եմենի նախագահ Աբդալլահ Սալիհի կառավարման ընթացքում կազմակերպված առաջին զանգվածային ցույցն էր։ Մասշտաբային բողոքի ցույցեր տեղի ունեցան ոչ միայն Եմենի մայրաքաղաք Սանայում, այլև Իբք և Թաիզ քաղաքներում։

¹⁵²Mass protests in Yemen, Opposition demands Saleh resignation, 06.03.2015, Alakhbar, <http://english.al-akhbar.com/node/1647>.

Համաարաբական ըմբոստության ճիրաններում հայտնված արաբական երկրների շարքերում Եմենը յուրահատուկ տեղ է զբաղեցնում: Եմենն արաբական այն երկրներից է, որտեղ պետական ինստիտուտների կողքին իրենց ազդեցիկ դերակատարությունն ունեն տեղի նահապետական կարգերին հետևող արաբական ցեղերն ու ցեղային տարբեր միությունները¹⁵³: Դարերով չփոփոխվող և ժամանակի առումով իրեն սպառած կենսաձևերը, ինչպես նաև տնտեսության զարգացման համար անհրաժեշտ բարեփոխումների և դրանց իրականացման համար կարևոր գործիքակազմի բացակայությունը Եմենում ամրապնդել և կարծրացրել են հասարակական ու քաղաքական համակարգերին բնորոշ ցեղայնությունը՝ թրայբալիզմը¹⁵⁴: Այդ իմաստով «արաբական գարնան» կոդմից առաջ քաշված ազատական-ժողովրդավարական առաջադեմ գաղափարները, որոնք միտված էին նպաստելու պետական և հասարակական համակարգերի արդիականացմանը, Եմենում պետք է դրսևվորվեին «ցեղային ժողովրդավարությամբ»¹⁵⁵: Պատահական չէ, որ «արաբական գարնան» շրջանակներում ձևավորված նոր գործընթացները խմորվեցին միջցեղային և միջկլանային հարթության մեջ, ինչպես նաև դրևստրվեցին սուննիական-շիայական (զեյդիական) առճակատմամբ:

¹⁵³Եմենում ցեղը պատմամշակութային և սոցիալ-քաղաքական բարդ երևույթ է: Ցեղին պատկանելը շատ կարևոր հանգամանք էր: Դա տալիս էր որոշակի սոցիալական ապահովվածության և պաշտպանվածության զգացողություն, ուստի ցեղի անդամների շրջանում ստեղծում էր որոշակի մտածելակերպ ու կենսակերպ: Եմենում այս կամ այն ցեղը կարող էր անգամ չընդունել պետական իշխանության գերակայությունը: Հաճախ ինքնուրույն կարող էր պատերազմ հայտարարել հարևան ցեղին և այլն: Տե՛ս D. P. Tribes, Government and History in Yemen. Oxf., 1989, p. 89.

¹⁵⁴Եմենում ներկայումս հաշվվում են մոտ 160 ցեղեր, որոնք միավորված են ցեղային միություններում և դաշինքներում: Այդ միություններից առավել խոշորներն են Բաքիլը՝ երկրի արևելքում, Մադիաջը՝ կենտրոնական նահանգներում և Հաշիդը՝ հյուսիսում: Տե՛ս Густерин П., Трейбализм в Йемене, 22.09.2014, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1411330680>.

¹⁵⁵«Ցեղային ժողովրդավարություն» եզրույթը, որպես քաղաքագիտական սահմանում, առաջին անգամ օգտագործել է Հարավաֆրիկյան Հանրապետության առաջին սևամորթ նախագահ Նելսոն Մանդելան: Այս ձևակերպման շրջանակներում հասկացվում է ժողովրդավարության պարզունակ, հաճախ վայրագ, ոչ ինստիտուցիոնալ ձևը՝ հիմնված ցեղերի ավանդույթների և պետական իշխանության տարրերի միաձուլման վրա:

Եմենում «արաբական գարնան» նախօրեին տիրող իրավիճակը հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ մի քանի կարևոր հանգամանքների: Եմենում XX դ. առաջին կեսին քաղաքական առավել ակտիվ գործընթացները ծավալվել են երկրի հյուսիսում: 1918 թ. Եմենի միապետությունն անկախացավ Օսմանյան կայսրությունից և ստացավ Եմենի մութավաքիլիական թագավորություն անվանումը: Այն կառավարվում էր գեդիական Համիդ Ադ-Դին ընտանիքի կողմից: Հետագայում՝ 1962 թ. սեպտեմբերի 26-ին, Հյուսիսային Եմենում տեղի ունեցավ «Ազատ սպաների» զինված հեղաշրջումը, որի արդյունքում իշխանության եկան հանրապետության կողմնակիցները: Հեղափոխության առաջնորդ Աբդալլահ Սալլալը դարձավ պետության նախագահ: Հանրապետականներին հաջողվեց իշխանությունից հեռացնել միապետականներին և նրանց նորահռչակ շիա-գեդիական իմամ Մուհամմադ Ալ-Բադրին, լուծարել Եմենի մութավաքիլիական թագավորությունը և հռչակել Եմենի Արաբական Հանրապետությունը (ԵԱՀ): Եմենի հարավային հատվածն¹⁵⁶ իր անկախությունը Մեծ Բրիտանիայից ստացավ միայն 1967 թ.¹⁵⁷ Անկախություն ձեռք բերելուց հետո Հյուսիսային և Հարավային Եմենների միջև տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող բարդ ու խրթին հարաբերությունները պայմանավորված էին երկու քաղաքացիական պատերազմներով (1979 թ. և 1994 թ.), որոնք ավարտվեցին Սալիհի կողմնակիցների հաղթանակով¹⁵⁸:

Նշենք, որ Ալի Աբդալլահ Սալիհը Եմենի Արաբական Հանրապետությունում նախագահ ընտրվեց 1978 թ.¹⁵⁹: Սկսած 1978 թ. Սալիհը շուրջ 30 տարի զբաղեցրեց Եմենի Արաբական Հանրապետության նախագահի պաշտոնը, իսկ 1990 թ. -ից՝ միավորված Եմենի¹⁶⁰:

¹⁵⁶Հարավային Եմենի հակաբրիտանական պայքարն իրականացնում էր 1963 թ. ձևավորված «Ազգային ճակատը», որն էլ ստորագրեց անկախության մասին հռչակագիրը:

¹⁵⁷Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Եր., 2006, հ. III, էջ 359:

¹⁵⁸Corcoran M., Yemen: A century of conflict, ABC News, 15.04.2015, <http://www.abc.net.au/news/mark-corcoran/568708>.

¹⁵⁹Yemen: Who was Ali Abdullah Saleh?, News Saudi Arabia, 05.12.2017, <http://www.aljazeera.com/indepth/spotlight/yemen/2011/02/201122812118938648.html>.

¹⁶⁰Երկու Եմենների միավորման պատճառներից թերևս ամենակարևորը ԽՍՀՄ-ի փլուզումն էր, որը ԵԺՀ-ի հիմնական հովանավորն էր: 1989 թ. Սալիհի և

Դեռևս 1990-ականներին Արդալլահ Սալիհի և գեղիական ցեղային առաջնորդ Սադիկ Ալ-Ահմարի միջև, որոնք երկուսն էլ պատկանում են Հաշիդ ցեղային միությանը, ձեռք էր բերվել պայմանավորվածություն: Դրա համաձայն Սալիհի նախագահական լիազորությունների ավարտվելուն պես պաշտոնը պետք է զբաղեցնեք դարձյալ Հաշիդ ցեղային միության ներկայացուցիչ գեներալ Մոհսեն Ալ-Ահմարը¹⁶¹: Մոհսեն Ալ-Ահմարը Եմենի կանոնավոր զորքերի ամենամարտունակ խմբավորման զրահատանկային դիվիզիայի հրամանատարն էր և Սալիհի խորթ եղբայրը¹⁶²: Այստեղ էական էր այն հանգամանքը, որ վերը նշված պայմանավորվածությունը ստորագրել էր Հաշիդ ցեղային միության շեյխերի մեծամասնությունը, ինչն օրինականացնում էր ստորագրված փաստաթուղթը: Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Սալիհը պատրաստվում է դրժել պայմանավորվածությունը և նախագահական աթոռը փոխանցել որդուն Ահմադին, Սադիկ Ալ-Ահմարը Արդալլահ Սալիհի հետ առճակատման գնաց¹⁶³: Այդպիսով, երկրի հյուսիսում տեղական ժամանակ հարաբերական կայունությամբ աչքի ընկնող եմենական իշխող վերնախավի շարքերը պառակտվեցին:

Հետաքրքրական է նշել նաև, որ նախքան Սալիհ-Ահմար հարաբերությունների վատթարացումը, Սալիհին աջակցում էր բավական ազդեցիկ «Բալահ» իսլամիստական կուսակցությունը, որը «Մուսուլման եղբայրներ» շարժման հետ նույնացվող կառույց էր, և այն գլխավորում էին Ալ-Ահմար եղբայրները¹⁶⁴: Սալիհի կողմից Ահմարների հետ ձեռք բերված պայմանավորվածության խախտումից հետո «Բալահը» նախաձեռնեց Եմենի ամենախոշոր ընդդիմադիր քաղաքական խմբավորման՝ «Լիկա մուշթարաքի» ստեղծումը, որը միավորեց եմենական շուրջ հինգ

ԵԺՀ-ի առաջնորդ Ալի Սալեմ Ալ-Բեդի միջև սկսված բանակցություններն ավարտվեցին 1990 թ. մայիսի 22-ին Եմենի միասնական պետության ստեղծմամբ: Սալիհը դարձավ միավորված Եմենի Հանրապետության նախագահը, իսկ Ալ-Բեդը փոխնախագահը: Սակայն, արդեն կարճ ժամանակ անց, Հարավում հասկացան, որ Հյուսիսի հետ միավորման հարցում շտապել են:

¹⁶¹Նշենք, որ Արդալլահ Սալիհը և Ալի Մոհսենը խորթ եղբայրներ են:

¹⁶²Hamza Ali, "Rebel" General Ali Mohsen al Ahmar, Yemens back-up ruler after Saleh, The National, 24.03.2011, <http://www.abc.net.au/news/mark-corcoran/568708>.

¹⁶³Նույն տեղում:

¹⁶⁴Campbell L., Yemen: The Tribal Islamist, Wilson Center Home, 27.08.2015, <https://www.wilsoncenter.org/article/yemen-the-tribal-islamists>.

ընդդիմադիր կուսակցություններ¹⁶⁵: Ավելին՝ Սալիհի դեմ պայքարն հաջողությամբ իրականացնելու նպատակով «Իսլախը» դիմեց նաև Կատարին՝ Սաուդյան Արաբիայի Թագավորության (ՍԱԹ) տարածաշրջանային ավանդական մրցակցին՝ ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով¹⁶⁶:

ՍԱԹ-ը, որը պարբերաբար ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում Սալիհին, Հաշիդ ցեղային միության շարքերում առաջացած պառակտության արդյունքում որոշեց ժամանակավոր կասեցնել տրամադրվող ֆինանսական օգնությունը: Այս հանգամանքն օգտագործեց Կատարը իր ազդեցությունը ներեմենական գործընթացներում ակտիվացնելու համար: Փորձագետների մի մասը կարծում է, որ «արաբական գարնան» արդյունքում Եմենում սկսված հակակառավարական պայքարում առկա էր Դոհայի ֆինանսական հետքը¹⁶⁷: Կատարը նպատակ ուներ դառնալ միջազգային լուրջ գործոն և տարածաշրջանային ազդեցիկ պետություն: Այնպես որ պատակահան չէին «արաբական գարնան» գործընթացները հրահրելու և դրանք սեփական շահերին ծառայեցնելու Կատարի ձգտումները:

Փաստեք նաև, որ Եմենի նորագույն պատմության շրջանում, որպես կանոն, իշխանության մաս են կազմել շիա իսլամի զեդդիական ուղղության ներկայացուցիչները, որոնց թվում էր նաև Աբդալլահ Սալիհը: Եմենում Ջեդդիների և սուննիների միջև, որոնք հիմնականում պատկանում են սուննի շաֆիայական մազհաբին, մշտական մրցակցություն գոյություն ուներ¹⁶⁸: Ի դեպ, Սալիհի զեդդիական ինքնությունը չէր կաշկանդում վահաբիական Սաուդյան Արաբիային՝ վերջինիս ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցում: Այնուամենայնիվ, երկրում առկա կրոնադավանական և ցեղային երկփեղկվածությունն էլ ավելի էր բարդացնում ներքաղաքական իրադրությունը, մանավանդ

¹⁶⁵St' u Густерин П., Йеменская Республика на пути к президентским выборам, <http://islam-info.ru>.

¹⁶⁶Maysaa Shuja al Deen, Gulf rift sends tremors through Yemen, Al-Monitor, 16.06.2017, <https://www.al-monitor.com>.

¹⁶⁷Օրինակ՝ ցուցարարների վրանները պատրաստված էին քարից, ապառնված էին էլեկտրականությամբ, համացանցով և արբանյակային հեռուստակապով: Ակնհայտ է, որ առանց զգալի ֆինանսական կարողությունների այդ ամենն անհնարին կլիներ կազմակերպել:

¹⁶⁸Շաֆիայականները Եմենում կազմում են իսլամադավան բնակչության շուրջ 60-70%-ը:

այն պարագայում, երբ Եմենում բախվում էին նաև Սաուդյան Արաբիայի և Իրանի տարածաշրջանային հետաքրքրությունները:

Առանձին տեսակետների համաձայն՝ Եմենի գեղյիները սպասարկում էին իրանական շահերը: Պատահական չէր, որ նրանց համարում էին Իրանի «հինգերորդ շարասյուն»: Առհասարակ, գեղյիները, որոնք զբաղեցնում են Եմենի հյուսիսային հատվածը, ոչ միայն գրեթե միշտ գտնվել են իշխանության լծակների մոտ, այլև համարվել են Եմենի արաբական ցեղերի շարքում առավել ազնվատոհմիկները: Զեյդիական ցեղերի մեծամասնությունը հավաքական առումով մտնում է Հաշիդ ցեղային միության կազմի մեջ, որը, ինչպես նշեցինք, գլխավորում էր Սադիկ Ալ-Ահմարը:

Այսպիսով, Եմենում 2011 թ. հունվարին սկսված զանգվածային ելույթներն էլ ավելի սրեցին արդեն իսկ գոյություն ունեցող հակասությունները՝ վերածվելով զինված առճակատման¹⁶⁹: Ստեղծված իրավիճակում երկրի իշխանություններն անգոր էին ապահովելու երկրի տարածքային ամբողջականությունը¹⁷⁰, ինչպես նաև վերահսկելու սոցիալ-տնտեսական ոլորտը, որին բնորոշ էին սուր խնդիրները¹⁷¹: Աստիճանաբար Եմենում ձևավորվեց քառսային իրավիճակ:

¹⁶⁹Եմենի հյուսիսում՝ Սաադա լեռնային երկրամասում, որն ամբողջությամբ բնակեցված է շիաներով, 2004 թ. տեղի ունեցավ հակակառավարական ապստամբություն, որի ընթացքում ապստամբները պահանջեցին ինքնավարություն շնորհել Սաադային, բարելավել բնակչության սոցիալական վիճակը և վերջ տալ ԱՄՆ-ի հետ համագործակցությանը: Իշխանությունները ցուցարարներին համարեցին խռովարարներ, որոնք, ըստ այդմ, ցանկանում էին վերականգնել գեյդիական միապետությունը, որը տապալվել էր 1962 թ.: Ապստամբության առաջնորդը Հուսեյն Ալ-Հուսին էր, ում անունով էլ կոչվեց հուսինների շարժումը: Նա սպանվեց 2004 թ.: Հենց Ալ-Հուսին էր, որ դեռևս 1994 թ. ստեղծեց «Անսար Ալլահ» խմբավորումը, որը ոչ պաշտոնապես ստանում էր Իրանի աջակցությունը, հակառակ Եմենի կենտրոնական իշխանության, որին սատարում էր Սաուդյան Արաբիան: 2009 թ. Էո-Ռիյադը պաշտոնապես միջամտեց հուսինների և կենտրոնական իշխանությունների միջև հակամարտությանը: Միայն 2010 թ. նախքան «արաբական գարնան» սկիզբը, հուսինների և Եմենի իշխանությունների միջև ստորագրվեց փխրուն զինադադար: St u Basu T., Who are the Houthis?, The Atlantik, 09.04.2015, <https://www.theatlantic.com>.

¹⁷⁰Երկրի որոշ հատվածներ գտնվում էին «ալ-Կաիդայի» հսկողության տակ: Հարավային հատվածներում իրենց ինքնիշխանության մասին բարձրաձայնում էին տարբեր զինված խմբավորումներ:

¹⁷¹Բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 2 ԱՄՆ դոլարից քիչ գումար:

Եմենի նախագահ Աբդալլահ Սալիհը, ձգտելով զսպել երկրում սրընթաց աճող անկայունությունը, 2011 թ. փետրվարի 2-ին հայտարարեց, որ չեղարկում է գործող նախագահի երրորդ անգամ ընտրվելու սահմանադրական նախաձեռնությունը¹⁷²: Սալիհի ավտորիտար վարչակարգը, ըստ սահմանադրության, վերարտադրվելու հնարավորություն էր ձեռք բերել¹⁷³:

Սպասվող նախագահական ընտրություններում չառաջադրվելու Սալիհի խոստումն ամենևին էլ չնպաստեց երկրում բռնկված զանգվածային ցույցերի դադարեցմանը: 2011 թ. փետրվարի 2-ին Եմենի մի քանի քաղաքներում՝ Թաիզում, Սանայում, Ադենում, ալ-Հոդեյդայում, ալ-Մուկալլայում և Իբբայում միաժամանակ տեղի ունեցան զանգվածային բողոքի ցույցեր¹⁷⁴:

2011 թ. փետրվարի 26-ին եմենական Հաշիդ ցեղային միության առաջնորդ Սադիկ Ալ-Ահմարը հայտարարեց, որ անցնում է ընդդիմության կողմը: Ընդդիմության կողմն անցավ նաև գեներալ Սոհսեն Ալ-Ահմարը¹⁷⁵: Վերջինիս օրինակին հետևեցին մի շարք բարձրաստիճան սպաներ, ովքեր ևս լքեցին իշխող կուսակցության շարքերը¹⁷⁶:

Փորձելով շեղել ընդդիմության ուշադրությունը ներքաղաքական խնդիրներից՝ Սալիհը մարտի 1-ի իր ելույթում մեղադրեց ԱՄՆ-ին և Իսրայելին արաբական երկրներում և Եմենում տեղի ունեցող անկարգությունների կազմակերպման մեջ՝ նշելով, որ երկրում համակար-

¹⁷²Սալիհը երկիրը ղեկավարում էր սկսած 1978 թ.: 1990 թ. մայիսի 22-ին Հյուսիսսային և Հարավային Եմենների միավորման արդյունքում հռչակվեց արդի Եմենի Հանրապետությունը, որի նախագահ դարձյալ հռչակվեց Ալի Աբդալլահ Սալիհը:

¹⁷³Պետության ղեկավարը նախագահն է, որն ընտրվում է ուղիղ և փակ ընտրությունների միջոցով 7 տարի ժամկետով և երկրորդ անգամ վերընտրվելու իրավունքով: St u Dilip Hiro, *The Essential Middle East. A comprehensive guide*, New York, 2003, p. 578:

¹⁷⁴Акции протеста прошли в Алжире и Йемене, 12.02.2011, BBC, <http://www.bbc.com>.

¹⁷⁵Գեներալ Սոհսեն Ալ-Ահմարը դուրս եկավ նաև երկրում իշխող «Համընդհանուր ժողովրդական կոնգրես» կուսակցությունից: St u Top Yemeni general, Ali Mohsen, back opposition, News BBC, 21.03.2011, <http://www.bbc.com>.

¹⁷⁶Նույն տեղում:

գային որևէ փոփոխություն անելու անհրաժեշտություն չկա¹⁷⁷։ Ի պատասխան այս հայտարարության, մարտի 18-ին մայրաքաղաքում կազմակերպվեց «Արժանապատվության ուրբաթ» անունը կրող զանգվածային ցույցը, որի ընթացքում իշխանությունները դիմեցին բռնության։ Ուժայինների հետ բախման արդյունքում զոհվեցին ավելի քան 60 և վիրավորվեցին 100-ից ավելի մարդիկ¹⁷⁸։ Ներքաղաքական իրավիճակը երկրում աստիճանաբար վատթարացավ։ Մարտի 22-ին նախագահ Սալիհը հայտարարեց, որ հեռանում է իշխանությունից և այն հանձնում Զինվորական խորհրդին¹⁷⁹։

Եմենում նոր թափ հավաքող ճգնաժամը մտահոգություն առաջացրեց նաև Օղջի արաբական երկրներում, ինչպես նաև հնարավորություն ստեղծեց գործընթացները վերահսկելու համար։ Արդեն մարտի վերջին Օղջի արաբական երկրների համագործակցության խորհրդի (ՕԱԵՀԽ) շրջանակներում ստեղծվեց հատուկ հանձնաժողով¹⁸⁰։ Հանձնաժողովը մշակեց համաձայնագրի մի տեքստ, որի հիմքում ընկած էր Համընդհանուր ազգային երկխոսություն հարթակի ստեղծման գաղափարը։ Ըստ այդմ՝ իշխանությունից Սալիհի հեռանալուց և համաձայնագրի ստորագրումից յոթ օր անց եմենական ընդդիմությունը պետք է ձևավորեր հանդուրժողականության վրա հիմնված ժամանակավոր կառավարություն, ինչպես նաև պետք է համապատասխան մթնոլորտ ապահովեր քաղաքական լարվածությունը մեղմելու և ներքին անվտանգությունը վերականգնելու համար։ Համաձայնագրում հատուկ կետով նախագահ Սալիհի, նրա ընտանիքի և մի շարք այլ պաշտոնյաների համար սահմանվում էր անձեռնմխելիություն¹⁸¹։

¹⁷⁷Ghobari M., Yemen's Saleh leaves for U.S. opponents protest, Reuters, 22.01.2012, <https://www.reuters.com/article/us-yemen/yemens-saleh-leaves-for-u-s-opponents-protest-idUSTRE80LOAS20120122>.

¹⁷⁸Исаев Л.М., Коротаев А.В., Йемен: неизвестная революция и международный фактор, Мировая экономика и Международные отношения, М., 2015 N8, с.78.

¹⁷⁹Եզիպտոսում ևս նախագահ Հոսնի Մուբարաքի հեռանալուց հետո իշխանությունը փոխանցվեց Զինվորական բարձրագույն խորհրդին։

¹⁸⁰ՕԱԵՀԽ-ն փակ տարածաշրջանային կազմակերպություն է, որը ստեղծվել է 1981 թ. և որին անդամակցում են Բահրեյնը, Կատարը, Քուվեյթը, ԱՄԷ, Օմանը և Սաուդյան Արաբիան։

¹⁸¹Morrow W., Yemen regime massacres dozens as Saleh considers immunity deal, WWSWS.org 22.10.2011, <https://www.wsws.org/en/articles/2011/10/yeme-o22.html>.

Բացի այդ, Սալիհի կողմից իշխանությունը հանձնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, պետք է նախագահական արտահերթ ընտրություններ տեղի ունենային, ձևավորվեր սահմանադրական հանձնաժողով՝ երկրի նոր Սահմանադրությունը մշակելու նպատակով: Հետագայում Սահմանադրությունը պետք է դրվեր համաժողովրդական հանրաքվեի: Երկրում պետք է անցկացվեին խորհրդարանական արտահերթ ընտրություններ, որոնց արդյունքում հաղթած կուսակցությունից պետք է նախագահ առաջադրվեր¹⁸²: Ի դեպ, համաձայնագրի հաջող իրացման երաշխիքներից մեկն էլ այն էր, որ Օոմի համագործակցության խորհրդի երկրները, ԱՄՆ-ը և Եվրամիությունը պարտավորվում էին հետևել դրա կատարմանը:

Մայիսի 23-ին Սալիհի հրամանով եմենական ոստիկանական ուժերը շրջապատեցին Մադիկ Ալ-Ահմարի տունը՝ փորձելով վերջինիս ձերբակալել, սակայն Ահմարի անվտանգության ուժերը զինված դիմադրություն ցույց տվեցին¹⁸³: Սկսված փոխերաձգությունը վերաճեց ռազմական գործողությունների և հինգ օր տևած մարտերի, որոնց արդյունքում Սանան բաժանվեց մի քանի հատվածի: Մալիհը վերահսկում էր քաղաքի հարավային հատվածը, Ալ-Ահմարի ուժերը մայրաքաղաքի արևմտյան մասը, իսկ հյուսիսայինը՝ նախագահի ազգակից գեներալ Մոհսենին հավատարիմ ուժերը¹⁸⁴:

2011 թ. հունիսի 3-ին հրետանակոծվեց նախագահական նստավայրի տարածքում գտնվող մզկիթը: Մալիհը ծանր վիրավորվեց, իսկ նրա թիկնապահներից յոթը տեղում գեղվեցին: Նույն օրը Մալիհը բուժման նպատակով շտապ տեղափոխվեց Մաուդյան Արաբիա¹⁸⁵:

Մալիհի հեռանալուց հետո անցումային շրջանի նախագահի պարտականությունները ժամանակավորապես դրվեցին փոխնախագահ Աբդրաֆթ Մանսուր Հադիի վրա, վերջինս փորձեց երկխոսություն հաստատել իշխանության և ընդդիմության միջև¹⁸⁶: Անցումային շրջանը սկսվեց 2012 թ. փետրվար ամսից՝ Հադիի նախագահի պաշտոնը

¹⁸²Serebrov S., Yemen Crisis: Causes, Threats and Resolution Scenarios, pp. 9-10, <http://russiancouncil.ru/papers/Yemen-Policybrief14-en.pdf>.

¹⁸³Труевцев К.М., Год 2011 – новая демократическая волна? М., 2011, https://wp.hse.ru/data/2012/02/02/1262774318/WP14_2011_05.pdf.

¹⁸⁴Նույն տեղում:

¹⁸⁵Riedel B., Why did Saudi Arabia save Yemen's ex-president again?, Al-Monitor 18.10.2017, <https://www.al-monitor.com>.

¹⁸⁶Նույն տեղում:

ստանձնելու օրվանից, և տևեց 2 տարի¹⁸⁷։ Հադիին մասամբ հաջողվեց մինչև 2011 թ. սեպտեմբերը ճնշել երկրի տարբեր հատվածներում որոշ խմբավորումների միջև սկսված ռազմական բախումները։ Եմենի փոխնախագահ նշանակվեց ընդդիմության առաջնորդներից Մուհամմեդ Բասինդուան¹⁸⁸։

2011 թ. սեպտեմբերի 23-ին Սալիհը վերադարձավ Եմեն, որից հետո ռազմական գործողությունները իշխանության համար պայքարող ուժերի միջև վերսկսվեցին։ Ընդառաջ գնալով Սաուդյան Արաբիայի միջնորդություններին և հաշվի առնելով երկրում իշխանության համար պայքարի շուրջ ստեղծված անելանելի վիճակը՝ 2011 թ. նոյեմբերի 23-ին Էո-Ռիյադում սաուդական թագավորի մասնակցությամբ Սալիհը ստորագրեց ՄԱԵՀԽ-ի կողմից առաջադրված նախագահական լիազորությունները վայր դնելու մասին համաձայնագիրը¹⁸⁹։

Հետաքրքրական է, որ եմենական քաղաքական ուժերի շարքում շիա-զեյդիական «Անսար Ալլահը» (հութիներ) միակ ուժն էր, որը հանդես եկավ Մոցի նախաձեռնության դեմ՝ այն դիտարկելով Եմենում Մոցի արաբական երկրների և ԱՄՆ-ի քաղաքական շահերի իրականացման քողարկված քայլ։

Եմենի խորհրդարանը ստորագրված համաձայնագրի կետերից մեկի համաձայն 2012 թ. հունվարի 21-ին Սալիհին և նրա քաղաքական թիմակիցներին իրավական և դատական հետապնդման չենթարկելու մասին օրենք ընդունեց¹⁹⁰։

2012 թ. փետրվարի 21-ին Եմենում կայացան արտահերթ նախագահական ընտրություններ, որին մասնակցեցին գրանցված ընտրողների շուրջ 64,78%-ը։ Հադիին նախագահի միակ թեկնածուն էր և թեև անկուսակցական էր, սակայն առաջադրվել էր «Եմենի համընդհանուր ժողովրդական կոնգրեսի» կողմից¹⁹¹, որի նախագահը շարունակում էր մնալ Սալիհը։ Ընտրությունների արդյունքում պետության նախագահ

¹⁸⁷Նույն տեղում։

¹⁸⁸1993-1994 թթ. Բասինդուան զբաղեցնում էր Եմենի արտաքին գործերի նախարարի պաշտոնը, իսկ 2000 թ. արդեն իսկ անցել էր ընդդիմադիրների կողմը։

¹⁸⁹Whitaker B., Yemen's Ali Abdullah Saleh resings – but it changes little, The Guardian 24.11.2011, <https://www.theguardian.com>.

¹⁹⁰Экс-президент Йемена Салех получил судебный иммунитет, Новая газета 21.01.2012, <https://www.novayagazeta.ru>.

¹⁹¹Նախագահական ընտրությունները Եմենում բոլորտեղիս հուսիները և երկրի հարավային հատվածը զբաղեցնող մի շարք ցեղեր։

ընտրվեց նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Աբդուրբու Մանսուր Հադի¹⁹², որի թեկնածությունը համապատասխանում էր բոլոր կողմերի շահերին¹⁹³: Հադիի ընտրությունից հետո երկրում բացվեց, այսպես կոչված, «Համընդհանուր ազգային երկխոսության»¹⁹⁴ հարթակը, որը պետք է մշակեր նոր սահմանադրության նախագիծ:

Նախագահ Հադիի երկրի, այսպես կոչված, անցումային շրջանում համագործակցում էր Սաուդյան Արաբիայի և Մոցի երկրների հետ: Եթե նախկինում այս երկրները նախընտրում էին համագործակցել

¹⁹²Ընտրության իրավունք ունեցող 10.243.364 ընտրողներից Հադիի օգտին քվեարկեցին 6.621.921-ը, մնացած ձայները համարվեցին անվավեր: St'u Election Guide, Democracy assistance and elections news, Republic of Yemen, Election for President 21.02.2012, <http://www.electionguide.org/elections/id/2224>.

¹⁹³Հադիի այդ ժամանակ միակ գործիչն էր, ով ուներ երկրում ընդդիմադիր ուժերի միջև ծագած խնդիրները կարգավորելու կոնսենսուսային կարգավիճակ:

¹⁹⁴Ազգային երկխոսություն համաժողովը ՄԱԵՀԻ-ի բարեփոխումների ծրագրի առանցքային բաղադրիչն էր: Այն ստեղծվել էր, որպեսզի ՄԱԵՀԻ-ն և Եմենի բոլոր կուսակցությունները Մոցի նախաձեռնության մշակած համաձայնագրի շուրջ բանակցություններ վարեն: Այն գործել է 2013 թ. մարտից մինչև 2014 թ. հունվար ամիսը: 2014 թ. հունվարին բանակցություններին մասնակցել են Եմենի բոլոր կուսակցություններից 565 պատվիրակներ, որոնցից էլ կազմվել էին 9 աշխատանքային խմբեր: Այս խմբերն աշխատելու էին երկրի անվտանգության և ռազմական խնդիրների, քաղաքացիների իրավունքների և ազատության հարցերի կարգավորման ուղղությամբ: Այս բանակցություններն ավարտվել են 1400 առաջարկների վերաբերող փաստաթղթի ստեղծմամբ, սակայն շարունակվող պատերազմի պատճառով այս բանակցությունները որևէ դրական արդյունքի չհանգեցրին: Անցումային շրջանի կարևոր ծրագրերից մեկն այն էր, որ ժողովրդին հնարավորություն տրվեց իշխանության ձևավորման գործում մեծ դեր ունենալ: Երկխոսությունը ընդգրկել էր հասարակական և քաղաքական բոլոր կարևոր դերակատարներին, որպեսզի նրանք կարողանային մասնակցել նոր Սահմանադրության մշակման գործին ուղիներ առաջարկելով հյուսիսի և հարավի առճակատումը լուծելու համար: Ընդ որում, նախատեսվում էր երկխոսության միջոցով հանրային կառավարման և դատական համակարգերում բարեփոխումներ անցկացնել, կոռուպցիայի դեմ միջոցներ ձեռնարկել, հետևել մարդու իրավունքների և հատկապես կանանց իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև երկրի տնտեսական քաղաքականության առաջընթացին նպաստող ծրագրերի մշակմանը: St'u Charles Schmitz, Yemeni National Dialogue, Middle East Institute, March 10, 2014, <http://www.mei.edu/content/yemens-national-dialogue>.

նախկին նախագահ Սալիհի հետ, ապա նրա պաշտոնանկությունից հետո նախընտրեցին նոր նախագահի հետ համագործակցությունը:

Չնայած այն հանգամանքին, որ Սալիհը հրաժարական տվեց¹⁹⁵, և թվում էր, թե «արաբական գարունը» Եմենում հանգեցրեց սպասված արդյունքի՝ իրականում Եմենը թևակոխեց վայրկվերումների մի նոր շրջան, որն, ըստ էության, վերաճեց տևական ճգնաժամի: Նորընտիր նախագահ Հադիին, ստանձնելով նախագահի պարտականությունները, բախվեց լրջագույն խնդիրների, որոնցից ամենակարևորը երկրում տիրող իրավիճակը վերահսկելու անկարողությունն էր:

Պետք է նշել, որ ի տարբերություն Սալիհի, Հադիին ազդեցիկ գործիչ չէր: Պատահական չէ, որ նա չկարողացավ հակազդել Ալ-Ահմարների հարաճուն ազդեցությանը: Աստիճանաբար Ահմարներին հաջողվեց իրենց ձեռքում կենտրոնացնել իշխանության գրեթե բոլոր լծակները: Այս հանգամանքը առճակատում առաջացրեց Ալ-Ահմարների և եմենական մյուս ցեղերի միջև, ինչը, ըստ էության, հարվածի տակ էր դնում նաև Հադիի իշխանության հեռանկարը¹⁹⁶:

Երկրում ստեղծված ծանր ճգնաժամը պայմանավորվում էր նաև նրանով, որ Սալիհը, հրաժարվելով իշխանությունից, չհեռացավ երկրից, այլ շարունակեց ղեկավարել պետության ամենահզոր քաղաքական միավորը՝ «Եմենի համընդհանուր ժողովրդական կոնգրեսը» (ԵՀԺԿ): Այն, Հադիի պնդմամբ, խոչընդոտում էր երկրում բարեփոխումների անցկացմանը և հնարավորություն էր ընձեռում Սալիհին շարունակելու քաղաքական ազդեցության լծակների պահպանումը¹⁹⁷:

Կարծում ենք տեղին կլինի խոսել նաև Եմենում «արաբական գարնան» նախօրեին և դրա ընթացքում ձևավորված քաղաքական ուժերի մասին: 2011 թ. վերջին Եմենում գործում էին երկու խոշոր ուժեր: Դրանցից մեկը, ինչպես արդեն նշեցինք, իշխող կուսակցություն համարվող «Եմենի համընդհանուր ժողովրդական կոնգրեսն» էր (ԵՀԺԿ), որը ստեղծվել էր 1990 թ. և մյուսը՝ ընդդիմադիր «Լիկա Մուշթարաք» քաղաքական միավորումը¹⁹⁸:

¹⁹⁵Համաձայն Էո-Ռիյադում վերը նշված պայմանավորվածության՝ նախագահական ընտրություններից հետո Սալիհը ևս երեք ամիս պետք է մնար որպես պատվավոր նախագահ, <http://www.electionguide.org/elections/id/2224>.

¹⁹⁶Рябов П.П., «Арабская весна» по-Йеменски, М., 2017, с. 48.

¹⁹⁷Судьба лидеров, свергнутых в ходе «арабской весны» 2011г., РИА новости, 20.10.2012, <https://ria.ru/spravka/20121020/904589708.html>.

¹⁹⁸Рябов П.П., «Арабская весна» по-Йеменски, նշվաշխ., էջ 51:

ԵՀԺԿ-ն տեղական ժամանակ Եմենի գերակա ուժն էր: Այսպես՝ 2003 թ. ապրիլի 27-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ԵՀԺԿ-ն ներկայացուցչական 301 տեղից զբաղեցրեց 238-ը, այսինքն՝ մեծամասնությունը՝ շուրջ 58,0%-ը: ԵՀԺԿ-ի գաղափարախոսության հիմքում ընկած է եմենական ազգայնականությունը՝ որպես արաբական ազգայնականության մի մաս: ԵՀԺԿ-ի շուրջ համախմբվել էին եմենական «ԲԱԱՍ» կուսակցությունը, «Ժողովրդական ուժերի դաշինքը», իսկ հետո նրան միացավ նաև հուժիների «Անսար Ալլահ» կրոնաքաղաքական շարժումը¹⁹⁹:

Ընդդիմադիր «Լիկա Մուշթարաք» քաղաքական միավորումը բաղկացած էր 5 կուսակցություններից՝ «Ալ-Իսլահը», «Եմենի սոցիալիստական կուսակցությունը», «Ժողովրդական նասերական երիտասարդական կազմակերպությունը», «Ժողովրդական ուժերի դաշինքը» և «Ալ-Հակը»: Եմենի քաղաքական այս միությունը ձևավորվեց 2002 թ.²⁰⁰:

«Լիկա Մուշթարաքը» պահանջում էր երկրում ստեղծել իրական խորհրդարանական ժողովրդավարական համակարգ՝ իշխանության հստակ բաժանմամբ, դատական և վարչական համակարգերի ապակենտրոնացմամբ²⁰¹:

Հարավային Եմենի ուժերը հիմնականում ներկայացված էին «Եմենի հարավային շարժում» կուսակցությամբ, որը քաղաքական թատերաբեմում՝ որպես հստակ կազմակերպված ուժ, ի հայտ եկավ 2007թ.: «Եմենի հարավային շարժում» կուսակցությունը պայքարում էր միավորված Եմենի շարքերից դուրս գալու համար²⁰²:

Հատկանշական է, որ Եմենում ներքաղաքական զարգացումներն ամբողջական են դառնում «Ալ-Կաիդայի» եմենական թևի գործունեությամբ²⁰³: Եմենում այն հիմնադրվել է 2009 թ. Եմենի և ՍԱԹ-ի սալաֆիական ընդհատակյա խմբավորումների միաձուլման արդյուն-

¹⁹⁹Yemen Uprising of 2011-2012, Encyclopaedia Britannica,

<https://www.britannica.com/event/Yemen-Uprising-of-2011-2012>.

²⁰⁰Նույն տեղում:

²⁰¹Yemen on the Path of Reforms, Independent Analytical Center for Geopolitical Studies, 17.03.2014, <http://bintel.com.ua/en/article/yemen-na-puti-reform>.

²⁰²In South Yemen Preparing to Declare Independence, Time 08.07.2011, <http://content.time.com/time/world/article/0,8599,2081756,00.html>.

²⁰³Տե՛ս Нечитайло Д.А., «Аль-Каида» в Йемене, <http://www.iimes.ru/?p=7068>.

քում²⁰⁴: «Ալ-Կաիդան» առավել մեծ ակտիվություն դրսևորեց 2011 թ. հունվարին սկսված զանգվածային բողոքների ժամանակ չնայած նրան, որ դեռ 2010 թ. հունվարի 14-ին Սալիհը պատերազմ էր հայտարարել «ալ- Կաիդային»²⁰⁵:

Նախագահական ընտրություններից հետո մեկնարկած Համընդ-հանուր ազգային երկխոսության հարթակի մասնակիցների կողմից մշակվեց մի փաստաթուղթ, ըստ որի երկրում պետք է ստեղծվեր ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված նոր կառավարություն, որտեղ գերակայելու էր օրենքը, բոլոր քաղաքացիներն ունենալու էին հավասար իրավունքներ, իսկ կառավարման համակարգում կանանց տրվելու էր պաշտոնների 30%-ը: Ժամանակավոր կառավարության ժամկետը երկարաձգվեց մինչև 2015 թ.:

Արդարացի լինելու համար պետք է փաստել, որ Սալիհի նախագահական լիազորությունները վայր դնելուց երեք տարի անց էլ ժամանակավոր իշխանություններին՝ ի դեմս Մանսուր Հադիի, իսկ փաստացի՝ Ահմարների ընտանիքի, չհաջողվեց լուծել երկրում ամկա կարևորագույն խնդիրները: Չմշակվեց երկրի նոր Սահմանադրության նախագիծը, չկարգավորվեց Հարավային Եմենի կարգավիճակի հարցը, պետական իշխանության համակարգում քաղաքական բոլոր ուժերի ներկայության ապահովման խնդիրը, խորհրդարանական նոր ընտրությունների անցկացումը, և այլն: Այս ամենին գումարվում էին նաև սոցիալական խնդիրները, որոնք միշտ էլ Եմենում օրակարգային էին:

Եմենում իրավիճակի հերթական սրումը տեղի ունեցավ 2015 թ. հունվարի 17-ի, երբ հուժիները ձերբակալեցին նախագահական վարչակազմի ղեկավար Ահմեդ բին Սուբարաքին: Վերջինիս ազատ արձակելու Հադիի հորդորներին ի պատասխան հուժիները գրավեցին նախագահական պալատը և Ազգային անվտանգության բյուրոն: Հունվարի 21-ին Հադիի և հուժիների միջև զինադադար ձեռք բերվեց²⁰⁶:

Վախենալով իրադրության հետագա բարդացումից՝ նախագահ Հադին 2015 թ. փետրվարի 21-ին փախավ Ադեն, իսկ հետո Էռ-Ռիյադ՝

²⁰⁴St u Foster Benjamin, The Global Expansion of the Al Qaeda Franchise, Claremont Colleges, 2011, p. 53-75.

²⁰⁵Yemen's Al Qaeda: Expanding the Base, Crisis Group, 02.02.2017, <https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/yemen/174-yemen-s-al-qaeda-expanding-base>.

²⁰⁶Шийтское движение хуситов в Йемене. Досье. ТАСС, 20.01.2015, <http://tass.ru/info/1709704>.

չեղյալ հայտարարելով հուֆիների հետ ձեռք բերված զինադադարը²⁰⁷:

Լշենք, որ այսպես կոչված, անցումային շրջանում հուֆիները սկսեցին ակտիվորեն համագործակցել նախկին նախագահ և իրենց հակառակորդ Մալիի հետ: Հուֆիները ռազմական գործողություններ ծավալեցին մի կողմից Ալ-Անմարների, մյուս կողմից՝ «ալ-Կաիդայի» դեմ²⁰⁸: Մյուս կողմից, հուֆիները կարողացան երկխոսության եզրեր գտնել նաև կրոնա-դավանական այլ խմբավորումների և անգամ մի շարք ցեղերի հետ, որոնց հետ նախկինում տարաձայնություններ ունեին:

Լպատակ ունենալով ամրապնդել Հադիի իշխանությունը երկրում՝ 2015 թ. մարտի 22-ին ՄԱԿ-ի ԱՆ-ն հաստատեց նախագահ Հադիի օրինակարգությունը և կոչ արեց հակամարտող կողմերին զերծ մնալ ցանկացած գործողությունից, որոնք կարող են խաթարել Եմենի ինքնիշխանությունը, անկախությունը և Եմենի տարածքային ամբողջականությունը²⁰⁹: Միևնույն ժամանակ ՄԱԿ-ը հաստատեց, որ 2009 թ-ից Իրանը ֆինանսական, ռազմական և այլնայլ օգնություններ է տրամադրել Եմենում հուֆիներին²¹⁰:

Ստեղծված պայմաններում, երբ հուֆիները գրավել էին Սանայի մեծ մասը, այդ թվում՝ պետական առանցքային կառույցները, 2015 թ. մարտի 23-ին Եմենի արտաքին գործերի նախարարությունը պաշտոնապես դիմեց ՄԱԵՀ-ին՝ Եմեն միասնական զորքեր մտցնելու խնդրանքով: Սկսվեց «Վճռորոշության փոթորիկ» ռազմական գործողությունը: ՄԱԹ-ի նախաձեռնած դաշինքում ներգրավվեցին ԱՄԷ-ի, Քուվեյթի, Կատարի և Եգիպտոսի զինված ստորաբաժանումները, որոնք սկսեցին օդային հարվածներ հասցնել Իրանի կողմից հովանավորություն ունեցող հուֆինների դիրքերին²¹¹:

Եմենի քաղաքացիական պատերազմը վերաճեց միջնորդավորված պատերազմի (proxy war), իսկ «արաբական գարուն» շարժումը Եմենում վերաճեց անհաղթահարելի միջազգային հակամարտության:

²⁰⁷Լույս տեղում:

²⁰⁸Լույս տեղում:

²⁰⁹СБ ООН поддержал президента Йемена и осудил действия мятежников, Коммерсант, 23.03.2015, <https://www.kommersant.ru/doc/2692643>.

²¹⁰UN report: Iran arming Houthis since 2009, 1.05.2015, <https://www.middleeastmonitor.com>.

²¹¹Аравийская коалиция объявила о завершении операции «Буря решимости» в Йемене, 21.04.2015, ТАСС, информационное агентство России, <http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/1920282>.

Տարածաշրջանում սուր մրցակցության մեջ գտնվող Սաուդյան Արաբիայի և Իրանի միջամտությունը Եմենի դեպքերին անմիջական կապ ունենալու ևս սուսնիական և շիայական աշխարհաքաղաքական դաշինքների միջև հարաբերությունների հերթական սրման հետ, որը հաջորդեց «արաբական գարնան» դեպքերին:

«Արաբական գարնան» դեպքերը փաստորեն նոր ազդակներ հաղորդեցին ավանդական ու խորքային այն հակասություններին, որոնք գոյություն ունեին մի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության և մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիայի Թագավորության ու նրանց դաշնակիցների միջև: Եմենի պատերազմը կրեց միջնորդավորված բնույթ:

Օտար միջամտությունը, որն ուղեկցվեց ռազմական գործողություններով, Եմենին հասցրեց մեծագույն վնաս՝ թե՛ նյութական, և թե՛ մարդկային առումներով: Եմենի զարգացումը նահանջեց:

2015 թ. հունվարին իշխանությունն անցավ «Անսար Ալլահի» հեղափոխական կոմիտեների ձեռքը: Նախատեսվեց Սահմանադիր ժողովի գումարում, որը պետք է նոր Սահմանադրության տեքստ մշակեր: Գործադիր իշխանությունն անցավ նախագահական խորհրդին և ժամանակավոր կառավարությանը: Զգալի փոփոխությունների ենթարկվեց օրենսդիր մարմինը: Միապալատ խորհրդարանի փոխարեն որոշվեց ստեղծել երկպալատ ժողովրդական խորհուրդ՝ կազմված նոր ստեղծվող վերին պալատից՝ Շուրայի խորհուրդ և ստորին՝ Ներկայացուցիչների պալատից: Տեղերում ստեղծված հեղափոխական կոմիտեները պետք է իրականացնեին անցումային շրջանի վերահսկողությունը: Հուլիսներին հաջորդվեց վերակառուցել երկրի ողջ քաղաքական համակարգը²¹²:

Նշենք նաև, որ Եմենի ներքաղաքական գործողություններին ներքաշված էր նաև «Իսլամական պետությունը», որը պատասխանատու է Եմենում բազմաթիվ ահաբեկչական գործողությունների ու բռնությունների համար²¹³:

Այսպիսով, 2011 թ. -ից «արաբական գարնան» դեպքերով Եմենում տեղ գտած քաղաքական վայրիվերումները նույնպես դեռևս չեն հանգուցալուծվել:

²¹²Исаев Л.М., Коротаев А.В., Йемен: неизвестная революция и международный фактор, Мировая экономика и Международные отношения, М., 2015, N. 8, с. 83-84.

²¹³Yemen Crisis: Who is Fighting Whom?, March, 26, <http://www.bbc.com>.

**«ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ԵԳԻՊՏՈՍՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ**

**3.1 Ներքաղաքական իրադրությունը Եգիպտոսում «արաքական գարնան
նախօրեին».** հասարակական ընդլզման նախադրյալները

«Արաքական գարունը» 2011 թ. ներթափանցեց նաև Եգիպտոս, որտեղ սկսված հասարակական-քաղաքական զարգացումները հանգեցրին պետության կարծրացած իշխանական համակարգի անկմանը: 2011 թ. փետրվարի 11-ին «եգիպտական փողոցի» հուժկու բողոքների արդյունքում և գործող իշխանությանն արտաքին աջակցության դադարեցման պայմաններում²¹⁴ Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը հայտարարեց իր պաշտոնանկության մասին²¹⁵:

Ոչ իրատեսական կլինի ասել, թե Եգիպտոսում սկսված հակաիշխանական հուժկու բողոքները պայմանավորված էին միայն արտաքին մասնավորապես Թունիսում սկսված իրադարձություններով:

Խնդիրն այն է, որ Եգիպտոսն արդեն իսկ տևական ժամանակ գտնվում էր սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակում, որին մաս էին կազմում զանգվածային չքավորությունը, կոռուպցիան, գործազրկությունը, անգրագիտությունը և այլն: Սոցիալական ոլորտում ամկա պարենային ճգնաժամն իր անմիջական արտացոլումը գտավ Թահիրիի ցուցարարների ամենահայտնի կարգախոսում՝ «Հաց, ազատություն, արդարություն» և այլն²¹⁶: Ըստ «Transparency International» հակակոռուպցիոն կազմակերպության՝ 2010 թ. կոռուպցիայի մակարդակի ռեյտինգային 174 երկրների ցանկում Եգիպտոսը զբաղեցնում էր 118-րդ տեղը: Սա կարելի է բնութագրել որպես խիստ բացասական ցուցանիշ,

²¹⁴ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, անդրադառնալով Եգիպտոսում տիրող իրավիճակին, նշել էր, որ նախագահ Մուբարաքը պետք է ենթարկվի ժողովրդի կամքին, այսինքն՝ հրաժարական տա: Մուբարաքը Եգիպտոսի նախագահի պաշտոնը զբաղեցնում էր 1981 թ.:

²¹⁵Hosni Mubarak resigns as president: Egyptian president stands down and hands over power to the Supreme Council for the Armed Forces, Al Jazeera, 11.02.2011, <http://www.aljazeera.com/news/middleeast/2011/02/201121125158705862.html>.

²¹⁶Mehrez S., "Watching" Tahrir, Global Dialogue. Newsletter for the International Sociological Association, Vol. 2, Issue 3, p. 5.

որը վկայում էր, որ նշված երկրում կոռուպցիան անագնացող չափերի էր հասել²¹⁷: 2010 թ. դրությամբ Եգիպտոսում բարձրագույն կրթություն ունեին մինչև 29 տարեկան եգիպտացիների միայն 13.2%-ը²¹⁸: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ երիտասարդության մեծ մասը մեծացել է այն պարզ գիտակցումով, որ բարձրագույն կրթությունը չի կարող ապահովել առաջընթաց, որը հնարավոր էր ձեռք բերել ուժային կառույցներում ծառայելու միջոցով: Արմատավորված էր այն համոզմունքը, որ միայն բանակն է, որն ունի սոցիալապես ապահովված և ամուր կյուրական բազա: Կարևոր է փաստել նաև, որ հեղափոխական իրադարձությունների նախաշեմին Եգիպտոսում հաշվվում էր մեկ միլիոնից ավել երիտասարդ գործազուրկ: Վերջիններիս տարիքը տատանվում էր 20-24-ի սահմաններում, և որոնցից միայն շուրջ 45-50%-ը ուներ բարձրագույն կրթություն²¹⁹: Ուշագրավ է, որ ինչպես Թունիսում, այնպես էլ Եգիպտոսում, հեղափոխական ալիքի խթանիչը դարձավ հենց երիտասարդությունը:

Եգիպտոսում սկսված հակաիշխանական զանգվածային ըմբոստությունների հիմքում ընկած պատճառներից են. 1. կրթված, բայց հիմնականում գործազուրկ երիտասարդության թվաքանակի սրընթաց աճը, որն իր զարգացմանը խոչընդոտող խնդիրների շուտափույթ լուծում էր պահանջում: Այդ երիտասարդության ճնշող մեծամասնությունը կենտրոնացված էր հենց Կահիրեում: 2. Թունիսի նախագահ Բեն Ալիի իշխանության բավական արագ և հիմնականում անարյուն անկումը, որը, հաճախ որպես գովազդ լուսաբանվում էր արաբական որոշ արբանյակային հեռուստատվիթոններով:

Այս ամենը նախադեպ դարձավ եգիպտական երիտասարդական «Ապրիլի 6-ի շարժում» և «Մենք բոլորս Նալեդ Սաիդ ենք» խմբավորումների համար սոցիալական տարբեր ցանցերի միջոցով հակաիշխանական ելույթներ և ցույցեր նախաձեռնելու համար: 3. Եգիպտական հեղափոխական շարժումը ծավալվեց ներքաղաքական էլիտայի շրջանակներում ծագած հակասությունների պատկերի վրա, որը, մի կողմից, ընթանում էր հին գվարդիայի և, մյուս կողմից, եգիպտական նոր տնտեսական էլիտայի ներկայացուցիչների մասնավորապես Եգիպտո-

²¹⁷Corruption perceptions index 2010, <http://www.transparency.org>.

²¹⁸Youth in Egypt: Building Our Future, Egypt Human Development Report 2010, UNDP, 2010, p. 37.

²¹⁹Коротаяев А., Зинькина Ю., Египетская революция 2011 года, структурно демографический анализ, №7 2011 Азия и Африка сегодня. с. 33.

սի նախագահ Հոսնի Մուբարաքի որդու՝ Գամալ Մուբարաքի միջև, որև, ի դեպ, գործող նախագահի կողմից ընկալվում էր որպես պետության ապագա առաջնորդ: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ «Եգիպտական փողոցի» նկատմամբ բանակային ուժերի համեմատաբար տկար դիմադրությունը պայմանավորված էր հենց գործող իշխանության քաղաքական կամքը կոտրելու ձգտմամբ²²⁰: Այսինքն ուղղված էր ստիպել Մուբարաքին հրաժարվել իր որդուն՝ Գամալ Մուբարաքին 2011 թ. Մեպտեմբերին նախատեսվող նախագահական ընտրություններում առաջադրելու մտադրությունից: Հետաքրքրական է, որ չնայած այն հանգամանքին, որ բողոքների սկզբնական շրջանում բանակային ուժերը բավականին լավ վերահսկում էին կառավարական բոլոր շինությունները, 2011 թ. հունվարի 27-28-ին ցուցարարներին հաջողվեց ներխուժել և այրել երկրում իշխող «Ազգային դեմոկրատական կուսակցության» գլխավոր գրասենյակը, որի նախագահը Գամալ Մուբարաքն էր: Դարձյալ համաձայն շրջանառվող տեղեկությունների՝ Գամալը նախագահ ընտրվելուց հետո պատրաստվում էր խիստ սահմանափակել հին գվարդիայի տնտեսական կարողությունները: Ուշագրավ է, որ հակաիշխանական բողոքների արդյունքում Մուբարաքի առաջին հայտարարություններից մեկը վերաբերում էր Գամալ Մուբարաքին Եգիպտոսի նախագահի պաշտոնում չառաջադրելուն²²¹:

4. Եգիպտոսում 2011 թ. հունվարին սկսված ներքաղաքական ճգնաժամում չափազանց կարևոր տեղ է զբաղեցնում 2010 թ. նոյեմբեր-դեկտեմբերին եգիպտական խորհրդարանական ընտրությունների կոպիտ անցկացման հասարակության բացասական ընկալումները: Ընտրությունների արդյունքում դարձյալ հաղթանակ տարավ իշխող «Ազգային դեմոկրատական» կուսակցությունը, իսկ եգիպտական առավել գործուն քաղաքական ընդդիմությունը՝ «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը, բոյկոտելով ընտրությունները, գրկվեց օրինական դաշտում գործելու և իշխանության դեմ պայքարելու հնարավորությունից²²²: 2010 թ. խորհրդարանական ընտրություններից հետո «Մուսուլման եղբայրներ»-ը հասարակական տարբեր հարթակներից սկսեցին քարկոծել գործող իշխանություններին՝ փորձելով հեր-

²²⁰Гринин Л.Е., Исаев Л.М., Коротаев А.В., Революции и нестабильность в Ближнем Востоке, М., 2016, с. 54-55.

²²¹Նույն տեղում, էջ 55:

²²²Նույն տեղում:

թական անգամ երկրում հակամուփարաքյան լարված իրավիճակ ստեղծել:

Առհասարակ, արաբական երկրների դրամատիկական, իսկ ավելի արդար բնորոշմամբ՝ ողբերգական իրադարձությունների սկզբից նեթ, տեղեկատվության սպառողների վրա են հորդում ամենակուլ տեղեկատվական հոսքերը, որոնք բազմազան են թե՛ իրենց ժանրային բաղադրիչներով, թե՛ այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են օբյեկտիվությունը, լրջությունը, գիտականությունը, իրազեկությունը, կողմնապահությունը և այլն²²³:

Արդարացի լինելու համար պետք է նշել, որ սկսած XXդ. 80-90-ական թվականներից գլոբալականացման գործընթացների համատեքստում արաբական մի շարք երկրների կողմից քաղաքական համակարգի արդիականացման քայլեր էին նախաձեռնվում՝ մասնավորապես ստեղծվում էին մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեներ, աշխատանքային խմբեր, նույնիսկ նախարարություններ, որոնք, սակայն, միայն ֆորմալ բնույթ ունեին: Արաբական երկրների կողմից կատարված այդ քայլերը մեծ հաշվով ուղղված էին իրենց իսկ քաղաքական, այսպես կոչված, իմիջը բարձր պահելուն²²⁴:

Ահա և հենց այս իրադրության պայմաններում 2011 թ. սկզբին «արաբական գարունը» ներխուժեց Եգիպտոս:

Փետրվարի 13-ին Եգիպտոսում իշխանությունն անցավ Ջինված ուժերի բարձրագույն խորհրդին՝ գեներալ Հուսեյն Տանտավիի²²⁵ գլխավորությամբ²²⁶: Ջինված ուժերի բարձրագույն խորհուրդը ցրեց խորհրդարանը և ներկայացրեց սահմանադրական փոփոխություններ անցկացնելու մասին պահանջը, որի հիման վրա պետք է ձևավորվեր նոր ժողովրդավարական իշխանական համակարգ և անցկացվեին նոր խորհրդարանական ընտրություններ:

Եգիպտոսում սկսված հակամուփարաքյան հուժկու բողոքների

²²³Հովհաննիսյան Դ., նշվ. աշխ., էջ 10:

²²⁴Գևորգյան Գ.Գ., Մերձավոր Արևելքի արդիականացման խնդիրը. «Արաբական գարունը» և Եգիպտոսը, Ժամանակակից Եվրասիա հ. 2(1), Եր., 2013, էջ 19:

²²⁵Հարկ է նշել, որ Տանտավին առանձնապես մեծ ժողովրդականություն չէր վայելում Եգիպտոսում, և ժողովրդի շրջանում ստացել է «Մուփարաքի պուղել» անունը: Shashak Joshi, Viewpoint: Too early to celebrate in Egypt?, BBC News, 12.02.2011, <http://www.bbc.co.uk>.

²²⁶Hussein Tantawi, head of Egypt's Higher Military Council, Al Arabia, 11.02.2011, <https://www.alarabiya.net>.

զլխավոր դերակատարները եզիպտական հասարակության առավել կրթված շրջանակներն էին, եզիպտական մտավորականները՝ դասախոսներ, արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, ուսանողներ և այլն, որոնց ամփոփ կարող էնք անվանել ազատական-ժողովրդավարական ուժեր:

Արդարացի լինելու համար, հարկավոր է փաստել, որ եզիպտական հասարակությունը դասական քաղաքացիատության տեսանկյունից, ի տարբերություն արաբական մի շարք այլ երկրների հասարակությունների, որոնցից շատերին բնորոշ է ցեղային կառուցվածքը, ավելի կազմակերպված էր, քաղաքական առումով ավելի հասուն և ուներ իշխանությունների դեմ պայքարի ինստիտուցիոնալ հարուստ փորձ:

«Արաբական գարնան» ֆենոմենը հանրապետական Եզիպտոսի պատմության մեջ աննախադեպ էր. ժողովրդավարական արժեքների հիման վրա քաղաքացիական հասարակություն կառուցելուն միտված գործընթացը ձևավորում էր ուրույն քաղաքական դաշտ՝ ըստ էության հավասար իրավունքներ ստեղծելով երկրում քաղաքական բոլոր ուժերի համար²⁷:

Սակայն, հատկանշական է, որ ազատական-ժողովրդավարական շարժման ակտիվացմանը զուգընթաց, Եզիպտոսում «արաբական գարնան» «ֆենոմենի» բնորոշ կողմերից մեկը դարձավ իսլամական գործունի և իսլամամետ կուսակցությունների ու շարժումների ակտիվացումը: Վերջիններիս գործունեությունը, այդ թվում եզիպտական քաղաքական ընդհատակում տասնյակ տարիներ գործող «Մուսուլման եղբայրներ» ընդդիմադիր կրոնաքաղաքական շարժումը, սկսեց նոր թափ ստանալ: Փաստենք, որ տևական ժամանակ արաբական մի շարք երկրներում, այդ թվում և Եզիպտոսում, կրոնաքաղաքական ուժերը եղել են աշխարհիկ վարչակարգերի հիմնական գործուն ընդդիմախոսները, իսկ քաղաքական իսլամը՝ այլախոհության գաղափարական հիմնական աղբյուրներից մեկը: Որոշ երկրներում նրանք գործել են ընդհատակում և դաժանորեն հետապնդվել իշխանությունների կողմից:

Ամենին էլ պատահական չէր, որ «արաբական գարնան» համատեքստում իսլամական գործունը կարողացավ զբաղեցնել արաբա-

²⁷ Համաձայն քաղաքական և քաղաքացիական ազատությունների հետազոտության "Freedom House" կազմակերպության հրապարակած տվյալների՝ Եզիպտոսը 2002-2010 թթ. համարվում էր ոչ ազատ, քաղաքական իրավունքների և ազատությունների խաղաղ բացակայությամբ երկիր, St u Egypt 2010, Freedom in the World, <https://freedomhouse.org/report/freedom-world/2010/egypt>.

կան ազգայնականության ճգնաժամի արդյունքում առաջացած գաղափարական վակուումը²²⁸:

Ավելին, Եգիպտոսի պարագայում վերը նշված ուժերն առաջ քաշեցին պետության կառավարման նոր մոդելի ընտրության հարցը²²⁹: «Մուսուլման եղբայրները», որպես առավել կենսունակ քաղաքական ուժ, դուրս գալով օրինական, թափանցիկ դաշտ, եգիպտական հասարակությանը կանգնեցրեց աշխարհիկության և իսլամականության բևեռների միջև դժվարին ընտրություն կատարելու փաստի առջև²³⁰: Քաղաքական այս վայրիվերումների շրջանը երկրում առաջացրեց ներքաղաքական խորը ճգնաժամ:

Հետմուփարաքյան իշխանության ժառանգորդ Ջինված ուժերի բարձրագույն խորհուրդը, տեղի տալով երկրում քաղաքական դաշտի արմատական բարեփոխումներ սկսելու «եգիպտական փողոցի» պահանջներին, մինևսյն ժամանակ ձգտում էր պահպանել երկրի պետականության աշխարհիկ բնույթը, թեկուզև մեկ այլ բռնապետական վարչակարգի տեսքով: Այդ առումով հետմուփարաքյան Եգիպտոսում արդեն իսկ առկա հասարակական երկփեղկվածությունը և քաղաքական դաշտի բյուրեղացումը կանխորոշեց պետության կառավարման համակարգի որակական նոր փոփոխությունները, որոնք անմիջապես արտացոլվեցին 2011-2012 թթ. կայացած խորհրդարանական ընտրություններում²³¹:

²²⁸Առհասարակ, արաբական ազգայնականության ճգնաժամի մասին քննարկումներն ավելի վաղ են սկսվել, իսկ «արաբական գարունը» այն հստակեցրեց: St' u Dawisha A., Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, <http://www.meforum.org>, volume 10, N.1, Winter, 2003, pp. 25-41.

²²⁹«День гнева» пять лет спустя: что изменилось в Египте, Русская служба BBC, 26.01.2016., <http://www.bbc.com>. Այս շրջանում ակտիվորեն սկսեց քննարկվել Եգիպտոսում կառավարման, այսպես կոչված, «թուրքական մոդելի» ներդրման հավանականությունը, ինչը կապամանավորեր երկրում «չափավոր իսլամամետների» իշխանության գալու նոր հնարավորությունը:

²³⁰Over 37.500 Egyptians to Take Part on January 25th Uprising, տե՛ս The Muslim brotherhood's official English web site, Ikhwanweb, 19.01.2011, <http://www.ikhwanweb.com/article.php?id=27870>.

²³¹Կարևոր է նշել, որ Մուփարաքի պաշտոնակալությունից հետո երկրի ղեկավարման լծակները վերցրած Ջինված ուժերի բարձրագույն խորհուրդը, նպատակ ունենալով հստակեցնել պետության կառավարման մոդելը, ինչպես նաև, որոշ առումով տեղի տալով «եգիպտական փողոցի» ճնշումներին, նախաձեռնեց

3.2 Եզիպտոսի 2011-2012 թթ. խորհրդարանական ընտրությունները. «մեկ մարդ, մեկ ձայն, մեկ անգամ» համակարգի կիրարկման փորձը

Արդի արևմտյան ժողովրդավարության առանցքային հենքային արժեքներից է ընտրական իրավունքներից հավասար օգտվելու սկզբունքը այսպես կոչված «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը, երբ բոլոր համապատասխան տարիքի գործունակ քաղաքացիներն, անկախ իրենց սոցիալական կարգավիճակից, ստանում են ընտրական իրավունք²³²:

Ընտրական այս համակարգի կիրարկում պարագայում գերնպատակ է այս կամ այն ընդդիմության կողմից տվյալ պետության ներկայացուցչական մարմիններում տեղերի մեծամասնություն զբաղեցնելը: Եզիպտոսում խորհրդարանական ընտրությունների ժամանակ իսլամականներն օգտագործեցին արևմտյան ժողովրդավարության ընթացակարգային հենց այդ ընկալումը՝ «մեկ մարդ, մեկ ձայն», որին հետո միայն պետք է ավելանար նաև, այսպես կոչված, «մեկ անգամ» սկզբունքը, որը ենթադրում էր նրանց քաղաքական ընդդիմադիրների համար մրցակցության հնարավորությունների սահմանափակում: Այդպիսով, ստեղծվում էր մի համակարգ, երբ ժողովրդավարությունը տվյալ դեպքում դառնում էր մեկանգամյա միայն հաղթողի համար, քանի որ հետո այն հենց հաղթողի կողմից պետք է խեղաթուրվեր²³³: Պետք է նշել, որ արևմտյան քաղաքագիտական ընկալմամբ «մեկ մարդ,

խորհրդարանական, իսկ հետո նաև նախագահական ընտրությունների կազմակերպման և կայացման գործընթացը:

²³²Ներկայումս բազմաթիվ քաղաքագետներ «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը գնահատում են որպես անարդար և ոչ արդյունավետ: Աջերը կարծում են, որ այն չափից ավել իրավունքներ է տալի պոպուլիստներին, ովքեր հենվում են բնակչության այն հատվածի վրա, որը շատ քիչ ներդրում է կատարում համընդհանուր տնտեսական բարիք ստեղծելու գործում: Ձախերն էլ համոզված են, որ այդ համակարգը ապահովում է «ծերերի» գերակայությունը, այսինքն բնակչության առավել ապահովված շերտերի իրավունքները: Այս բանավեճը վկայում է, որ առաջիկայում «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը կենթարկվի զգալի փոփոխությունների, քանի որ արդի ժողովրդավարությունը, ըստ տարբեր կարծիքների, քայքայման և կերպափոխման շրջան է թևակոխել:

²³³Մեկանգամյա ժողովրդավարության» ընկալման շրջանակներում տեղին է հիշատակել Վեյմարյան հանրապետության ժողովրդավարական համակարգը, որն, ըստ էության, օգնեց Ադոլֆ Հիտլերին գալ իշխանության:

մեկ ձայն» հայեցակարգը, ընտրական իրավունքների հավասարության և արդարության տարբեր մոդելների վերաբերյալ արևմտյան համափիլիսոփայական քննարկման մասնավոր դեպք էր²³⁴:

Օգտագործելով «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը՝ իսլամականները հմտորեն խուսափեցին հակաարևմտյան ինտոդարմալիզմից՝ հռչակելով իրենց հանուն ժողովրդավարության պայքարողներ, մինչդեռ իրականում Եգիպտոսում փորձեցին հիմնել աստվածապետական կարգեր:

Ազգային ժողովի ընտրությունների երեք փուլերից յուրաքանչյուրն անցավ տարբեր ընտրատարածքներում՝ խառը համաչափ քվեարկությամբ: Փորձագետների կարծիքով այս խորհրդարանական ընտրությունները հանրապետական Եգիպտոսում 1952 թ. ի վեր ժողովրդավարական ընտրությունների առաջին փորձն էր²³⁵: Հարկ է նշել, որ նախկինում՝ մասնավորապես 2010 թ., Եգիպտոսում անցկացված խորհրդարանական ընտրություններն ուղեկցվում էին բազմաթիվ ընտրախախտումներով և հասարակական կարգի ռսոնահարմամբ²³⁶:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքները ամփոփելուց առաջ հարկավոր է անդրադառնալ եգիպտական Խորհրդարանի կառուցվածքին: Այսպես, եգիպտական Խորհրդարանը բաղկացած էր երկու պալատից՝ ստորին՝ Ազգային ժողով և վերին՝ Շուրայի խորհուրդ²³⁷: Խորհրդարանի երկու պալատներից միայն ստորինն էր, որ ուներ օրենսդրական լիազորություններ, և այդ առումով այս կամ այն ուժի մեծամասնական ներկայությունը վերջինիս համար ապահովում էր բավական մեծ ազդեցություն: Եգիպտոսի Խորհրդարանի ստորին

²³⁴Մանրամասն տե՛ս Перспективы отмены равного избирательного права и системы «один человек, один голос», Экспертно-аналитическое исследование, Фонд национальной энергетической безопасности, М., октябрь, 2014, <https://www.politanalitika.ru/upload/iblock/fee/feec98442553a6bf7b839bd242e35a37.pdf>.

²³⁵Ranko A., Crossing the Ideological Divide?, նշվ.աշխ.:

²³⁶St' u Amr Hamzawy, Michele Dunne, Brotherhood Enters Election in a Weakened State, Carnegie endowment for international peace, 15.11.2010, <http://carnegieendowment.org/2010/11/15/brotherhood-enters-elections-in-weakened-state/42tv>

²³⁷Համաձայն 2014 թ. սահմանադրական հանրաքվեի՝ եգիպտական խորհրդարանն ունի ընդամենը մեկ պալատ՝ 596 պատգամավորից, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով: 596 պատգամավորից 120-ը ընտրվում է համաձայն կուսակցական ցուցակների, 448-ն անկախ թեկնածուներ են, և ևս 28-ին նշանակում է պետության նախագահը:

պալատը ներկայացնում էր 508 պատգամավոր, որոնք ընտրվում էին 5 տարի ժամկետով: Ընտրված 508-ից 498-ը ընտրվում էր մեծամասնական համակարգով և ևս 10-ը նշանակվում էր պետության նախագահի կողմից: Ընդ որում, 508 պատգամավորներից 332-ը ընտրվում էր կուսակցական ցուցակներով, իսկ 166-ը՝ որպես անկախ թեկնածու²³⁸:

Ինչ վերաբերում է Խորհրդարանի վերին պալատին՝ Շուրայի խորհուրդին, ապա այն ուներ միայն սահմանադրական փոփոխությունները քննարկելու, միջազգային համաձայնագրերի հետ կապված կարծիք հայտնելու հիմնական առաքելություն²³⁹: Վերին պալատը կազմված էր 270 անդամից, որոնք ընտրվում էին 6 տարի ժամկետով²⁴⁰: Ներկայացուցիչների 2/3-ը ընտրվում էր ուղիղ և գաղտնի քվեարկության միջոցով, 1/3-ը նշանակվում էր պետության նախագահի կողմից, 180-ից 120-ն ընտրվում էր կուսակցական ցուցակներով և ևս 60-ն անհատական թեկնածուների համակարգի միջոցով²⁴¹:

2011-2012թթ. նոյեմբերի 28-ից հունվարի 11-ը կայացած եգիպտական Խորհրդարանի ստորին պալատի ընտրություններն անցան երեք փուլով: Առաջին փուլը կայացավ նոյեմբերի 28-29-ից - դեկտեմբերի 5-6-ը, երկրորդը՝ դեկտեմբերի 14-15-ից - դեկտեմբերի 21-22-ը և երրորդը՝ հունվարի 3-4-ից - հունվարի 10-11-ը: Ստորին պալատի ընտրություններին քվեարկողների ակտիվությունը առաջին փուլում կազմեց 65%, երկրորդում՝ 43%, իսկ երրորդում՝ 62%²⁴²:

Նախընտրական պայքարում ներգրավված քաղաքական ուժերի սոցիալական կազմի ու գաղափարական հենքի առումով հարկ ենք համարում ներկայացնել առավել առանցքային քաղաքական ուժերին, ինչն ավելի ընկալելի է դարձնում երկրում ստեղծված քաղաքական բևեռացումները:

²³⁸Сапронова М.А., Египет: 90 лет конституционных трансформаций (1923-2013гг.), М., 2014, с. 85.

²³⁹Նույն տեղում:

²⁴⁰St'u Final Report of the Carter Center Mission to Witness the 2011-2012

Parliamentary Elections in Egypt,

https://www.cartercenter.org/resources/pdfs/news/peace_publications/election_report/s/egypt-2011-2012-final-rpt.pdf.

²⁴¹Նույն տեղում:

²⁴² Մակքամասն տե'ս Egyptian Elections: Preliminary Results, Jadaliyya, 09.01.2012, <http://www.jadaliyya.com>.

Ստորին պալատի նախընտրական պայքարում առանձնանում էին քաղաքական ուժերի 4 հիմնական դաշինքներ, որոնց շուրջ էլ, ըստ էության, վերադասավորվում էին քաղաքական մյուս ուժերի ռազմավարական միությունները²⁴³:

Եգիպտական ընտրազանգվածի ստվար հատվածի վրա թերևս առավել մեծ ազդեցություն ունեն «Ժողովրդավարական միություն»-ը, որը գլխավորում էր «Մուսուլման եղբայրների» քաղաքական թևը՝ «Ազատություն և արդարություն» կուսակցությունը: Այս դաշինքը միավորել էր քաղաքական տարբեր ուժերի և հանդես էր գալիս որպես համագգային միություն, որը կողմ էր ժողովրդավարությանը: Օրինակ՝ այս դաշինքի մեջ ընդգրկվեցին այնպիսի քաղաքական ուժեր, ինչպիսիք էին՝ «ալ-Ղադը», ձախակողմյան «ալ-Քարամա» կուսակցությունը և այլն: Հարկ է նշել, որ «Մուսուլման եղբայրների» և նշված ազատական-ժողովրդավարական կուսակցությունների միջև համագործակցություն սկսվել էր «արաբական գարունից» շատ ավելի վաղ, որոնց միավորում էր Սուբարաքի հրաժարականի պահանջը²⁴⁴: Պետք է փաստել, որ ստորին պալատի ընտրություններից հետո ազատական այս ուժերը տեղի անակնկալի եկան, երբ պարզ դարձավ, որ «Ժողովրդավարական դաշինքի» թեկնածուների 70%-ը «Ազատություն և արդարություն» կուսակցության անդամներից էին²⁴⁵: Եգիպտական հասարակության շարքերում բավականին մեծ հեղինակություն էր վայելում մեկ այլ իսլամիստական ուժ ևս՝ «Իսլամական դաշինքը», որը գլխավորում էր սալաֆիական «ան-Նուր» կուսակցությունը:

Դաշինքի կազմում ընդգրկված էին ևս մի քանի սալաֆիական գաղափարախոսությանը հարող ուժեր: «Ան-Նուր» կուսակցության գլխավոր քարտուղարի պնդմամբ քաղաքական այդ ուժը ձգտում էր կառուցել ժամանակակից պետություն, որտեղ կպահպանվեին իսլա-

²⁴³St' u Final Report of the Carter Center Mission to Witness the 2011-2012 Parliamentary Elections in Egypt, նշվ. աշխ.:

²⁴⁴Сампохова М. А., նշվ. աշխ., էջ 86: Հարկ է նշել, որ այդ ժամանակ «Մուսուլման եղբայրներին» միացել էին «ալ-Ղադ» կուսակցությունը, «Ապրիլի 6-ի» շարժումը և այլն:

²⁴⁵St' u Faris M.D., Constituting Institutions: The Electoral System in Egypt, Middle East Policy Council, Vol. XIX, N 1, Spring, 2012, <http://www.mepc.org/constituting-institutions-electoral-system-egypt>.

մական ինքնաճանաչման սկզբունքները²⁴⁶։ Խորհրդարանական ընտրարշավում մասամբ ազդեցիկ դիրք էր զբաղեցնում «Հեղափոխությունը շարունակվում է» կուսակցությունը, որը ստեղծել էին եգիպտական երիտասարդ հեղափոխականները և «Եգիպտական դաշինքը», որը կազմավորվել էր «Ազատ եգիպտացիներ» կուսակցության շուրջ²⁴⁷։ Այն միավորում էր տարբեր կուսակցություններ և քաղաքական ուժեր՝ ծայրահեղ աջերից մինչև ձախ կենտրոնամետ, օրինակ՝ «ալ-Թա-գամու» կուսակցությունը, Եգիպտոսի «Կոմունիստական կուսակցությունը և այլն»²⁴⁸։

Փաստենք, որ նախընտրական ողջ գործընթացում վերը նշված միությունների և դաշինքների կազմը պարբերաբար փոփոխվում էր, և այդ փոփոխությունը պայմանավորված էր ոչ թե գաղափարախոսության և կամ ծրագրերի ընդհանրություններով, այլ «ուժեղագույնի» հետ խորհրդարան անցնելու հանգամանքով²⁴⁹։

Չնայած նրանց միավորող որոշ գործոններին՝ իրականում այդ կուսակցությունները ներկայացնում էին եգիպտական հասարակության տարբեր խմբեր և շահեր՝ հաճախ առաջնորդվելով իրենց սեփական հետաքրքրություններով։ Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ ձևավորվեց նաև սուֆիական «Հաղթանակի» կուսակցությունը²⁵⁰։

Փորձելով արտաքուստ ցուցադրել երկրում կտրուկ բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամություն՝ Ջինված ուժերի բարձրագույն խորհուրդը 2011 թ. նոյեմբերի 21-ին ընդունեց քաղաքա-

²⁴⁶St' u Nafaa Hassan, Parliamentary elections and the future of the political system in Egypt, Contemporary Arab Affairs, Vol. 9, Issue 2, Taylors & Francis Online, 2016, <http://www.tandfonline.com/doi/full/10.1080/17550912.2016.1157298?src=recsys>

²⁴⁷Նույն տեղում։

²⁴⁸St' u Ranko A., Crossing the Ideological Divide? Egypt's Salafists and the Muslim Brotherhood after the Arab Spring, Studies in conflict & Terrorism Vol. 39, Issue 6, Taylors & Francis Online, 2016, <http://www.tandfonline.com/doi/full/10.1080/1057610X.2015.1116274?src=recsys>.

²⁴⁹Մանրամասն տե՛ս Գևորգյան Գ.Գ., Եգիպտոսի 2011-2012 թթ. Խորհրդարանական ընտրությունները. «մեկ մարդ, մեկ ձայն, մեկ անգամ» համակարգը և «մեկանգամյա ժողովրդավարության» հաղթանակը, Ժամանակակից Եվրասիա, հ. 6 (2), Եր., 2017, էջ 16։

²⁵⁰Царегородцева И.А., Мусульманские группы Египта и их политические партии накануне и после «революции 25 января», <https://publications.hse.ru/preprints/114496156>.

կան մեկուսացման մասին օրենքը, որը միտված էր չթույլատրել նախկինում իշխող «Ազգային ժողովրդավարական» կուսակցության անդամներին մասնակցելու ընտրություններին²⁵¹:

Ստորև ներկայացված են ստորին պալատի ընտրությունների արդյունքները²⁵²:

Աղյուսակ 1

2011-2012 թթ. Խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում (Ստորին պալատ)				
Կուսակցություն	Գաղտնիարական հենք	2012 թ. արդյունքները տոկոսներով	Արդյունքները՝ ըստ ընտրաձայների ցուցանիշների	Տեղերի քանակը 2012 թ.
1.«Ժողովրդավարական միություն հանուն Եգիպտոսի», որը գլխավորում էր «Ազատություն և արդարություն» կուսակցությունը	Իսլամիստական, «Մուսուլման եղբայրներ»	37,5%	10.138.134	«Ազատություն և արդարություն» կուսակցություն-498-ից՝ 235-ը «Արժանապատվության» կուսակցություն - 6 «Լադ ալ-Մաուրա» կուսակցություն - 2 «Բաղադալթոթության» կուսակցություն - 2 «Իսլամական լեյբորիստական» կուսակցություն - 1 «Եգիպտական արաբական սոցիալիստական» կուսակցություն - 1 «Բարեփոխումներ» եգիպտական կուսակցություն- 1 «Փոխկապակցված անկախ» կուսակցություն - 9

²⁵¹Elections in Egypt: Implications of Recent Court Decisions on the Electoral Framework, Middle East and North Africa International Foundation for Electoral Systems, 09.08.2012,

http://www.ifes.org/sites/default/files/egypt_scc_decisions_august9.pdf.

²⁵²Տե՛ս Egyptian Elections: Preliminary Results, Jadaliyya, 09.01.2012, նշվ.աշխ.: <http://www.jadaliyya.com/Details/24732/Egyptian-Elections-Preliminary-Results-%5BUPDATED%5D>.

2.«Իսլամիստական բռնություն» կուսակցությունները	Իսլամիստական, սալաֆիական	27,8%	7.534.266	120 տեղ «Ան-Նուր» կուսակցություն – 107 «Կառուցման և զարգացման» կուսակցություն – 13 «Իրականության» կուսակցություն – 3
3.«Վաֆդ» նոր կուսակցություն	Ազգային-ազատական	9,2%	2.480.391	38
4.«Եզիպտական բռնություն» միություն	Սոցիալ-ազատական	8,9%	2.402.238	34
5.«Ալ-Վասաթ» միություն	Ժամանակակից իսլամիստական հայացքներ	3,7%	989.003	10
«Բարեփոխման» և զարգացման» կուսակցություն	Ազատական	2,2%	604.415	9
6.«Հեղափոխությունը շարունակվում է» միություն	Հակաակադեմիական	2,8%	745.863	7
7.«Եզիպտոսի ազգային» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,6%	425.025	5
8.«Ազատության» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական, կուսակցության ճյուղավորում)	1,9%	514.029	4
9.«Քաղաքացիների եզիպտական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0,9%	235.395	4

10.«Միութենական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.5%	141.382	2
11.«Պախանդական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1.0%	272.910	1
12.«Աշխարհի դեմոկրատական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.9%	248.281	1
13.«Արդարության» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.7%	184.553	1
14.«Միասնության արաբական եզիպական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.6%	149.253	1
Անկախ թեկնածուներ	Առաջադրված էին տարրեր ընդդիմադիր ուժերի կողմից			21

Խորհրդարանի ստորին պալատի ընտրությունների երեք փուլերի արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց «Ազատություն և արդարություն» կուսակցությունը՝ հավաքելով ընտրաձայների 37,5%-ը²⁵³ 498 տեղից զբաղեցնելով 235 տեղը, երկրորդը՝ սալաֆիական գաղափարախոսությամբ «ան-Նուր»²⁵⁴ կուսակցությունն էր, որը, հավաքելով ընտրաձայների 27,8%-ը, ստորին պալատում ապահովեց 120 տեղ²⁵⁵։ Այդպիսով, ստորին պալատի ընտրություններում իսլամական բոլոր ուժերը գրանցեցին բացահայտ հաղթանակ՝ ամբողջացնելով և հաստատելով իրենց ազդեցիկ հասարակական և քաղաքական դերակատարությունը²⁵⁶։

Ինչ վերաբերում է ընտրապայքարում ներգրավված ազատական-ժողովրդավարական և աշխարհիկ կողմնորշմամբ ուժերին, ապա վերջիններս զբաղեցրին չափազանց թույլ դիրքեր. մասնավորապես՝ ազգային-ազատական «Նոր վաֆդ» կուսակցությունը զբաղեցրեց երրորդ տեղը՝ ստորին պալատում հավաքելով ընտրաձայների ընդամենը 9,2%-ը²⁵⁷։

²⁵³Egypt's Islamist parties win elections to parliament, BBC News, 21.01.2012, <http://www.bbc.com/news/world-middle-east-16665748>.

²⁵⁴Օայրահեղ պահպանողական «ան-Նուր» կուսակցությունը գործունեության թույլտվություն ստացավ 2011 թ. հունիսի 13-ին, որն էլ ըստ էության համարվում է կուսակցության ստեղծման տարեթիվը։ Կուսակցությունը միավորեց եգիպտական սալաֆիական շարժումները։ Եգիպտոսում սալաֆիական շարժումը, որն ավելի շատ հայտնի է «ալ-Դաուա» անվամբ, սկսվել էր 1970-ականներին Ալեքսանդրիայի համալսարանում, և արդեն 1980-ականներին ամրապնդել էր իր դիրքերը։ Նախկինում սալաֆիականները չէին ցանկանում մասնակցել քաղաքական զարգացումներին և չմիացան «Մուսուլման եղբայրներին»։ Նրանք չմասնակցեցին նաև հակաիշխանական բողոքներին, միայն Մուբարաքի պաշտոնակալությունից հետո հայտարարեցին, որ զբաղվելու են քաղաքականությամբ։

²⁵⁵Հետաքրքրական է, որ դեռ 2005 թ. «Մուսուլման եղբայրներին» ներկայացուցիչներն ազգային ժողովի ընտրություններում, հանդես գալով որպես անկախ թեկնածուներ, կարողացան հավաքել ընտրողների ձայների 20%-ը՝ ձևավորելով եգիպտական ազգային ժողովի ամենախոշոր խմբակցություններից մեկը։

²⁵⁶2012 Egyptian Parliamentary Elections, տե՛ս Carnegie endowment for international peace, 22.01.2015, <http://carnegieendowment.org>.

²⁵⁷Տե՛ս Muslim Brotherhood tops Egyptian poll result, 22.01.2012, <http://www.aljazeera.com>.

Ըստ էության, քաղաքական առումով խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում կարևոր գործոն դարձան քաղաքական որակապես նոր իրադրության ձևավորման համար: Սա հանրապետական Եգիպտոսի քաղաքական պատմության մեջ դեռ նախադեպը չունեցող մի իրավիճակ էր, երբ իսլամականները թափանցիկ ընտրությունների միջոցով կարողացան ստանձնել պետության կառավարման լծակները: Հետխորհրդարանական զարգացումները Եգիպտոսում բյուրեղացրին նաև «մեկանգամյա ժողովրդավարության» գործոնը: Իսլամականներն, իշխանական լծակներ ձեռք բերելով, հավասար ընտրական իրավունքների միջոցով նախաձեռնեցին այդ նույն հավասար ընտրական իրավունքների խեղաթյուրման գործընթացը: Իշխանության գալով՝ իսլամականները նպատակադրված էին հետագա ընտրություններում չեղարկելու մնացած բոլոր քաղաքական ուժերի հաղթանակի փորձերը: Տվյալ հանգամանքը Եգիպտոսում առավել ցայտուն դրսևորվեց նախագահական ընտրություններից հետո, երբ «Մուսուլման եղբայրների» կողմից առաջադրված և ընտրված Մուհամմեդ Մուրսին սկսեց պետության իսլամականացման գործընթացը: ԱՄՆ-ը դրական գնահատեց ընտրական գործընթացներն ու ընտրությունների արդյունքները, քանի որ իսլամականների հաղթանակը մեծ հաշվով համապատասխանում էր Վաշինգտոնի կողմից արաբական աշխարհի որակական նոր փոփոխությունների ընկալմանը:

Իրականում «եգիպտական հեղափոխության» ակունքներում կանգնած ազատական ուժերը, ինչու ոչ, նաև աշխարհիկ հայացքներ ունեցող Զինվորականների բարձրագույն խորհուրդը ամերիկյան վարչակազմից չէր սպասում նման արձագանք: Վերոնշյալ ուժերը կարծում էին, որ Վաշինգտոնին մեծ հաշվով ձեռնառու էր երկրում նոր հետադիմական քաղաքական համակարգի հաստատումը:

Խորհրդարանի վերին պալատի Շուրայի խորհրդի ընտրությունները կայացան երկու փուլով՝ 2012թ. հունվարի 29-30-ը և փետրվարի 21-22-ը²⁵⁸:

Ստորև ներկայացվող աղյուսակում զետեղված են Եգիպտոսում Խորհրդարանի վերին պալատի ընտրությունների արդյունքները²⁵⁹.

²⁵⁸St' u Final Report of the Carter Center, նշվ. աշխ.:

²⁵⁹Լույս տեղում:

Եգիպտոսի խորհրդարանի վերին պալատի ընտրությունների արդյունքները (2012 թ. հունվար-փետրվար)				
Կուսակցություն	Գաղափարական հենք	Արդյունքները տոկոսներով	Բացարձակ ցուցանիշների արդյունքները	Ընդամենը տեղեր
1.«Դեմոկրատական դաշինք հանուն Եգիպտոսի» («Ազատություն և արդարություն» կուսակցության գլխավորությամբ)	Իսլամիստական «Մուսուլման եղբայրներ»	45,04%	2 894 922	105
2.«Իսլամիստական դաշինք» «Ան-Նուր» կուսակցության գլխավորությամբ	Իսլամիստական-սալաֆիական	28,63%	1 840 014	45
3.«Նոր Վաֆդ»	Ազգային-ազատական	8,45%	543 417	14
4.«Եգիպտական բլոկ»	Մոցիալ-ազատական	5,43%	348 957	8
5.«Ազատության կուսակցություն»	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,32%	84 936	3
6.«Աշխարհի ժողովրդավարական կուսակցություն»	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,48%	95 273	1
7. Անկախ թեկնածուներ	Առաջադրված էին տարբեր քաղաքական ընդդիմադիր ուժերի կողմից			90

Փաստորեն վերին պալատի ընտրություններում ես իսլամական ուժերը տարան համոզիչ հաղթանակ՝ զբաղեցնելով Շուրայի խորհրդի մեծամասնությունը²⁶⁰։ Եգիպտոսում իսլամականներն առաջին անգամ

²⁶⁰Исламисты выиграли выборы в верхнюю палату Египта, 26.02.2018, <https://news.tut.by/world/276124.html>.

ժողովրդավարական ընտրությունների արդյունքում կարողացան զբաղեցնել պատգամավորական տեղերի մեծամասնությունը խորհրդարանի թե՛ ստորին և թե՛ վերին պալատներում: Մակայն դեպքերի զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, որ իշխանության լծակների մոտ գտնվող զինվորականությունն ամեննին էլ չէր ցանկանում իր դիրքերը զիջել իսլամականներին: Հենց այդ պատճառով էլ 2012 թ. հունիսի 14-ին Եգիպտոսի Գերագույն սահմանադրական դատարանը որոշեց, որ խորհրդարանի վերին պալատի ընտրություններն անցել են սահմանադրության խախտմամբ, և հաղթողների մեկ երրորդն անօրինական էր ընտրված: Մասնավորապես, հանրային դժգոհություն չառաջացնելու նպատակով, դատարանն իր որոշումը փորձեց հիմնավորել այն պատճառաբանությամբ, որ ընտրությունների ընթացակարգը չի համապատասխանել եգիպտական ընտրական համակարգի սկզբունքներին²⁶¹: Այսպիսով, օրենքի ոչ կատարյալ լինելու արդյունքում անկախ թեկնածուները չկարողացան զբաղեցնել համապատասխան քանակությամբ աթոռներ խորհրդարանում:

Հատկանշական է, որ վերին պալատի ընտրություններից առաջ, դատարանի որոշմամբ, չեղարկվեց ընտրություններին Մուբարաքի դեկավարած «Ազգային ժողովրդավարական» կուսակցության մասնակցության՝ նախկինում ընդունված արգելքը, ինչի արդյունքում մուբարաքյան իշխանության հետ կապ ունեցող քաղաքական որոշ խմբավորումներին հնարավորություն տրվեց մասնակցելու ընտրություններին: Որպես հիմնավորում նշվում էր այն փաստարկը, որ տվյալ արգելքը սահմանափակում էր քաղաքացիների ազատ ընտրության իրավունքը և խախտում էր ժողովրդավարական երկրում հավասար քաղաքական մասնակցություն ունենալու սկզբունքը:

Փորձագետների մի մասի գնահատմամբ՝ ընտրությունների արդյունքների չեղարկումը եգիպտական հասարակության մեջ անվստահության մթնոլորտ ձևավորեց արդեն իսկ խարխուլված եգիպտական ընտրական ինստիտուտի նկատմամբ:

Այս ամենը, համընկնելով նախագահական ընտրաբշարի ակտիվ շրջանի հետ, բացասական ազդեցություն ունեցավ՝ նվազեցնելով նախագահական ընտրություններում բնակչության մասնակցության ակ-

²⁶¹ Brotherhoods' Fahmy named Egypt Shura Council speaker, Ahramonline, 28.02.2018, <http://english.ahram.org>.

տիվությունը²⁶²։ Պետք է փաստել, որ խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում ընդգծեցին երկակի միտումները։ Մի կողմից ընտրությունները հաստատեցին իսլամական շարժումների և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության բարձր վարկանիշն ու հեղինակությունը բնակչության մեծամասնության շրջանում, մյուս կողմից՝ ժամանակի հեռանկարում հասկանալի դարձավ, որ ազատական-ժողովրդավարական գաղափարները որպես հենքային արժեք դեռևս ընկալելի չեն եգիպտական հասարակության լայն զանգավածների համար։ Մինևույն ժամանակ իսլամիստների հաղթարշավը խորհրդարանական ընտրություններում, իսկ հետո նաև «Մուսուլման եղբայրների» թեկնածու Մուհամմեդ Մուրսիի՝ Եգիպտոսի նախագահ ընտրվելը պայմանավորեցին երկրի սրընթաց շարժումը դեպի ատվածապետական կարգերի հաստատում։

Սա էր այն առանցքային պատճառը, որ խորհրդարանական ընտրություններին հաջորդած նախագահական ընտրություններից հետո «եգիպտական հեղափոխական ուժերը» երկրի պետական կառավարման մոդելի հարցում դարձյալ նախընտրեցին զինվորական վերնախավի վարչակարգը, որի վառ ապացույցն էր Աբդել Ֆաթահ Ա-Մուսիի կողմից իրականացված 2013 թ. հուլիսի 3-ի ռազմական հեղաշրջումը։

3.3 2012 թ. այլընտրանքային նախագահական ընտրությունները Եգիպտոսում. իսլամիստների հաղթարշավը և «մեկնագալմա ժողովրդավարության» ներդրման փորձը

2011 թ. փետրվար - 2012 թ. մայիս-հունիս ժամանակահատվածը Եգիպտոսի համար դարձավ նոր փորձությունների շրջան։ Մոցիալական հարաբերական արդարության և քաղաքական ազատության օբյեկտիվորեն հասունացած հեղափոխական հենքի վրա սկսված «արաբական գարունը», շատերի, այդ թվում նաև Արևմուտքի համար, ստեղծեց աննախադեպ իրադրություն։ Հասկանալի դարձավ, որ «արաբական փողոցի» զգալի հատվածը՝ սկսված ըմբոստության գլխավոր դերում, եգիպտական լիբերալ-ժողովրդավարական հայացքներ ունեցող ուժերի փոխարեն, նախընտրեց տեսնել իսլամիստներին²⁶³։ Նման ընտրության

²⁶²He игнорирует фальсификацию выборов в Египте, 24.01.2012, <http://ru.danielpipes.org/10571/ne-ignorirujte-falsifikatsiyu-vyborov-v-egipte>.

²⁶³Իսլամիստական շարժումներից առավել հայտնի եգիպտական «Մուսուլման

պարագայում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ արաբական մի շարք երկրներում, մասնավորապես նաև Եգիպտոսում, տևական ժամանակ առկա ազգայնական գաղափարների ճգնաժամը²⁶⁴ ստեղծեց ազատ, այլընտրանքային ընտրություն կատարելու բացառիկ հնարավորություն՝ հոգուտ իսլամիստական շարժումների²⁶⁵։ Օրինակ՝ երբեմնի գաղափարական շարժիչ ուժ հանդիսացող «նասերականությունը» արդեն տևական ժամանակ էր ինչ կորցրել էր իր արդյունավետությունն, իսկ նրա վերապրուկները չէին կարող այլևս իշխանության և ժողովրդի միջև համախմբման գործոն հանդիսանալ։

Այդ պարագայում, անտարակաույս է, որ «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը 20-րդ դարի սկզբից

եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը, հայտարարեց, որ հրաժարվում է ծայրահեղ դրսևորումներից՝ հռչակելով իրեն չափավոր։ St u Bozhniklo novoe politicheskoe ponyatie – умеренный исламизм. Все воспринимают его как меньшее из зол, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1326658560>, 16.01.2012r. Միևնույն ժամանակ դասական քաղաքական տեսության դպրոցների տեսանկյունից դժվար է որևէ ծայրահեղական շարժման դիտարկել չափավորության հարթակում։ Օրինակ՝ ֆաշիստական-նացիստական ուժերի «չափավոր թև» ձևակերպումը և այլն։ Ելնելով նշվածից և Եգիպտոսում ընթացող ներկա զարգացումներից կարելի է փաստել, որ «չափավոր իսլամիզմը» ընդհամենը հոետորակաւություն է։

²⁶⁴Առհասարակ, արաբական ազգայնականության ճգնաժամի մասին քննարկումներն ավելի վաղ են սկսվել, իսկ «արաբական զարնան» շարժումներն այն հստակեցրեցին։ St u Dawisha A., Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, տն u <http://www.meforum.org/518/requiem-for-arab-nationalism>, winter 2003, Volume 10, N1, pp. 25-41.

²⁶⁵Տևական ժամանակ արաբական մի շարք երկրներում կրոնաքաղաքական ուժերը եղել են աշխարհիկ վարչակարգերի հիմնական գործոն ընդդիմախոսները, իսկ քաղաքական իսլամը՝ այլախոհության գաղափարական հիմնական աղբյուրներից մեկը։ Որոշ երկրներում նրանք գործել են ընդհատակում և դաժանորեն հետապնդվել իշխանությունների կողմից։ Ամենին էլ պատահական չէ, որ «արաբական զարնան» համատեքստում իսլամիզմը կարողացավ լցնել գաղափարախոսական այն «տորիչեյան դատարկությունը», որն արաբական երկրներում առաջացել էր բավական երկարատև ժամանակի ընթացքում՝ սոցիալական «երջանկության և արդարության» նոր հույսեր որոնելու ընթացքում։ «Արաբական զարնան» անմիջական արդյունքներից կարելի է համարել Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր և Միջին Արևելքի որոշ երկրներում հասարակական-քաղաքական զարգացումների վրա իսլամական գործոնի բացահայտ ազդեցությունը։

ծավալած իր ընդդիմադիր գործունեությամբ և աշխարհընկալմամբ կարողացավ ոչ միայն զբաղեցնել պետությունում առկա գաղափարական բացվածքը, այն յուրովի հասունացրեց եգիպտական հասարակությունը «ցամառ» օրվան, իսկ որոշ առումով նաև քաղաքացիական զարթոնքի միտման գործոն դարձավ²⁶⁶:

Առհասարակ հասկանալի է, որ «արաբական գարնան» գործընթացների բնորոշ կողմերից մեկը դարձավ հենց իսլամական գործունի ակտիվացումը և իսլամամետ կուսակցությունների ու շարժումների ակտիվությունը: Վերջիններս, այդ թվում և «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը Եգիպտոսում, տասնամյակների ընթացքում ենթարկվելով որոշակի փորձությունների ու վերափոխումների, սկսեցին նոր թափ ստանալ: Ավելին՝ Եգիպտոսի պարագայում վերը նշված ուժերն առաջ քաշեցին պետության կառավարման նոր մոդելի ընտրության հարցը: Ակտիվորեն սկսեց քննարկվել, այսպես կոչված, թուրքական մոդելի ներդրման հնարավորությունը, ինչը նշանակում էր արաբական երկրներում և, մասնավորապես, Եգիպտոսում, կամ, չափավոր իսլամամետների իշխանության գալու նոր հնարավորությունը:

Ասվածի շրջանակներում հետաքրքրականն այն է, որ եգիպտական հեղափոխությանը, ըստ էության, իսլամամետներն արձագանքեցին ավելի ուշ՝ նախապես հայտարարելով, որ չեն ձգտելու իշխանության: Սակայն, արդեն 2011թ. ապրիլի 30-ին, «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը ստեղծեց իր քաղաքական թերթ՝ «Ազատություն և արդարություն» կուսակցությունը: ԱԱԿ-ն հայտարարեց չափավոր իսլամիստական գաղափարներին հետևելու իր ուղղագիծը ընդծելով, որ կողմ է ժողովրդավարությանը, սոցիալական կյանքում պահպանողականությանը, կանանց քաղաքականության մեջ ներգրավելուն, սատարում է ազատ շուկայական հարաբերությունները և գտնում է, որ զբոսաշրջությունը հանդիսանում է Եգիպտոսի ազգային եկամտի հիմնական աղբյուրը²⁶⁷: Այսինքն, չափավոր իսլամիստների առաջ քաշած այս դրույթները Եգիպտոսը պետք է դարձնեին քաղաքականապես ավելի ազատ, զբոսաշրջության համար

²⁶⁶Over 37.500 Egyptians to Take Part on January 25th Uprising, տե՛ս <http://www.ikhwanweb.com/article.php?id=27870>, 19.01.2011.

²⁶⁷Egypt's Islamists announce own political party,

<http://www.dawn.com/news/625028/egypts-islamists-announce-own-political-party>, 30.04.2011.

գրավիչ և ներդրումների համար չափազանց բարենպաստ երկիր: Մակայն, Եգիպտոսում ընթացող բռնի զարգացումները շուտով պետք է բյուրեղացնեն իրավիճակը՝ ի ցույց դնելով իսլամիստների և, այսպես կոչված, չափավորների միջև տարբերությունների բացակայության հանգամանքը:

Չափազանց կարևոր է ընդգծել, որ սկսված «արաբական գարուն», օտարերկրյա մի շարք ուժերի՝ մասնավորապես ԱՄՆ-ի համար, վերջին 40-50 տարիների ընթացքում ստեղծված առավել նպաստավոր իրադրությունն էր տարածաշրջանում իրենց նկրտումներն իրագործելու հարցում²⁶⁸: 20-րդ դարի վերջին քաղաքական համակարգերի արդիականացումը և ժողովրդավարացումը ԱՄՆ-ի համար դարձել էին նեոգաղութացման մահալ, որի միջոցով կարելի էր փորձել միջազգային հանրությանը համոզել այս կամ այն պետության ղեկավարության հանցավոր լինելը, ինչպես դա եղավ, օրինակ՝ Իրաքի պարագայում²⁶⁹:

Արաբական աշխարհի արդիականացման և կերպափոխման խնդիրը տևական ժամանակ քննարկման առարկա էր ԱՄՆ-ում, իսկ հետո նաև արևմտաեվրոպական մի շարք երկրներում²⁷⁰: Ասվածի շրջանակներում դեռ 2007 թ. ԱՄՆ-ի ազգային զինվորական ակադեմիայի նախկին փոխգնդապետ Ռալֆ Փեթերսը "Armed Forces Journal" ամսագրում հրապարակված «Արյունոտ սահմանները» վերնագրով հոդվածում, քննարկվում էր, այսպես կոչված, «Մեծ Մերձավոր Արևելքի» ազգային պետությունների հավանական սահմանների հարցը²⁷¹: Համաձայն այդ տեսության՝ ամերիկյան մոտեցման մեջ առկա է տվյալ տարածաշրջանի ազգային հարստությունները հսկելու ձգտումը, առաջին հերթին էներգակիրները, որի իրականացման համար անհրաժեշտ էր ստեղծել ոչ կենսունակ, գաճաճ պետությունների շղթա՝ այսպես ասած,

²⁶⁸Зинин Ю.Н., "Арабская весна" в повестке дня экспертного сообщества России, <http://ehd.mgimo.ru/IORManagerMgimo/file?id=CA29F12F-D299-0793-09BA-2DFA63B78EB7>.

²⁶⁹Մանրամասն տե՛ս 2012թ. այլընտրանքային «Ժողովրդավարական» նախագահական ընտրությունները Եգիպտոսում և իսլամականների հաղթարշավը, Ժամանակակից Եվրասիա, հ. 5 (1), Եր., 2016, էջ 73:

²⁷⁰Shireen T. Hunter, Modernization and Democratization in the Muslim World, <http://www.gees.org/documentos/Documen-089.pdf>.

²⁷¹Peters R., Blood borders, How a better Middle East would look, <http://www.armed-forcesjournal.com/2006/06/1833899>, 01.06.2006.

«սոմալիականացել» Մերձավոր Արևելքը²⁷²։ Փեթերսը նշում էր, որ հարկավոր է տարածաշրջանում ստեղծել անկայունության, քաոսի և բռնության ալիք, որը կսկսվի Լիբանանից՝ ներառելով Պաղեստինը, Միդիան, Իրաքը, Օմգի արաբական երկրները, Իրանը և կիսասիի միևնույն Աֆղանստան, որտեղ բաշխված են ՆԱՏՕ-ի զորքերը²⁷³։ Վերլուծելով Փեթերսի կողմից առաջադրված տեսությունը՝ կարելի է եզրակացնել, որ այն Մերձավոր Արևելքում անգլո-ամերիկյան-խորայելական յուրա-հատուկ ռազմական գործողությունների բնույթի ճանապարհային քարտեզ է²⁷⁴։

²⁷²Сологубовский Н., Ливия: “сомализация” или “катаризация”? <http://trueinform.ru/modules.php?name=News&file=article&sid=3671>, 08.03.2012. Առանձին տեսակետների համաձայն՝ Մերձավոր Արևելքի, այսպես կոչված, միավորումը պետք է լինի սահուն և ընդգրկուն, այլ ոչ տարերայնորեն, քանի որ նշված տարածաշրջանի երկրներում քաղաքական և տնտեսական իրավիճակը տարբեր է։ Հարկավոր է հաշվի առնել նաև այդ երկրներում սոցիալական, մշակութային և կրթական աստիճանը։

²⁷³Փեթերսի տեսության համաձայն պետք է ձևավորվի բարոյալքված ազգային ոգի, որն էլ քայքայում է պետությունը և ազգային-մշակութային ավանդույթները, որոնց փոխարեն ակտիվանում են տարբեր կրոնական-քաղաքական ծայրահեղ շարժումներ։ Ապագադափարականացումը, գաղափարական պլյուրալիզմը, ազգային արժեքների առաջաստի այլումը, նյութական արժեքների կարիքի կտրուկ բարձրացումը՝ առաջին հերթին «արաբական փողոցի» կողմից, տնտեսության կառավարման լծակների կորուստը, ժողովրդավարության գաղափարական անաբեկությունը և այլասեռումը, որը հաճախ ազգային-դավանաբանական երանգ է ստանում գիտականորեն մշակված և փորձագետների կողմից մատուցված է, որը «կառավարելի քաոսի» հիմքն է։ Այս ամենը ծառայում է գոյություն ունեցող արդի ազգային պետությունների, ավանդույթային մշակույթների և քաղաքակրթությունների ապամոտաժման գործին։ Համաձայն գլոբալականացման կոլոմակիցների նրանց փոխարեն պետք է գա հանրություն, որը չի ունենա հիշողություն, ինչն իր հերթին ձեռք է բերվում հատուկ տեխնոլոգիաների միջոցով, որոնք վերաբերում են ՋԼՄ-ների և կրթական ոլորտին։ Այսպիսով՝ «կառավարելի քաոսն» ինչ-որ իմաստով զանգվածային ոչնչացման զենքի տեսակ է այն պետությունների համար, որոնք ձգտում են համաշխարհային տիրապետության։ St u Peters R., Blood borders, How a better Middle East would look, նաև՝ Nazemroava M.D., Plans for Redrawing the Middle East: The Project for a «New Middle East», <http://www.globalresearch.ca/plans-for-redrawing-the-middle-east-the-project-for-a-new-middle-east/3882>, 18.11.2006.

²⁷⁴Peters R., Blood borders, How a better Middle East would look, նշվ. աշխ.։

Հետևաբար, ԱՄՆ-ի համար արաբական աշխարհի «սոմալիականացումը» կամ ջլատումն ավելի շատ հնարավոր կոռուսար այն դեպքում, երբ արաբական երկրներում իշխանության գային իսլամիստները, քանի որ տվյալ պարագայում կիոչակվեին աստվածապետական կարգեր, կամ՝ խալիֆայություններ, որոնք էլ 21-րդ դարի սկզբին կապահովեին այդ երկրների զարգացման հետընթացը, կրանց դանդաղ գահավիժումը դեպի միջնադար²⁷⁵:

Արաբական երկրներում, և մասնավորապես Եգիպտոսում ընթացող որակապես նոր քաղաքական զարգացումների նկատմամբ ԱՄՆ-ի դրական դիրքորոշման մասին է վկայում նաև անսախադեպ թափանցիկ և անաչառ խորհրդարանական ընտրություններին հաջորդած այլընտրանքային նախագահական ընտրությունների արդյունքների հավանությունը: Առհասարակ, Արևմուտքը և մասնավորապես ԱՄՆ-ը, սառը պատերազմի ավարտից հետո պարբերաբար արծարծում էին Մերձավոր Արևելքի որոշ երկրների հասարակական-քաղաքական համակարգերի արդիականացման անհրաժեշտության հարցը:

Արդարացի լինելու համար պետք է նշել, որ սկսած XX դ. 80-90-ական թվականներից գլոբալականացման գործընթացների համատեքստում արաբական մի շարք երկրների կողմից քաղաքական համակարգի արդիականացման քայլեր էին նախաձեռնվում, մասնավորապես՝ ստեղծվում էին մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեներ, աշխատանքային խմբեր, նույնիսկ նախարարություններ էին ստեղծվում, որոնք, սակայն, սուկ ձևական բնույթ էին կրում: Մեծ հաշվով արաբական այդ երկրների կողմից կատարված նմանատիպ քայլերը միտված էին իրենց իսկ քաղաքական կարգավիճակը ամրապնդելուն և վերարտադրելուն:

Հանրապետական Եգիպտոսի պատմության մեջ առաջին այլընտրանքային նախագահական ընտրությունները կայացան 2005 թ. սեպտեմբերի 7-ին, որոնց ընթացքում հաղթանակ տարավ դարձյալ

²⁷⁵ շարքի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Փաշայան Ա., Ամեն դար ունի իր միջնադարը. Խալիֆայություն 21-րդ դարում, <https://168.am/2014/07/13/387020.html>, 13.07.2014, Օրինակ՝ «արաբական զարնանը» հաջորդած զարգացումները և, մասնավորապես, սիրիական ճգնաժամը աչքի է ընկնում սոսկալի ու աննարդկային դաժանություններով ու բռնություններով, որի հետևում միայն «Իսլամական պետությունը» չէր, այլ մոլեկրոն ու ծայրահեղական, անդրազգային սալաֆիական-վահաբական բազմաթիվ ռազմաքաղաքական խմբավորումներ:

1981 թ. իշխանության գլուխ կանգնած Հոսնի Մուբարաքը²⁷⁶: Նշված ընտրությունները հնարավոր եղավ անցկացնել 2005 թ. մայիսի 25-ին Եգիպտոսի սահմանադրության մեջ փոփոխություններ անելուց հետո, ինչը հնարավորություն էր ընձեռում գործող կուսակցություններին նախագահի թեկնածուներ առաջադրել: Համաձայն սահմանադրական փոփոխությունների սկսած 2011 թ. նախագահական ընտրություններին թեկնածուներ առաջադրելու իրավունք կունենա միայն այն կուսակցությունը, որն առնվազն հինգ տարիների ընթացքում եգիպտական խորհրդարանի ստորին և վերին պալատներում կապահովի պատգամավորական մանդատների 5%-ը²⁷⁷:

Մուբարաքի պաշտոնակցությունից հետո երկրի ղեկավարման լծակները վերցրած Ջինվաձ ուժերի բարձրագույն խորհուրդը, նպատակ ունենալով հստակեցնել պետության կառավարման համակարգը, ինչպես նաև, որոշ առումով տեղի տալով «արաբական փողոցի» ճնշումներին, նախաձեռնեց խորհրդարանական և նախագահական ընտրությունների կազմակերպման և կայացման գործընթացը:

Պետք է նշել, որ Ջինվորականների բարձրագույն խորհուրդը, ըստ էության, 1,5 տարիների ընթացքում կազմակերպեց Սահմանադրական հռչակագրի հանրաքվե, սակայն մինչև խորհրդարանական և նախագահական ընտրությունները այդպես էլ չկարողացան հստակեցնել Եգիպտոսի սահմանադրությունը:

Խորհրդարանական ընտրությունները պետք է հանգուցալուծեին երկրում ձևավորված իրավիճակը, համաձայն որի ուժերի երեք հիմնական բևեռ կար իսլամիստները, ազատական-ժողովրդավարականները և Ջինվաձ ուժերի բարձրագույն խորհուրդի որոշ գործիչներ, որոնց հարում էին նաև Մուբարաքի իշխանության վերապրուկները հանդիսացող մի շարք նախկին պետական այրեր:

Արդարացի լինելու համար հարկավոր է նշել, որ դեռ 2005 թ. «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչները ազգային ժողովի ընտրություններում, հանդես գալով որպես անկախ թեկնածուներ, կարողացան հավաքել ընտրողների ձայների 20%-ը ձևավորելով եգիպտական ազգային ժողովի ամենախոշոր խմբակցություններից մեկը²⁷⁸:

²⁷⁶Sharp J. M., Egypt: 2005 Presidential and Parliamentary Elections, տե՛ս <http://fpc.state.gov/documents/organization/54274.pdf>, 21.09.2005.

²⁷⁷Mariz Tadros, Egypt's Election All About Image, Almost, Middle East Report Online, տե՛ս <http://www.merip.org/mero/mero090605>, 06.09.2005.

²⁷⁸Конституция с поправкой на сына, Коммерсант, М., 21.11.2006, <https://www.>

Իրականում, եգիպտական հեղափոխության ակունքում կանգնած ազատական ուժերը, ինչու ոչ, նաև աշխարհիկ հայացքներ ունեցող Զինվորականների բարձրագույն խորհուրդը, չէին ակնկալում իրադրության նման զարգացումը: Խորհրդարանական ընտրությունների անցկացման կարգից և արդյունքներից դրական արձագանք ստացվեց նաև պաշտոնական Վաշինգտոնից:

Այս իմաստով չափազանց հետաքրքրական են Եգիպտոսում կայացած նախագահական ընտրությունները, որոնց արդյունքներն ըստ էության նոր իսլամիստական Եգիպտոս կառուցելու փորձ դարձան: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ նախագահական այս ընտրություններն, ի տարբերություն զանգվածային ընտրակեղծիքների պայմաններում անցկացված նախորդ բոլոր ընտրությունների, աննախադեպ էին թե՛ թափանցիկությամբ, թե՛ արդարությամբ: Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը նախաձեռնել էր աննախադեպ քայլեր ընտրությունները անաչառ և ժողովրդավարական չափորոշիչներին համապատասխան անկցկացնելու համար:

Ընտրությունների օրը Եգիպտոսում միաժամանակ բացվեցին շուրջ 14.000 ընտրատեղամասեր, որոնցից յուրաքանչյուրում պետք է ներկա գտնվեր երկրի դատական համակարգից մեկ դատավոր, որն էլ պետք է գլխավորապես վերահսկեր ընտրակարգը²⁷⁹: Բացի դատավորներից ընտրատարածքներում ներկա գտնվեցին եգիպտական և օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչներ, իսկ դրսում կարգը պաշտպանեցին ոստիկանները և զինվորականները²⁸⁰: Ընտրությունների վերաբերյալ միջազգային հանրությանը ստույգ տեղեկատվություն փոխանցելու նպատակով հրավիրվեցին նաև շուրջ 50 երկրներից ժամանած դիտորդներ: Դիտորդներ հրավիրվեցին նաև Արաբական պետությունների լիգայից և Աֆրիկյան դաշինքից²⁸¹:

Բավականին հետաքրքիր մոտեցում էր սահմանվել նիքաբա կրող, ընտրող կանանց համար: Նրանք պարտավոր էին իրենց դեմքը ցույց տալ հանձնաժողովի անդամներից մեկին, այլապես չէին թույլատրվի մասնակցել ընտրություններին: Այդ նպատակով իշխանություն-

kommersant.ru/doc/723355.

²⁷⁹Egypt's historic election-Wednesday 23 May, <https://www.theguardian.com>, 23.05.2012.

²⁸⁰Egyptian Presidential Elections, տե՛ս <http://english.dohainstitute.org>, 28.08.2012.

²⁸¹В Египте завершилась подготовка к первым президентским выборам, <https://ria.ru>, 21.05.2012.

ները ընտրատարածքներ ուղղորդեցին դատական համակարգում աշխատող կանանց²⁸²:

Փոխվել էր նաև քվեաթերթիկի ձևը, մասնավորապես՝ յուրաքանչյուր քվեաթերթիկ ուներ անվտանգության մի քանի աստիճաններ: Յուրաքանչյուր քվեաթերթիկ ուներ դաջվածքով կնիք, ինչպես նաև հատուկ նշագրում, որը կարելի էր կարդալ միայն հատուկ սարքի միջոցով: Ընտրատուները պետք է փակված լինեին հատուկ կողպեղներով, իսկ անգրագետ ընտրողների համար քվեաթերթիկներում թեկնածուի անվան առջև դրվում էր հատուկ նշան, որի կողքին փակցված էր վերջինիս նկարը: Այս ամենից բացի, քվեարկողը քվեարկությունից առաջ մասը պետք է ընկղմեր թանաքամանի մեջ, որը մատի վրա պահպանվում էր 48 ժամ, ինչը պետք է բացառեր կրկնակի քվեարկությունը²⁸³:

Ընտրարշավը Եգիպտոսում տևեց երեք շաբաթ և պետության համար դարձավ վերջին տասնամյակների ամենավառ իրադարձություններից մեկը: Նախագահի թեկնածուները ծախսեցին միլիոնավոր դոլարներ իրենց գովազդի և քարոզարշավի վրա: Երկրի պատմության մեջ առաջին անգամ առավել հայտնի թեկնածուների մասնակցությամբ կայացավ հեռուստաբանավեճ:

Եգիպտոսում նախագահական ընտրություններին մասնակցելու համար հայտ էր ներկայացրել ընդամենը 23 թեկնածու, սակայն Բարձրագույն ընտրական հանձնաժողովը թույլտրեց միայն 13-ին: Համաձայն հասարակական հարցմանը, 13 թեկնածուներից առավել մեծ հեղինակություն էին վայելում 5-ը, որոնցից յուրաքանչյուրը ըստ էության կարող էր 2-րդ փուլ անցնել:

Օրինակ, առաջին տեղը զբաղեցնում էր ԱՊԼ նախկին գլխավոր քարտուղար 75-ամյա Ամր Մուսան, երկրորդ տեղում էր Եգիպտոսի նախկին վարչապետ Ահմեդ Շաֆիքը, երրորդ տեղում՝ անկախ թեկնածու իսլամիստ Աբդ ալ-Մոնեյմ Աբու Ալ-Ֆութուհը, չորրորդ տեղում «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչ Մուհամմեդ Մուրսին և վերջապես հինգերորդ տեղում՝ սոցիալիստ Համդեն աու Սաբբահին:

Կարծում ենք չափազանց հետաքրքրական կլինի համառոտ ներկայացնել հավանական 5 թեկնածուների տեղն ու դերը եգիպտական

²⁸²Египет впервые за десятилетия выбирает президента: страну может возглавить исламист, 23.05.2012, <http://palm.newsru.com/world/23may2012/egypt1.html>.

²⁸³Նույն տեղում:

հասարակությունում և քարոզարշավում արված հիմնական շեշտադրումները: Այսպես՝ ԱՊԼ նախկին գլխավոր քարտուղար, ինչպես նաև Եգիպտոսի արտաքին գործերի նախարար 75-ամյա Ամր Մուսսան օգտագործում էր այն կովանը, որ ինքը Մուֆարաքի իշխանության տարիներին միշտ ընդդիմադիր է եղել և, ամենակարևորը, երբեք չի եղել իշխող կուսակցության անդամ: Ամր Մուսսան նաև Իսրայելին պարբերաբար դատապարտող գործչի համբավ ուներ: Նրան հիմնականում սատարում էին կայունության և պետության ժառանգորդության կողմնակիցները, քանի որ վերջինս պնդում էր օգտագործելով իր հեղինակությունը միջազգային ասպերեզում կկարողանա վերականգնել Եգիպտոսի խարխլված դիրքերը²⁸⁴: Ամր Մուսսան նաև Թուրքիայի և Իրանի հետ հարաբերությունները զարգացնելու կոչ էր անում: Ամր Մուսսան ծավալուն քարոզարշավ իրականացրեց գյուղական բնակավայրերում՝ խոստանալով միջին ունեցվածքի տեր մարդկանց մեղմ բարեփոխումներ իրականացնել երկրում իր նախագահ ընտրվելու պարագայում²⁸⁵:

Ահմեդ Շաֆիքը՝ Եգիպտոսի ռազմաօդային ուժերի նախկին հրամանատարը և նախկին վարչապետը, սուր քննադատության էր ենթարկվում իսլամիստների կողմից, քանի որ նա եղել էր իշխանությունից հեռացված նախագահ Մուֆարաքի թիմից: Շաֆիքը քարոզարշավի ընթացքում ձեռք բերեց բավականին կողմնակիցներ, քանի որ խոստանում էր ընտրվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, երկրում հաստատել կայունություն, իսկ փողոցներում՝ անվտանգություն: Շաֆիքի ընդդիմախոսները պնդում էին, որ նա նաև զինվորականների թեկնածուն է²⁸⁶:

ԱԱԿ նախագահ 60-ամյա Մուհամմեդ Մուրսին²⁸⁷, սկզբնական շրջանում առաջադրվեց իբրև պահեստային թեկնածու և առաջին պլան

²⁸⁴Amr Mussas' campaign "in good spirits" one week before the big day, տե՛ս <http://english.ahram.org.eg/NewsContent/36/122/41850/Presidential-elections-/Presidential-elections-news/Amr-Moussas-campaign-in-good-spirits-one-week-befo.aspx>, 17.05.2012.

²⁸⁵Amr Mussas' campaign "in good spirits" one week before the big day, նշվ.աշխ.:

²⁸⁶Egypt's former PM Ahmed Shafiq banned from presidential race, 24.04.2012, <https://www.alarabiya.net/articles/2012/04/24/210046.html>.

²⁸⁷Մուրսին մասնագիտությամբ ինժեներ է, կրթությունը ստացել է ԱՄՆ-ում: Ունի խորհրդարանական աշխատանքի փորձ, Մուֆարաքի իշխանության շրջանում մի քանի անգամ ընտրվել է պատգամավոր իբրև անկախ թեկնածու: Դիտորդների կարծիքով, դուրս մնացած Շաուիրն ավելի շատ վստահություն էր

դուրս եկավ միայն այն բանից հետո, երբ նախագահի թեկնածուների ցուցակից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից դուրս հանվեց «Մուսուլման եղբայրների» հիմնական թեկնածու Նաբրաթ Շատիրը, որը կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալն էր: Արդյունքում «Մուսուլման եղբայրները» սատարեցին Մուրսիին²⁸⁸:

Աբու Ալ-Ֆութուհն աչքի էր ընկնում չափավոր իսլամամետ հայացքներով: 2011թ. նա հեռացվեց «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունից, երբ հայտարարեց, որ նախագահ դառնալու նկրտումներ ունի²⁸⁹: «Մուսուլման եղբայրները» միայն նրա արտաքսումից հետո հայտարարեցին, որ կմասնակցեն նախագահական ընտրություններին: 60-ամյա գործիչը խոստանում էր մասշտաբային ժողովրդավարական բարեփոխումներ: Նրա լիբերալ հայացքների հիմքում դրված է իսլամական բազան և ազնիվ, սկզբունքային մարդու կերպարը: Վերջինիս կողմնակիցների հիմնական զանգվածը արտասահմանում բնակվող եգիպտացիներն էին²⁹⁰:

Համդին Աս-Սաֆահին նախկին թղթակից է, համարվում էր եգիպտական ընդդիմության վետերանը: Սաֆահին համարվում էր Նասերի գաղափարների հետևորդը, անմիջական մասնակցություն է ունեցել 2011 թ. հակաիշխանական ցույցերին: Նրան սատարում էին երիտասարդական տարբեր շարժումներ և արհմիություններ, քանի որ նրա գաղափարական հայեցակարգում կային նաև սոցիալիստական հայացքներ: Նրա կողմնակիցները պաստառներին ներկայացնում էին Սաֆահին իբրև իրենցից մեկը՝ այսպես կոչված, ժողովրդի տղա²⁹¹:

ներշնչում հասարակությանը, քան Մուրսին: Վերջինս խոստանում էր վերացնել իշխանության կոռումպացված ինստիտուտները, լայնորեն ներդնել շարիաթական նորմերը պետության կառավարման մեջ: St u Named Egypt's Winner, Islamist Makes History, <http://www.nytimes.com/2012/06/25/world/middleeast/mohamed-morsi-of-muslim-brotherhood-declared-as-egypts-president.html>, 24.06.2012.

²⁸⁸St u Named Egypt's Winner, Islamist Makes History, 24.06.2012,

<http://www.nytimes.com/2012/06/25/world/middleeast/mohamed-morsi-of-muslim-brotherhood-declared-as-egypts-president.html>.

²⁸⁹Egypt candidate: Moderate Islamist, Abdul Moneim Aboul Fotouh, <http://www.bbc.com/news/world-middle-east-17356253>, 13.04.2012.

²⁹⁰Egypt candidate: Moderate Islamist, Abdul Moneim Aboul Fotouh, <http://www.aljazeera.com>, 12.04.2012.

²⁹¹Egypt's surprise candidate: Hamdeen Sabahi, <http://www.aljazeera.com>, 04.06.2012, նաև՝ Hamdeen Sabbahi, <http://english.ahram.org>, 02.04.2012.

Նախագահական ընտրություններն անցան 2 փուլով, քանի որ առաջին փուլում կողմերից և ոչ ոք չկարողացավ հաղթահարել ընտրաձայների 50%-ի շեմը: Ընտրությունների առաջին փուլը կայացավ 2012 թ. մայիսի 23-24-ին, իսկ երկրորդը՝ հունիսի 16-17-ին²⁹²:

Ընտրությունների ցուցանիշները հստակ հասկանալու համար ստորև ներկայացնում ենք քվեարկության արդյունքները.

Աղյուսակ 3

2012թ. Եզիպտոսի նախագահական ընտրությունների առաջին փուլ (2012թ. մայիսի 23-24)				
	Թեկնածու	Թեկնածուի քաղաքական պատկանելիություն	Ընտրությունների արդյունքները ըստ տեղուների	Ընտրությունների Արդյունքները ըստ ընտրաձայների
1	Մոհամմադ Մուբսի	«Ազատություն և արդարություն» կուսակցության 1-ին քարտուղար (2011-2012 թթ.)	24,78%	5.764.952
2	Անմեդ Շաֆիք	Եզիպտոսի 58-րդ վարչապետը (01.2011-02.2011թթ.), անցումային կառավարության 1-ին քարտուղար (02.2011-03.2011թթ.), Եզիպտոսի քաղ.ավիացիայի նախարար (2002-2011թթ.)	23,66%	5.505.327
3	Համդին աս Սաբախի	«Արժանապատվության կուսակցություն», լրագրող, Մուբարաքի իշխանության ակտիվ ընդդիմադիր, «Քիֆայա» շարժման հիմնադիր:	20,72	4.820.273
4	Աբդ ալ Մոնեյմ Աբու ալ Ֆուտուհ	Անկախ թեկնածու, «Մուսուլմանեղբայրների» ոչ ֆորմալ առաջնորդներից մեկն է:	17,47	4.065.239
5	Ամր Մուսա	Անկախ թեկնածու, Եզիպտոսի արտաքին գործերի նախարար (1991-2001թթ.), ԱՊԼ գլխավոր քարտուղար (2001-2011թթ.)	11,13	2.588.850
6	Մոհամմեդ Մալիմ ալ Աուա	Անկախ թեկնածու, «Մշակույթի և երկխոսության եզիպտական ասոցիացիայի» ղեկավար	1,01	235.374
7	Խալեդ Ալի	Անկախ թեկնածու, իրավապաշտպան փաստաբան, «Տնտեսական և	0,58	134.056

²⁹² Եզիպտոսի 83 մլն բնակչության միայն շուրջ 50,5 մլն է միայն օգտվում ընտրական իրավունքից:

		սոցիալական իրավունքների» եզիպտական կենտրոնի ղեկավար:		
8	Աբու ալ Իզ ալ Հարիրի	«Մոցիալիտական ժողովրդական ալիանս»-ի ղեկավար, Ալեքսանդրիայի խորհրդարանի անդամ	0,17	40.090
9	Հիշամ Բաստավիսի	Ազգային-առաջադիմական երիտասարդական կուսակցության նախագահ, Եզիպտոսի Մահմանադրական դատարանի Փոխնախագահ	0,13	29,189
10	Մահմուդ Հուսամ	«Մլիզբ» կուսակցություն, նստիկանության նախկին սպա	0,10	23.992
11	Մուհամմեդ Ֆաուզի Իսա	«Մերեդի ժողովրդական» կուսակ- ցություն, նախկին ռադիկալ	0,10	23.889
12	Հուսամ Հեյրուլլա	«Նադաուդյան ժողովրդավարա- կան», կուսակցություն, նախկին հետախույզ, Եզիպտոսի տեղե- կատվության և վիճակագրության վարչության ղեկավար	0,09	22.036
13	Աբդալա ալ Աշալ	«Իսկություն» կուսակցություն, դի- վանագետ, միջազգային իրավունքի մասնագետ:	0,05	12.249

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլն ամբողջա-
կանացիում է ընտրողների մեծ մասի համակրանքը դեպի իսլամիստ-
ները:

Աղյուսակ 4

2012թ. Եզիպտոսի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ (2012թ. հունիսի 16-17)				
	Թեկնածու	Թեկնածուի քաղաքական պատկանելություն	Ընտրությու- նների արդյունե- րերն ըստ տոկոսների	Ընտրությունների արդյունքներն ըստ ընտրատեղիների
1.	Մուհամմեդ Մուրսի	«Ազատություն և արդարություն» կուսակցության 1-ին քարտուղար (2011-2012 թթ.)	51,73	13.230.131
2.	Ահմեդ Շաֆիք	Եզիպտոսի 58-րդ վարչապետը (01.2011-02.2011թթ.), անցումային կառավարության 1-ին քարտու- ղար(02.2011-03.2011թթ.), Եզիպտոսի քաղաքականության նա- խարար (2002-2011 թթ.)	48,27	12.347.380

Ներկայացված աղյուսակում տեսանելի է նաև ընտրողների ներ-
կայության ցածր տոկոսը՝ առաջին փուլում 46,42% և երկրորդում՝
51.85%: Այս հանգամանքը կարող է բացատրվել ոչ միայն «ժողովրդա-

վարական ընտրություն» գաղափարի ավանդույթի բացակայության, այլև բնակչության սովոր գանգվածի ապաքաղաքականացված լինելու հանգամանքով: Հարկ է նշել նաև, որ տնական ժամանակ Եգիպտոսի բնակչությունը զրկված է եղել պետության քաղաքական կյանքին իրական միջամտելու կարողությունից, ինչը թե՛ դեգրատացրել է, և թե՛ ստեղծել անկոմային իրավիճակ ներակայի և ապագայի նկատմամբ: Քաղաքական կյանքի նկատմամբ ցածր հետաքրքրությունը հաստատում են նաև տարբեր լրատվամիջոցների կատարած հետազոտության արդյունքները, որոնց համաձայն հարցումներին մասնակցած Եգիպտոսի բնակչության մոտ 78,5% համոզված են, որ երկրում անցկացվող ընտրությունները ոչինչ չեն փոխի²⁹³:

Այս ամենի արդյունքում հաղթեց Մուհամմեդ Մուրսին: Հետաքրքրական է այն, որ Մուրսիի թեկնածության մասնակցությունն ընտրություններում հաստատվեց միայն Բարձրագույն ընտրական հանձնաժողովի կողմից «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ներկայացուցիչ Նայրաթ Շատերի թեկնածությունը մերժելուց հետո: Այսինքն, ստացվում է, որ ընտրություններին իրական նշանակություն ունեցավ ոչ թե թեկնածուի անձը, այլ տվյալ դեպքում կուսակցության դիրքորոշումը:

Ստանձնելով Եգիպտոսի նախագահի պաշտոնը՝ Մուհամմադ Մուրսին առաջին հերթին փորձեց ամրապնդել իր իշխանությունը: 2012 թ. հուլիսին Մուրսին վերականգնեց Եգիպտոսի Բարձրագույն սահմանադրական դատարանի կողմից կասեցված եգիպտական խորհրդարանի «իսլամիստական» վերին պալատի գործունեությունը²⁹⁴: Այս քայլով Մուրսին փորձեց ամրապնդել եգիպտական քաղաքական իշխանության իսլամիստական թևը՝ ի հակակշիռ զինվորականների: Այնուհետև, 2012 թ. օգոստոսի 12-ին Մուրսին պաշտոնանկ արեց Ջինված ուժերի բարձրագույն խորհրդի ղեկավար, Եգիպտոսի պաշտպանության նախարար Հուսեյն Տանտաուիին և Գլխավոր շտաբի պետ

²⁹³Грабелъников А.А., Тамух Мохаммед Анасс, СМИ и президентские выборы в Египте после революции, file:///C:/Users/GG/Downloads/smi-i-prezidentskie-vybory-v-egipte-posle-revolutsii%20(2).pdf.

²⁹⁴Билан В.Н., Взлет и падение президента АРЕ М.Мурси, 05.07.2013, <http://www.iimes.ru/?p=17860>.

գեներալ Սամի Անանին՝ նրանց նշանակելով նախագահի խորհրդականներ²⁹⁵:

Բանն այն, որ Մուրսիին տեղեկացրել էին, թե Տանտաուին գաղտնի կերպով օգոստոսի վերջին հակակառավարական ցույցեր է կազմակերպելու՝ Մուրսիի իշխանությունը «ժողովրդական ցասման» միջոցով տապալելու նպատակով: Նորընտիր նախագահը պետք է շատ արագ գործեր իրավիճակը հսկողության տակ պահելու նպատակով: Այդ իսկ պատճառով Մուրսին ոչ միայն արագ պաշտոնանկ արեց Տանտաուին, այլև նշանակեց նրան նախագահի խորհրդական վերջինիս անմիջականորեն վերահսկելու համար: Տանտաուի պաշտոնում որպես առավել չեզոք զինվորականի, Մուրսին նշանակում է Արտաքին հետախուզության պետ Արդուլ Ֆաթահ աս- Միսիին²⁹⁶:

Տանտաուիին հեռացնելով իշխանությունից, Մուրսին, ըստ էության, խախտեց զինվորականների և իսլամիստների միջև հաստատված ուժերի հարաբերակցությունը, որն, ըստ էության, վաղ թե ուշ պետք է բերեր ներքաղաքական նոր առճակատման:

Մուրսիի ձեռնարկած քայլերը վկայում էին, որ նա իսլամիստական թևի հետ միասին փորձելու է երկիրը միանձնյա ղեկավարել: Պետք է փաստել, որ ներքաղաքական դաշտում Մուրսիի դիրքերին վստահություն էր տալիս ԱՄՆ-ի դիրքորոշումը, որը Տանտաուիին պաշտոնանկ անելուց հետո հայտարարեց, թե Եգիպտոսը Մուրսիի ղեկավարության ներքո ընթանում է ժողովրդավարության ուղով²⁹⁷: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնն առաջինն էր Արևմուտքի բարձրաստիճան պաշտոնյաներից, ով Մուրսիի նախագահ ընտրվելուց հետո անմիջապես այցելեց Եգիպտոս՝ իր գորակցությունը նորընտիր նախագահին հայտնելու համար²⁹⁸:

Եգիպտոսի նախագահի հաջորդ քայլը միտված էր նախագահական լիազորությունների ընդարձակմանը և դատաիրավական դաշտի գործառույթների սահմանափակմանը: Այս նախաձեռնությունների

²⁹⁵Pipes D., How Morsi Took Power in Egypt, 13.11.2012, National Review, <https://www.nationalreview.com/2012/11/how-morsi-took-power-egypt-daniel-pipes-cynthia-farahat>.

²⁹⁶ Նույն տեղում:

²⁹⁷Билан В.Н., նշվ. աշխ.:

²⁹⁸В Израиль привезли слово о мире, 17.07.2012, Коммерсант, <https://www.kommersant.ru/doc/1981965>.

իրականացման համար Մուրսին սահմանադրական «բարեփոխումներ» նախաձեռնեց:

2012 թվականի նոյեմբերի 22-ին Մուրսին ստորագրեց սահմանադրական հռչակագիրը, որով դատարանները զրկվում էին խորհրդարանի վերին պալատն ու Սահմանադրական խորհրդաժողովը ցրելու լիազորություններից: Բացի այդ, երկրի նախագահն օժտված էր ընդունել ցանկացած հրամանագիր, որն ուղղված էր հեղափոխության պաշտպանությանը, և որը չէր կարող վիճարկվել դատական կարգով²⁹⁹: Նոր սահմանադրությունը հիմնականում կառուցված էր շարիաթի օրենքների հիման վրա, ինչը բոյկոտեցին Մուրսիին ընդդիմադիր ուժերը³⁰⁰: Դատական իշխանության ներկայացուցիչներն՝ իրենց հերթին Մուրսիին մեղադրեցին իշխանության զավթման և բռնապետական նոր վարչակարգի ստեղծման մեջ³⁰¹:

Ակնհայտ էր, որ երկիրը սկսել էր ընթանալ կյանքի բոլոր ոլորտների իսլամականացման ուղով³⁰²:

2013 թ. Եգիպտոսի համար կրկին սկսվեց նոր հուժկու բողոքների ալիքով: Զանգվածային ցույցերին մասնակցող ակտիվիստներն այս անգամ պահանջում էին նախագահ Մուհամմեդ Մուրսիի հրաժարականը: Ցույցերը և բողոքի ակցիաները ընթանում էին Եգիպտոսի գրեթե բոլոր քաղաքներում:

2013 թ. հունվարի դրությամբ Մուհամմեդ Մուրսիի դեմ ձևավորված ընդդիմությունը համախմբված էր երեք հիմնական խմբավորումներում.

1. «Ազգային փրկության ճակատ» (ԱՓՃ). այս դաշինքը համախմբում էր ավելի քան 35 քաղաքական կուսակցություններ և խմբավորումներ, որոնց կենտրոնում կանգնած էին «Սահմանադրական կուսակցությունը» Մուհամմեդ Ալ-Բարադեի գլխավորությամբ, «Ժողովրդական շարժումը», Համդին Մաբախի առաջնորդությամբ և «Կոնգ-

²⁹⁹Birnbaum M., Egypt's President Morsi takes sweeping new powers, <https://www.washingtonpost.com>, 22.11.2012.

³⁰⁰Արևմտամետ կողմնորոշում ունեցող հոսանքներ, որոնք ցանկանում էին սահմանադրության մեջ ամրագրել մարդու իրավունքների պաշտպանության և կրոնական ազատությունների վերաբերող դրույթներ:

³⁰¹Egypt's President Mursi assumes sweeping powers, 22.11.2012, <http://www.bbc.com/news/world-middle-east-20451208>.

³⁰²Հեռուստատեսության հաղորդավարների և անգամ արգելվեց հանդես գալ առանց գլխաշորերի:

րեսի կուսակցությունը», որը ղեկավարում էր Ամր Մուսան: ԱՓՃ-ն կազմավորվեց 2012 թ. նոյեմբերին ի պատասխան Մուրսիի կողմից նախագահական լիազորությունների ընդարձակման վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների ընդունման: ԱՓՃ-ում միավորված ուժերը պահանջում էին Մուրսիի հրաժարականը: ԱՓՃ-ն միավորում էր երկրի ազատական-դեմոկրատական ուժերը, որոնց ֆինանսավորումը, ի դեպ, մասամբ իրականացվում էր նաև մուբարաքյան թիմի նախկին պաշտոնյաների կողմից³⁰³:

2. *Սալաֆիներ*. այս ուժերը համախմբված էին իսլամիստական «ան-Նուր» կուսակցության շուրջ: Սալաֆիների և իշխանությունների միջև հիմնական հակասությունները պայմանավորված էին եգիպտական կառավարությունում սալաֆիների ներգրավվածության սահմանափակ թվաքանակով, թեպետև վերջիններս խորհրդարանական ընտրություններում հավաքել էին ընտրաձայների շուրջ 29%-ը: Սալաֆիները աջակցություն էին գտնում նաև Սաուդյան Արաբիայի և Կատարի կողմից: Սալաֆիները ևս պահանջում էին Մուրսիի հրաժարականը և պետում էին, որ «Մուսուլման եղբայրների» և ժողովրդի միջև կապը կտրվել է, քանի որ վերջիններս վարում էին անհեռատես քաղաքականություն:

3. *«Մև դաշինք»*. սա նոր ընդդիմադիր ուժ էր, որն առաջին անգամ Թահրիրում հայտնվեց 2013 թ. հունվարին: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ այս խմբավորման մեջ մտնում են նաև դպսիները, որոնք նման ձևով փորձում էին պայքարել «Մուսուլման եղբայրների» դեմ: Խմբավորումը չունեւ հստակ քաղաքական ծրագիր և պահանջում էր Մուրսիի հրաժարականը:

2013 թ. հունվարից ներքաղաքական իրադրությունը Եգիպտոսում էլ ավելի սրվեց: Համաձայն եգիպտական սահմանադրության՝ նախագահը կարող էր պաշտոնանկ արվել այն դեպքում, եթե խորհրդարանի ստորին պալատի պատգամավորների 2/3-ը կողմ էր քվեարկում նախագահին անվստահություն հայտնելուն: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ ԱՓՃ-ն սկսեց ստորագրահավաք կազմակերպել Մուրսիի հրաժարականը պահանջելու համար:

Միննույն ժամանակ, ԱՓՃ-ն սկսեց «թամարուր»³⁰⁴ ակցիան, որի

³⁰³Крол А. А., Египет: силы противостоящие президенту М. Мурси, 06.02.2013, <http://www.iimes.ru/?p=16722>.

³⁰⁴Արաբերենից թարգմանաբար նշանակում է ընդվզում:

շրջանակներում մի քանի ամիս շուրջ 6000 ակտիվիստներ փողոցում Մուրսիի հրաժարականի ստորագրահավաք էին անցկացնում³⁰⁵:

Բավական հետաքրքրական է նաև Մուրսիի վարած արտաքին քաղաքականությունը, որն արմատապես տարբերվում էր նախորդ նախագահի արտաքին քաղաքական ուղեգծից:

Մուհամմեդ Մուրսին Իրանի հետ հարաբերությունների վերականգնման ջատագովներից էր՝ մինևույն ժամանակ ուշադրության կենտրոնում պահելով նաև Մոցի արաբական երկրների, մասնավորապես Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունները³⁰⁶: Ասվածի վառ դրսևորումներից էր Մուրսիի առաջին այցելությունը Էռ-Ռիյադ, իսկ 2012 թ. օգոստոսին՝ նաև Թեհրան³⁰⁷: Ի դեպ, Եգիպտոսի նախագահներից Մուրսին առաջինն էր, ով պաշտոնապես այցելեց Իրան: Երկու նախագահների հանդիպման ընթացքում որոշվեց նաև վերականգնել երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները: Իրան կատարած այցելության ընթացքում Մուրսին խիստ քննադատության ենթարկեց նաև Սիրիայի նախագահ Բաշար Ասադին՝ վերջինիս իշխանությունն անվանելով ոչ օրինակարգ³⁰⁸:

Արդեն 2013 թ. փետրվարի 5-ին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեջադը պաշտոնական այցով Կահիրեում էր: Ուշագրավ է, որ սա 1979 թ. Իրանում իսլամական հեղափոխությունից հետո իրանական առաջնորդներից առաջինն այցն էր:

Առհասարակ, շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Եգիպտոսում իսլամիստների հաղթանակի գործում ոչ պակաս մեծ դերակատարություն ունեին նաև տարածաշրջանի այլ հզոր խաղացողները, որոնցից էին, օրինակ՝ Իրանը, Սաուդյան Արաբիան և Կատարը,

³⁰⁵Tamarod campaign gathers momentum among Egypt's opposition, 27.06.2013, The Guardian, <https://www.theguardian.com/world/2013/jun/27/tamarod-egypt-morsi-campaign-oppsition-resignation>.

³⁰⁶Egypt-Israel Peace Treaty, 26-March, 1979, Israel Ministry of Foreign Affairs, <http://www.mfa.gov.il/mfa/foreignpolicy/peace/guide/pages/israel-egypt%20peace%20treaty.aspx>.

³⁰⁷Հարկ է նշել, որ Իրան կատարած այցելության ժամանակ Մուրսին խիստ քննադատության արժանացրեց Սիրիայի նախագահ Բաշար Ասադին իշխանությունից չհրաժարվելու համար:

³⁰⁸Долгов Б., Развитие «арабской весны»: предварительные итоги, 02.11.2012, http://www.perspektivy.info/book/razvitije_arabskoj-vesny_predvaritelnyje_itogi_2012-11-02.htm.

որոնք ֆինանսավորում էին պահպանողական մի շարք եգիպտական կուսակցությունների և անկախ թեկնածուների նախընտրական գործունեությունը: Ըստ առկա տեղեկությունների՝ Սաուդյան Արաբիայից և Կատարից ստացվող ֆինանսավորումն իրականացվում էր տեղի իշխող արքայական ընտանիքների գանձարանից, իսկ Իրանից ստացվող ֆինանսավորման անմիջական աղբյուրն Իրանի հոգևոր առաջնորդ ալաթոլլահ Ալի Ռամենեին էր³⁰⁹: Եգիպտոսում և արաբական այլ երկրներում բռնկված հեղափոխական տրամադրությունները կարող էին հասնել նաև Իրան, իսկ նոր հնարավորությունները բացատրվում էր նրանով, որ Եգիպտոսի նոր կառավարության հետ հնարավոր էր ավելի սերտ հարաբերություններ ստեղծել, ինչպես նաև կյանքի կոչել իսլամական հեղափոխությունն արտահանելու վերաբերյալ Ռամենիի գաղափարները:

Վերդառնալով Եգիպտոսում ստեղծված ներքաղաքական ճգնաժամին՝ պետք է փաստել, որ նախագահության կարճ ժամանակաշրջանում Մուհամմեդ Մուրսին որպես «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչ, փորձում էր հակաժողովրդավարական տարբեր եղանակներով ամեն կերպ իսլամականացնել Եգիպտոսը: Հնդդիությունը շատ կարճ ժամանակաշրջանում Մուրսիի դեմ հավաքեց շուրջ 22 միլիոն ստորագրություն, որը գրեթե 10 միլիոնով ավելի շատ էր, քան այն ընտրողների ձայնը, որոնց շնորհիվ Մուրսին ընտրվել էր նախագահ³¹⁰:

2013 թվականի հուլիսի 3-ին Եգիպտոսի պաշտպանության նախարար Աբդել Ֆաթահ Աս-Միսին հայտարարեց նախագահ Մուհամմեդ Մուրսիի տապալման և սահմանադրության գործողության դադարեցման մասին: Հաջորդ օրը Մուրսի նկատմամբ տնային կալանքի որոշում կայացվեց, որից հետո նա, մի շարք մեղադրանքների առաջադրմամբ, կալանավորվեց³¹¹:

Հուլիսի 5-ին Կահիրեում զինվորականները կրակեցին այն ցուցարարների վրա, ովքեր հանդես էին գալիս ռազմական բռնապետության դեմ և հոգուտ նախկին նախագահ Մուրսիի: Բախումների ար-

³⁰⁹Плещунов Ф., Победа исламистов на выборах в Северной Африке: чего ждать Западу?, 08.12.2011, <http://www.iimes.ru/?p=13788>.

³¹⁰Оппозиция Египта: петиция против Мурси собрала 22 миллиона подписей, 29.06.2013, <https://www.kommersant.ru/doc/2223430>.

³¹¹Lynch S., Report: Arrest of former egypt president morsi ordered, 26.07.2013, <http://islam.ru>.

դյունքում զոհվեց մոտ 51 մարդ³¹²: Տասնյակ հազարավոր մարդիկ դուրս էին եկել Ալեքսանդրիայի և Ասյուտի փողոցներ՝ պահանջելով վերականգնել նրան նախագահի պաշտոնում և կասեցնել ժամանակավոր կառավարության գործունեությունը: Միաժամանակ, Մուհամմեդ Մուրսիի քաղաքական վարչակարգի տասնյակ հազարավոր հակառակորդներ հավաքվեցին Թահրիր հրապարակում, որպեսզի ցույց տան, որ ռազմական հեղաշրջում իրականացնող բանակը հիմնվում է ժողովրդական լայն աջակցության վրա:

Ռազմական հեղաշրջմանը իրենց աջակցության մասին հայտարարեցին դպրոցական եկեղեցու առաջնորդ Թավադոս 2-րդը և ԱՓՃ-ն: Նախագահի լիազորությունների ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց երկրի Սահմանադրական դատարանի նախագահ Ադլի Մանսուրը³¹³:

2013 թվականի հուլիսի 9-ին Եգիպտոսում վարչապետի պաշտոնում ժամանակավորապես նշանակվում է լիբերալ հայացքներով աչքի ընկնող Հազեմ Ալ-Բեբլաուին, որը նախկինում զբաղեցնում էր ֆինանսների նախարարի պաշտոնը³¹⁴:

2013 թ. հուլիսի 26-ին Մուհամմեդ Մուրսիին պաշտոնական մեղադրանք առաջադրվեց քրեակատարողական հիմնարկների հրկիզման և բանտային փաստաթղթային հաշվետվությունների ոչնչացման, երկրում բռնության գործողություններ ձեռնարկելու, ոստիկանական բաժանմունքների և զինվորականների վրա հարձակվելու նպատակով պաղեստինյան «Համաս» խմբավորման հետ համագործակցության, ոստիկանների, զինվորականների և որոշ ձեռքալված անձանց դիտավորյալ սպանության, ինչպես նաև որոշ ոստիկանների և զինվորականների առևանգման համար³¹⁵:

Ռազմական հեղաշրջման արդյունքում կազմավորված ժամանակավոր կառավարությունը մեկամսյա ժամկետով սահմանեց արտա-

³¹²Kingsley P., At least 51 protesters killed in Egypt as army opens fire 'like pouring rain', 08.07.2013, <https://www.theguardian.com/world/2013/jul/08/egypt-clashes-morsi-muslim-brotherhood-military>.

³¹³Bowen J., Egypt crisis: Army ousts President Mohammed Morsi, 04.07.2013, <http://www.bbc.com>.

³¹⁴Hazem el-Beblawi named as Egypt's interim prime minister, 09.07.2013, The Telegraph, <https://www.telegraph.co.uk>.

³¹⁵Prosecutor orders ousted Egypt President Morsi's arrest over Hamas links, 26.07.2013, <https://www.rt.com>.

կարգ իրավիճակ: 2014 թ. մայիսի վերջին Եգիպտոսում կայացան նախագահական նոր ընտրություններ, որոնց արդյունքում նախագահ ընտրվեց Աբդել Ֆաթահ Աս-Սիսին³¹⁶:

Վերլուծելով և ի մի բերելով Եգիպտոսում 2011-2013թթ. ներքադաքական զարգացումները՝ կարելի է արձանագրել, որ երկրում ազգայնական գաղափարների ճգնաժամը ստեղծեց ազատ, այլընտրանքային ընտրություն կատարելու բացառիկ հնարավորություն՝ հոգուտ իսլամիստական շարժումների: Չափազանց հետաքրքրական է այն հանգամանքը, որ չնայած հակամուրաբաքյան ցույցերի առաջատարն ազատական-ժողովրդավարական ուժերն էին, այդուամենայնիվ «եգիպտական փողոցը», և մասնավորապես գյուղաբնակ զանգվածը, նախընտրեց իշխանության լծակների մոտ տեսնել իսլամականներին՝ ի դեմս «Մուսուլման եղբայրների», որը հաղթանակ տարավ թե՛ խորհրդարանական, և թե՛ դրանց հաջորդած նախագահական ընտրություններում:

Արդարացի լինելու համար պետք է փաստել, որ իսլամականների հաղթանակին մեծապես նպաստեց ընդհանուր բնակչության գյուղաբնակ ընտրազանգվածի թվաքանակի գերակայությունը՝ ի հակակշիռ եգիպտական հասարակության սակավաթիվ կրթված հատվածի: Վերջինս հստակ գիտակցում էր, որ ընտրությունների արդյունքում իշխանության եկած իսլամիստական ուժերը տանելու էին պետական համակարգի իսլամականացմանը, ինչն, ըստ էության, կհանգեցներ Եգիպտոսում «արաբական գարնան» հիմնական հաղթանակների կորստին, որոնք ձեռք էին բերվել եգիպտական հասարակության առավել կրթված և ազատական գաղափարներով տոգորված հատվածի կողմից:

Խորհրդարանական և նրանց հաջորդած նախագահական ընտրությունները Եգիպտոսում ի ցույց դրեցին այն իրողությունը, որ երկրում առկա են իրարամերժ երկու հիմնական բևեռներ՝ ազգայնական գաղափարներով առաջնորդվող զինվորականները և աստվածապետություն կառուցելու ջատագովները՝ իսլամականները: Լիբերալ-ժողովրդավարական հայացքներ ունեցող ուժերը, թեպետև կանգնած էին եգիպտական հեղափոխության ակունքներում, այդուամենայնիվ, հետ-

³¹⁶Abdel Fatah al-Sisi won 96,1% of vote in Egypt presidential election, say officials, 03.06.2014, The Guardian, <https://www.theguardian.com/world/2014/jun/03/abdel-fatah-al-sisi-presidential-election-vote-egypt>.

հեղափոխական երկու հիմնական իրադարձություններում՝ խորհրդարանական և նախագահական ընտրություններում, պարտվեցին:

Փաստորեն, «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը 20-րդ դարի սկզբից ծավալած իր ընդդիմադիր գործունեությամբ և աշխարհընկալմամբ կարողացավ զբաղեցնել պետության մեջ առկա գաղափարական վակուումը, սակայն չկարողացավ արդարացնել հասարակության որոշակիորեն լայն շրջանակների հույսերը:

Այսպիսով՝ «արաբական գարնան» արդյունքում սկսվեց աշխարհիկ բռնապետական վարչակարգի փոխարինումը կրոնաքաղաքական բռնապետական կարգերով: 2012 թ. քաղաքագիտական մանրադիտակը հստակ ցույց էր տալիս, որ «Մուսուլման եղբայրների» հաղթանակը և նրանց կողմից օրենսդիր և գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն սահմանելը մոտ ապագայում կարող էր հանգեցնել Եգիպտոսի քաղաքական համակարգի իսլամականացմանը, ինչը չէր կարող հանդուրժել աշխարհիկության կողմնակից զինվորական վերնախավը: Արդեն այսօր այլևս իրականություն է Եգիպտոսում ազգայնական զինվորականների՝ իշխանության դեկի մոտ գտնվելու հանգամանքը:

Եգիպտական հասարակությունը մրցակցային ժողովրդավարության պայմաններում գիտակցական ընտրություն կատարեց, որը բյուրեղացրեց վերջինիս կողմնորոշումը դեպի ավանդական դավանական արժեքների պահպանումը՝ աշխարհիկ պետություն ունենալու փոխարեն: Անտարակույս է, որ իշխանության իսլամականացումը նշանակում էր հրաժարում հեղափոխության ձեռքբերումներից, որին, ի դեպ, մասնակցեց եգիպտական հասարակության առավել կրթված և ազատական հատվածը:

Իսլամիստական հավաքական ուժերը՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գլխավորությամբ, տասնամյակներ շարունակվող պայքարի ընթացքում ստացան ընդամենը մեկ օրինական հնարավորություն մասնակցել երկրի իշխանության ձևավորման գործընթացին և կարողացան հաղթանակ ամրագրել: Իսլամիստներին հաջողվեց օգտագործել գյուղական բնակավայրերի ընտրաձայները, որոնք տոկոսային տեսակարար կշռի իմաստով ավելի մեծաքանակ էին: Եգիպտացիները քվեարկեցին թվաքանակ արդիականացման օգտին, այսինքն՝ հանուն քաղաքական նոր էլիտայի, որը կապված չէր նախկին վարչակարգի հետ: Սա էր պատճառը, որ նախապատվությունը չնչին տար-

բերությամբ տրվեց ոչ թե ավելի հայտնի Անմաղ Շաֆիքին, այլ Մուհամմեդ Մուրսիին:

Չնայած այն հանգամանքին, որ 2012 թ. նախագահական ընտրությունները Եգիպտոսում աննախադեպ էին իրենց թափանցիկության և արդարության իմաստով՝ այդուամենայնիվ իսլամիստների իշխանության գալը ամենևին երաշխիք չէր երկրում ժողովրդավարական սկզբունքների հաստատման և քաղաքացիական հասարակատյան կառուցման հարցում: Ամեն պարագայում, նախագահական ընտրությունների արդյունքները գոհացրեցին ԱՄՆ-ին: Վաշինգտոնը քաջ գիտակցում էր, որ իսլամիստական խաղաղույթը նաև Եգիպտոսում կրեռի սպասված նպատակի: Այս պատճառով ԱՄՆ-ը պնդեց, որ նախագահական ընտրությունների արդյունքները շուտափույթ հրապարակվեն: Նշենք, որ իշխանության մոտ գտնվող եգիպտական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն անցել է քաղաքական-գաղափարախոսական արդիականացման երկար ճանապարհ և ունեցել է սալաֆիական շարժումներից և գաղափարախոսություններից տարանջատվելու միտում՝ ներկայանալով որպես չափավոր իսլամամետ ուղղություն, որն առաջ էր քաշում Եգիպտոսում թուրքական «Արդարություն և զարգացում» կուսակցության առաջ քաշած մոդելի ներդրման հնարավորությունը: Երկրում նկատվում էր գաղափարական նոր միտում, ըստ որի՝ ավտորիտարիզմի ուժը բանակում չէ, այլ քաղաքացիական հասարակության շրջանում:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը այդ շրջանում հակված էր աջակցել Մերձավոր Արևելքում չափավոր իսլամիզմի բազային հենքի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ ի հակակշիռ սալաֆիական և առավել արմատական ուղղությունների զարգացմանը:

2011 թթ. արաբական աշխարհում սկիզբ առած ըմբոստություններն ու ընդվզումները ստացան «արաբական գարուն» անվանումը: Պատմագիտական առումով՝ այն արաբական աշխարհի հերթական մեծ ցնցումն էր: Հեղափոխական ալիքը սկիզբ առավ Թունիսից և «դոմինոյի էֆեկտով» տարածում գտավ գրեթե ամբողջ արաբական աշխարհում՝ թե՛ Մաշրիկում, և թե՛ Մադրիբում: «Արաբական գարնան» դեպքերը նպաստեցին տարածաշրջանում դավանական, էթնիկ, ցեղային, ինչպես նաև՝ զինվորական և քաղաքական տարբեր հանրությունների միջև լարվածության խորացմանը:

Արաբական մի շարք երկրներում, որոնք դարձան մեր հետազոտության առարկան, ինչպես, օրինակ՝ Թունիսում, Եգիպտոսում, Եմենում և Լիբիայում, ըմբոստություններն ու հուզումները հանգեցրեցին իշխանափոխության: Արաբական երկարամյա առաջորդների Բեն Ալիի, Հոսնի Մուբարաքի, Մուամմար Կադաֆիի և Ալի Աբդալլահ Սալիհի իշխանափոխությանը մեծապես նպաստեցին թե՛ ներքին և թե՛ արտաքին գործոնները:

Մինչ օրս գիտական շրջանակներում կան տարբեր կարծիքներ «արաբական գարնան» սկզբնավորման վարկածների հետ կապված: Ըստ առանձին տեսակետների՝ «արաբական գարնան» դեպքերը նախօրոք ծրագրված էին և ներդրվեցին արտաքին դերակատարների կողմից³¹⁷:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ համաարաբական ըմբոստությունները սկիզբ առան ինքնաբերական և կապված էին արաբական երկրներում ձևավորված խորքային խնդիրների հետ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն: Մասնավորապես, ավտորիտար վարչակարգերի առկայությունն ու վերարտադրությունը, սոցիալական անարդարությունը, ոչ արդար ընտրությունները, կոռուպցիան, կաշառա-

